

ՅՈՒՆՈՒԱՐ


ՓԵՏՐՈՒԱՐ

ՄԱՐՏ

ԹԻՒ 1 - 2 - 3

1996

ՅՈՒՆՈՒԱՐ



ԱԼԻՆՈՒ

ԱՄԱՍԱԳԻՐ
ԿՐՈՆԱԿՄ - ԳՐԱԿՄ - ԲԱԼԱԽԻՐԱԿՄ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐքութեան

Հ. ՏԱՐԻ - ՆՈՐ ՇՐՋԱՆ

1996	ՅՈՒՆՈՒԱՐ - ՓԵՎՐՈՒԱՐ - ՄԱՐՏ	Թիւ 1 - 2 - 3
1996	January - February - March	No. 1 - 2 - 3

S I O N

VOL. 70

A MONTHLY OF RELIGION LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor : His Beatitude The Armenian Patriarch Of Jerusalem



St. James Press, Jerusalem

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ
ԿԱՐՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ



PATRIARCHE SUPREME
CATHOLICOS DE TOUS LES ARMENIENS

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱՐՈՂԻԿՈՍԻ

Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ս. ՄՇՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

ԲԵԹՂԵՀԵՄԻ ԱՍՏՂԻՆ ԼՈՅՆԸ

Ս. ԷՇՄԻԱԾՆԻ ՊՐԻՍՄԱԿԵՆ...

«Տեսաբ զաստղ նորա յարկելս
Եւ եկամ երկիրպագանել նմա»
(ՄԱՏԹ. Բ. 2)

Որպէս Հայաստանեայց Եկեղեցւոյ հոգևորական սպասաւոր՝ անցնող քառասուն շորուարինեան ընթացքին, ամէն տալի, մեր Տիրոջ և Փրկչին՝ Յիսուսի Քրիստոսի Մննդեան տօնին առրիւ անընդմէջ շարունակականութեամբ խօսք եմ արտասանած կամ գիրով եմ արտայայտուած Քրիստոսի աստուածայայտնութեան հրաշապատում և այնքան հոգեգրաւ դրուագի իմաստին և մեր կեանմի մէջ անոր ներգործութեան մասին:

Այս տարի, 1996-ին, տարբեր երանգ ունին իմ խօսքին տուն տուող ներքին և արտաքին ազդակները: Ս. Մննդեան տօնին այժմ այս խօսքը կ'ուղղեմ ձեզի մեր ազգի «Հայկեան և Լուսաւորչեան Բերդեհէմ»-էն, բոլորիս հաւատին ծննդավայր Ս. Եկեղեցւոյ հայաշունչ մայրամուրէն՝ Ս. Էջմիածնէն, ուր իշաւ Խնքը՝ Յիսուս, Ս. Գրիգորի լուսահեղիղ տեսիլքով, և ոսկի ուռնակով բաղինց «զրանձրութիւն լայնատարած գետնոյն» ստորերկրեայ սանդարամետին, և զայն փոխակերպեց նորատունկ և դրախտարոյր այգիի: Աւետարանի ոռոգմամբ և հոգևոր պատղաբերութեամբ եկեղեցիի, այսինքն՝ Աստուծոյ և մարդուն հանդիպման սրբազործ հոգեվայրի:

Որպէս Կարողիկոս Ամենայն Հայոց՝ Ս. Մննդեան տօնին առրիւ երբ այս առաջին խօսք հոգևոր սիրոյ և հայրախնամ հոգածութեան զգացումներով կ'ուղղեմ ձեզի՝ հայ ժողովուրդի բոլոր զաւակներուդ, անխտիր, ի Մայր Հայաստան և ի ծագս աշխարիի, իմ խնիերուս իրեւ մեկնակետ կ'ընտրեմ Մատրէսուի Աւետարանէն քաղուած սա քառերը.

«Տեսանք անոր աստղը արևելքի մէջ,

Եւ եկանք երկրպագելու անոր»: (Բ. 2)

Ըստ աւետարանական պատումին՝ Արևելքէն եկող երեք մոգերու կողմէ: արտասանուած խօսքն է, որ Քրիստոսի Աստուածայայտնութեան այս տօնին բոլոր Քրիստոնեաներու շրբունքներուն վրայ կը վերարտասանուի և ականջներուն մէջ կը վերարձագանեն:

«Տեսնել աստղը»:

Կը նշանակէ նախ աչքերը բաց ու վճիտ ունենալ: Տեսնուածին լոյսը չի բաւեր տեսնելու համար: Հարկ է աչքին հանդիպումը լոյսին՝ որպէսզի լոյսը ըլլայ լոյս մեզի՝ համար: Ս. ՄԵՇԵԲԱՆ տօնը, հետևարար, սփանչելի առիթ մըն է որպէսզի սրբենք մեր աչքերը, մաքրենք մեր սրտերը, պայծառացնենք մեր միտքերը, թիւրեղացնենք մեր հոգիները զգայուն և ընկալու դառնալու համար "Աշխարհի Լոյս"ին՝ երկինքէն յաւերժօրէն նառագայրող և մեր կեաներուն մէջ լոյս ու երջանկութիւն ցանող "Անոր աստղին":

Աստուածայայտնութեան տօն է այսօր: Այո՞ւ, Աստուած վերստին կը յայտնուի, կը բացուի մեզի, իր մարդեղութեան մարդասէր արարժին մէջէն: Բայց ի՞նչ կ'արժէ իր բացուիլը եթէ մենք չբացուինք իրեն: Իրեն բացուելու համար՝ հարկ է ներքին հոգեկան մղումով ձգուի իրեն, զգալ զինքը մեր մէջ, դառնալ հաղորդ իր սիրոյն մեր ինքնութեան մէջ իր պատկերին վերակենդանացումովը: Իր յայտնութիւնը պէտք է դառնայ մեզ համար մեր ինքնութեան հարազատութեան, աստուածանմանութեան վերյայտնումը մեր զիտակցութեան և կեանքին ու գործին մէջ:

«Երկիր պագանել նմա...»

Կը նշանակէ խոնարհիլ իր առջև, իրաժարիլ մեր ինքնարաւութեան, ինքնապաշտութեան փորձութենէն, ձերքազատուիլ մեղքի կապանքներէն, մէկ խօսքով՝ ըստ Պողոս Առաքեալի՝ մերկանալ մեր իսկ մէջ հնացեալ մարդէն: Առանց այս նախապայմանին կարելի չէ ընդառաջել Անոր, զԱյն նանչնալ որպէս Արարիչ և Խնամող և տեղ տալ Անոր խօսին և սիրոյն մեր կեանքի տարածներուն մէջ:

Երկիր պագանելը խորիրդանշական այն արարքն է, որ խոնարհութեան մէջ կը մեծացնէ մարդ էակը: Երբեք պէտք չէ մոռնալ որ առաջին սայրառումը մարդուն՝ ինքնամեծութեան, ամբարտաւանութեան փորձութենէն եկաւ, և՝ միշտ կուգայ: Կարելի չէ չանդրադառնալ որ իրք մարդ էակ՝ մեր մէջ ունինք չարին հակուելու, շեղումի ենթարկուելու, խոտորելու կարողականութիւնը, մեր ազատ կամք ունենալու յատկութիւնը միշտ ի բարին չգործածելու փորձութիւնը: Ըստւած է որ սայրաքիլը, մեղանչելը մարդկային է. բայց անմարդկային է սայրաքումի մէջ մնալը, մեղքին գերի դառնալը: Աւելի մարդկային է սայրաքումէն վերականգնիլը, մեղքին յաղթելը և ոչ թէ անոր զոհ դառնալը:

Աստուածայայտնութեան տօնը սփանչելի առիթ մըն է որ քրիստոնէական եկեղեցին կ'ընծայէ իր հաւատացեալներուն մանկանալու, պարզանալու, խոնարհելու խոնարհուող Աստուծոյ մարդեղութեան դրուագին վերապրումովը մեր կեանքին մէջ:

* * *

Սիրելի՛՛,

Արևելի մոգերը բացին իրենց միտքի և հոգիի աչքերը և տեսան երկնային աստղը, բալեցին անոր լոյսին ուղղութեամբը, գտան լոյսին սկզբնաղրիւրը՝ Թիսուսը Բերդեհէմի մսութին մէջ և մերկանալով իրենց արքայավայել մեծափառութեան հանգամանքներէն, մեծութիւնը ու քաջութիւնը ունեցան երկրպագելու Անոր:

Մենք որպէս հայ քրիստոնեաներ, Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակներ,

հրաւիրուած ենք երթալու դէպի Բերդեհեմի մսուրը: Այդ մսուրը վերստեղծուած է մեր հոգիներուն մէջ այն օրէն ասդին երբ մեր ազգն ու պետութիւնը 301 բուականին քրիստոնէաւրիւնը ընդունեց որպէս մեր ազգին անփական կրօնը: Մեր Հայաստան աշխարհը Վաղարշապատ անունով նանցուած վայրին մէջ դարձաւ Հայոց Բերդեհեմը Էջմիածին անունով: Այստեղ էր ուր մեր Հայոց կրուսահեղեղ տեսիլքին մէջ տեսաւ գՔրիստոս որ իշաւ ի Հայաստան, որ այսպէս, այդ իշումովն իսկ կերպարանափոխուեցաւ և դարձաւ Բերդեհեմը հայ ժողովուրդի հաւատքին: Ս. էջմիածնով, ամէն մէկ հայու հոգին դարձաւ մսուր ծննդեան Քրիստոսի ի Հայաստան աշխարհի և վասն համայնութեանն ազգիս հայոց:

Նայէ՛ հոգիիդ մէջ, ո՞վ հայ մարդ, ո՞ւր ալ գտնուիս, ի՞նչ երկինքի տակ ալ որ ապրիս, ի՞նչ ընկերային, մշակութային պայմաններով ալ յատկանշուած ըլլայ երկրաւոր կեանքդ:

Նայէ՛ հոգիիդ մէջ. այնտեղ' է Ս. էջմիածինը, զոր կը նանշնաս որպէս աւազան մկրտութեան հայկեան ազգիդ և զոր կը դաւանիս որպէս Մայր Արոռ:

Նայէ՛ հոգիիդ մէջ. այնտեղ պիտի գտնես Բերդեհեմի աստղը որ կը նառագայրէ, հայոց դարաւոր աւանդութիւնը իր հոգիին մէջ վերապրած բանաստեղծին մտատեսութեամբ՝ Արագածի գագարէն անպարան կախուած Լուսաւորչի կանքեղէն, Արարատէն անոր վրայ հսկող Աստուծոյ նայուածքին ներքև....:

Նայէ՛ հոգիիդ մէջ. այնտեղ աշխիդ պիտի հանդիպին քրիստոնէական հաւատքի, Ս. Աւետարանի ճշմարտութիւնները Բերդեհեմի մսուրին մէջ ծնած թիսուսով մարմնացած և Հայաստանի հազարաւոր եկեղեցիներու անքարքան և յանախ աւերակումներէն վիրաւոր քարերէն դօղանչող անձայն ու անքարքան:

Այսօր քրիստոնէարաբաւ Հայաստանը վերագտած է իր քրիստոսադրոշմ պատկերը: Այդ պատկերը կարիքն ունի վերապայծառանալու, իր վրայէն մոռացութեան և բռնութեան փոշին բօրափելով: Այդ վերածնդեան պատկերը քեզմո՞վ նոր լոյս և բիւրեղուրդին պէտք է զգենու, ուր կենդանի՝ հաւատքով, ըլլաս Հայաստանի մէջ շնչող հայրենարնակ մարդ, ըլլաս արտասահմանի մէջ ապրող հայաշունչ մարդ:

Տե՛ս. երկիրդ չէ այն ինչ որ էր դեռ երեկ: Քու ժողովուրդի սեփական կամքին զօրութեամբն է որ կ'ընթանայ Մայր Հայաստանիդ կեանքին կշռոյթը վերանկախացեալ հայրենիքին նոր Հանրապետութեան ղեկավարութեամբը: Ազատութեան շունչը վերստին կը տարածուի և կը վերատարրանայ Հայրենիքիդ չորս կողմերը և ժողովուրդիդ կեանքի շաղուածքին մէջ: Ազգային-կրօնական աւանդոյթները կը վերզգենուն իրենց հարազատութեան իսկատիպ արժանավայել նկարագիրը: Ճիշտ է, որ տնտեսական, ընկերային, կենցաղային պայմանները հեռու են գոհացուցիչ ըլլալէ, մանաւանդ երբ անոնք դիտուին յարաբերաբար խաղաղ և բնականոն կեանքի պայմաններ վայելած և վայելող երկիրներու և ժողովուրդներու կեանքին: Հայաստանի հիւսիսային-արևմտեան շրջանի (Լնամինականի, Սպիտակի, Ստեփանաւանի, Վանաձորի և երկրաշրջաններ հարուածուած այլ վայրերու մէջ), «Աղէտի Գոտի» կոչուած տարածաշրջանի վերականգնումի կարիքն ու

պարտքը ծանր կը կշռեն մեր բոլորի մտահոգութիւններու և պարտականութիւններու նժարին մէջ: Արցախի մեր ժողովուրդի ապահովութեան, զօրացման, զարգացման հրամայականը կը մնայ իր ուժգնութեանը և անմիջականութեանը մէջ: Տակաւին բազմարին այլ նեղութիւններ՝ մեր հայրենիքին պարտադրուած շրջապատումի որպէս հետևանք՝ լուրջ պատախանատուութիւններու առջև կը դնեն մեզ բոլորս, անխտիր, ուր ալ ըլլանք:

Այս բոլորին դիմաց՝ Ս. ՄԵԾԵԴԵԱՆ տօնը մեզ՝ հայերուս համար ունի իւրայատուկ ՀՀ անակութիւն: Հոգեւոր և ազգային վերածննդեան հրաւեր է ան, որ մեզ կը մղէ հրաժարելու շուայլ և հանոյապաշտ կեանքի փորձութիւններէն և դառնալու աւելի գիտակից, զգայուն և նախանձախնդիր՝ մեր եկեղեցական, ազգային, կրթական, մշակութային, քարեսիրական պարտաւորութիւններուն, ընդհանրական, համազգային չափանիշներով. Ըլլայ Մայր Հայրենիքին, ըլլայ արտասահմանի մեր գաղութներուն մէջ:

Ս. ՄԵԾԵԴԵԱՆ տօնին պատգամը պարզ է. - Յիսուս, Մարմնացեալ Փրկիչը, Խնդգինքը դատարկացուց իր աստուածային փառքէն, խոնարհեցուց իր անձը և զգեցաւ «զկերպարան ծառուայի, ի նմանութիւն մարդկան լ զետէ» (Տե՛ս ՓելիՊ. Բ. 6-9): Խնդգիս մոգերը Լոյսը տեսան մանկացեալ Յիսուսի անձին մէջ և երկրպագեցին անոր, իրենց ազնուագոյն ընծաները՝ ոսկի, կնդրուկ և զմուռս՝ մատուցին Անոր, մենք ալ գիտնանք այսօր խոնարիխ մեր անձնական, անհատական փառասիրութիւններէն, գեր-բաւութեան հետ առընչուած առաւելութիւններէն, և մեր ընտրելագոյն ընծաները մատուցենք Աստուծոյ, մեր եկեղեցին, մեր հայրենիքին և մեր ժողովուրդին:

Քիստոս իր մարդեղութեան արարենք ողջ մարդկութիւնը իր մէջ բարձրացուց և միացուց: Իր ՄԵԾԵԴԵԱՆ տօնը նաև իրաւեր մըն է որ իր Բերդեհեմեան մսուրին մէջ մենք միանանք իրարու և մեր «Հայկեան Բերդեհեմի» մսուրին մէջէն վերագտնենք մեր ազգային միութիւնը հոգեւոր հաղորդութեամբը Լուսաւորչեան հաւատենք հայացած քրիստոնեական հաւատին, յոյսին և սիրոյն մէջ:

Ահա այս զգացումներով և խոհերով կ'ողջունենք ձեզ բոլորդ սիրեցեալ զաւակունք Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ: Ս. Էջմիածնի մսուրին մէջ ներամփոփուած՝ կ'աղօրենք որ առ մեզ խոնարհեալ և ընդ մեզ եղող Աստուածուրդին բարձրացնէ և աշխուժացնէ ձեզ գիտակցութեան պատասխանատուութեան և յանձնառութեան գերազոյն և երշանկարեր առաքինութիւններով. ի զօրացումն Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ, իր բոլոր նուրբաւութական Աքոռներով, թեմերով և ազգային կազմակերպական կեանքի բոլոր տւ սակի եկեղեցանուէր և հայրենաշէն կառոյցներով և ստեղծագործական վկայութիւններով:

Թող մարդացեալ Փրկիչը իր Հայաստան մսուրը՝ մեր հայրենիքն ու պետութիւնը պահէ անվտանգ, ամրող և անխռով ի կամս ողորմութեան իւրոյ և շնորհօն աննառելի մարդեղութեանն իւրոյ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅԻՆ ՀԱՅՈՑ

Սիրեցեալ ժողովուրդ Հայոց, որ յԵրուսաղէմ, ի
Պաղեստին եւ ի Յորդանան, Որ ի Հայաստան,
որ ի յԱրցախ, եւ ի Սփիւռս Աշխարհի.

Քրիստոսի Սուրբ Ծննդեան յիշատակով,
դարձեալ հաւաքուած ենք Բեթղեհէմի այն Սուրբ
Այրին մէջ, ուր ծնաւ մարդացեալ Փրկիչը
աշխարհի:

Դարերով, Սրբոց Յակորեանց Միաբանութիւնը,
իր հաւատաւոր զաւակներով եւ հայ
ուխտաւորներով, երկրպագութեան եկած է
Քրիստոնէական այս սրբավայրին, իր հայրերու
հաւատքով եւ հայկական աւանդութեամբ, իր
շնորհընկալ հոգիին երգը միացնելու հրեշտակներու
աւետիսին, « Զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ », որ
պիտի աւետարանէ՝ « Փառք ի Բարձունս Աստուծոյ,
եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն »:

Պատմութեան մէջ եւ անցեալ տասնամեակներու
շրջանին, հոգեւոր ցնծութեան երգերուն խառնուած
են խժժալուր ձայները արհաւիրքներուն, երկիւղալի
սպառնալիքները կործանարար հրահգութեան,
իրերամերժ ատելութեան, ընկերային եւ տնտեսական
տագնապանքներու: Եւ ամէն սերունդ,
փառատրութեան իր երգերուն եւ աղօքքներուն հետ
միասին, Աստուծոյ ողորմութեան եւ Քրիստոսի
միջնորդութեան դիմեր է, խաղաղութեան կարօտ
հոգիով, «զի լոեսցին պատերազմունք... եւ տնկեսցի
սէր եւ արդարութիւն ի յերկրի»:

1995 տարուան աւարտին, Սուրբ Երկրի
երկնակամարին մոայլ եւ մթագնամած ամպերը
փարատած են կարծես:

Պաղեստինեան ինքնավարութեան
հաստատումով, մահասփիւռ վրիժառութեանց եւ
կործանարար քանդումներու թափը կասեցաւ: Եւ
ամրող աշխարհ ակնկառոյց կը սպասէ որ
Յորդանանի, Պաղեստինի եւ Իսրայէլի իրար

հասկացողութեան, գործակցութեան, եւ համերաշխ գոյակցութեան օրինակով, Միջին Արեւելքի բոլոր երկիրներու ժողովուրդները ապրին խաղաղութեան բարիքները վայելելով:

Ինչպէս չը յիշել որ խաղաղութեան իշխանին ծնունդը խոռված էր հոգին Հերովդէս թագաւորին, երբ, Արեւելքին Երուսաղէմ հասած երեք մոգերէն, իմացաւ թէ, խաղաղութեան նոր թագաւոր մըն է ծնած, որուն երկրպագելու եկած են իմաստունները:

Եւ իր կասկածամտութեան, եւ մենատիրութեան մոլուցքէն բռնուած, հրամայեց կոտորել, Բեթղեհէմի մէջ երկու տարեկանէն վար եղող մանուկները:

Մեր օրերուն եւս, խաղաղութեան Աստուածը, թէ՛ Քրիստոնեաներուն, թէ՛ Մահմետականներուն եւ թէ՛ Հրեաներուն, որպէս զի կարողանար իշնել սրտերուն մէջ Արրահամի զաւակներուն, եւ լուսաւորել անոնց միտքն ու խղճմտանքը, պիտի սպասէր որ մեր օրերու իմաստունները տեսնէին աստղը խաղաղութեան, եւ մարդկութեան խնայէին այն բռլոր արինահեղութիւնները, ատելութիւններն ու վայրագութիւնները, որոնք յանուն մարդկային իրաւունքի եւ ազատութեան այնքան զոհեր խլեցին:

1995 տարին յուսադրիչ դարձակէտ մըն է ներկայ ժամանակներու պատմութեան մէջ:

Խոռվութիւն սերմանող չար ուժեր պիտի շարունակեն իրենց կործանարար ծրագիրները գործադրել, ընդդէմ խաղաղութեան, համերաշխ գոյակցութեան եւ ապահովութեան հետամուտ դեկավարներու ծրագրումներուն: Բայց Բեթղեհէմի պայծառ աստղը ներկայ է միշտ: Ով որ իր աչքը դէպի երկինք բարձրացնէ՝ մաքուր խղճմտանքով, ամենակալ Աստուծոյ հանդէպ երախտագիտութեամբ, զայն պիտի տեսնէ; Եւ պիտի լսէ ձայնը խաղաղութեան իշխանին, որ կը պատգամէ. « Երանի խաղաղաբարաց, որովհետեւ անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին »:

Աստուծոյ օրինութեան պարգեւը կը նկատենք, տարիներով իրարու թշնամի եւ հակամարտ ժողովուրդներու այն բոլոր Օրէնսդիր Մարմինները եւ Նեկավարները (մասնաւորաբար Յորդանանի Վսեմաշունք Հիւսէյն Թագաւորը, նորահաստատ Պաղեստինեան Խշոնութեան Նեկավար Եասըր Արաֆաթը, Խրայէլի նահատակ վարչապետ Իցհակ Ռապինը, եւ այժմ իր յաջորդը՝ Շիմոն Բերէզը), որոնք, մարգարէին նախագուշակութեան համաձայն, մահաբեր զէնքերը որոշեցին վերածել արօրադիր խոփերու եւ մանգաղներու, որպէս զի իրենց զաւակները այլեւս չը մտածեն պատերազմներ ծրագրելու մասին :

Կ'աղօթենք որ մարդացեալ Աստուած ինք առաջնորդէ ժողովուրդներու ղեկավարներուն մտածումներն ու զգացումները, ծրագրումներն ու գործերը : Եւ մարդկութիւնը կարենայ գտնել իր նամրան դէպի իր կորուսեալ դրախտը, իր հոգիին փրկութիւնը եւ երջանկութիւնը : Որովհետեւ « արքայութիւնը որ կը որոնէք՝ ձեր մէջն է, » ըսաւ Քրիստոս . Ան՝ որ յաւիտենական նշմարտութիւնն է, եւ նանապարհ, եւ կեանք : Որ միշտ կը փառաւորուի Հօր եւ Սուրբ Հոգույն հետ, յաւիտեանս յաւիտենից :

Թ.Ա.Մ.

Armenian Christmas in Bethlehem
January 19, 1996

Dear children of the Armenian Apostolic Church, all over the world, and men and women of good will everywhere.,

The joyous occasion we are celebrating in this eternal city, this year, will go down in the annals of the Holy Land as one of the most auspicious and momentous.

Never before in the modern history of this region have expectations risen so high, or the sense of euphoria, now pervading this land, been based on more solid ground.

As we kneel here, before the humble birthplace of the Saviour of Mankind, and relive the historic days and events that have made 1995 a milestone in our lives, we cannot escape the realization that we are actually living history..

Christmas at the end of 1995 has been like no other.

This has been a year filled with turmoil and heartache, danger and fear, tears and bloodshed, yet, at the same time, it has been a year that has seen the birth of a new promise.

For the first time, the people of this whole region are being ushered into an era of peace and fulfilment, that will more than make up, for so many lost past years. Here's a chance we have all been waiting for, to make peace.

But if we want to achieve everlasting peace, we must all join hands in working to ensure that this vibrant promise is realised, and that this golden opportunity is not lost.

We, as Armenians, guardians of an ancient and hallowed legacy, can also be direct beneficiaries of the fruit of peace. We must therefore join our brethren the Palestinian Arabs and Israeli Jews, in contributing to the peace and welfare of the land, to the best of our abilities, working towards the fulfilment of our destiny in the Holy Land.

Just as, two thousand years ago, a twinkling star led the three Wise Men to Bethlehem and kindled the hope of mankind with the promise of salvation, so also, on a smaller scale, have the latest political developments here, kindled for us the hope of a new peaceful era.

There is jubilation in Bethlehem. Our brethren Palestinians celebrate the return of this holy town into their control. And there is relief in Israel that a burden has been lifted from the shoulders of our brethren Israelis.

We congratulate them both on their courage, their determination and their foresight.

[It was these that have made it possible, for the first time in 28 years, for Christmas celebrations in Bethlehem to be graced with the presence of a Palestinian national leader, undeniable witness to the world of the changing of the guard and of the times.]

This however, has not been achieved without a struggle. Perhaps the price has been too high, but, the fruit bought with it, is sweet to the taste.

[We pray that the Palestinian flag that flutters over Manger Square will truly be the harbinger of a new era of peace, and love and understanding for the people of this troubled region which has suffered for so long, so unnecessarily.]

[We ask that both Palestinian and Israeli forget the pain and anguish of their past struggle, and join together in building new bridges of understanding and cooperation, for the mutual benefit of coming generations.]

Therefore, as we celebrate the birth of Christ, let us also celebrate the rebirth of hope for Israel and Palestine, for Jordan and all the countries in the region, and wherever there is disharmony and animosity.

And also for Armenia. We, proud children of the legendary giant Haig and the immortal hero David of Sassoon, have a lot to be thankful for. Despite our troubled and painful history, we continue to thrive, both in the Motherland and the Diaspora. Despite the vagaries of history which has seen countless other nations sink into oblivion, we have survived, our nation and our church intact, our spirit as undaunted as ever.

The past year has borne witness to a further regeneration of our faith and strengthening our national resolve.

[Armenians all over the world have reacted with jubilation over the election of a new Catholicos whose ties with another branch of our church ensures the intensifying of a dialogue that will, hopefully, result in the long hoped-for reunification of our universal church.]

And the political developments in the Motherland have testified to our people's determination to make nationhood succeed.

Christmas 1995 shall indeed remain unique. But as we take stock of developments on the worldly scale, we must not forget our spiritual needs. For, what does Christmas really mean to us, Christians? What is the true message of this extraordinary event that marks the birth of Jesus Christ, God's Only Begotten Son? And how do we, as Christians respond to that message?

In the simplest of terms, Christmas has always been a message of hope and salvation. We must never lose track of this, even though we are constantly

bombarded by more insistent commercial underpinnings, that are robbing it of its simplicity and integrity.

Our commitment must never falter. Even though, in the words of one of the Christian church's greatest mystics, our "spirit is often outraged by everything absurd," we must never lose the hope that "it could become again a virginal spirit in the clean, simple darkness of pure faith.

May the Lord, vouchsafe it ever so.

And may, the bells of our faith in Christ, ring harmoniously with the singing of the angels: "Glory to God in the highest heaven, and on earth peace, and good will toward men."

Amen

ԿՐՈՆԱԿԱՆ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ

Հաս Ղուկասու

Գլուխ Առաջին

1- Չատեր ձեռնարկեցին գրել այն դէպքերուն պատմութիւնը որոնք պատահեցան մեր մօտ:

2- Հաս աւանդութիւններուն սկիզբէն ականատեսներուն եւ Աւետարանի սպասարուներուն:

Ինչո՞ւ շատեր: Որովհետեւ Ղուկասէն ետք Ցովհաննէս եւս գրեց ինչպէս պատմութիւնը ցոյց կուտայ: Իսկ Մատթէոսի եւ Մարկոսի համար որոնք նախորդեցին Ղուկասի, չկրնար ըստիլ շատեր: Ուրեմն որոնք են շատերը որոնք Աւետարանիչ կը համարուին: Յայտնի է թէ շատեր Աւետարաններ գրեցին, Ղուկաս անոնցմէ մէկուն կ'ակնարկէ Գործը Առաքելոցին մէջ: «Երբ որ Պաղեստինեան Կեսարիա հասան, իշեվանեցան Փիլիպոս աւետարանի տան մէջ» Գործը Առաք. **ԶՕ.8:** Ուրեմն այլ Աւետարանիչներ կային: Ու՞ր են բոլոր անոնք: Յայտնի է թէ գրեցին մարդկային մտօք եւ ոչ թէ Ս. Հոգույն շնորհներու ազդմամբ, ուստի եկեղեցիները չընդունեցին այդ գրուածքները: Մարդկային իմացականութիւնը որքան ալ որ զօրաւոր ըլլայ, երբ Ս.Հոգույն շնորհներով չէ զարդարուած, չկրնար հաւասարիլ: Որովհետեւ չորս Աւետարանիչները Ս.Հոգույն ազդմամբ գրեցին, այդ պատճառաւ զուգապատի են: Անընդունելիները անարժանութեան համար չեն, այլ Ս.Հոգին շնորհներ գիտէ բաժնել եւ որոշել ինչպէս որ կամի: Հաս այնմ շատ մը առաքեալներ Ս.Հոգուվ զօրացած էին, բայց Պողոս միայն մղուած էր բազմաթիւ նամակներ գրել: Ուրիշներ ալ հակառակութեան կամ նախանձի ոգիով գրեցին, ճշմարտութեան ապականիշներ եղան, ստայօդ եւ անիմաստ խօսքերով: Իսկ չորսերը Ս. Հոգուվ զօրացած գրեցին եւ աւանդեցին մեզի այն բոլորի մասին որոնց սկիզբէն ականատես եղան եւ սպասարուեցին Ս. Աւետարանին: Ասոնցմէ ստոյգ ճշմարտութիւնը ունինք: Ուրեմն

3.- Փափաքեցայ, ես որ սկիզբէն բոլոր դէպքերուն ծանօթ էի, կարգաւ գրել բեզ, բազ Թէռփիլէ :

Յայտնի է թէ Պողոս չէ որ գրած է այս Աւետարանը: Իսկ եթէ Պողոս գրած է, ինչո՞ւ ուրեմն Ղուկասու կը կոչուի եւ ոչ Պողոսի: Եթէ Պողոս

պատմեց եւ Ղուկաս գրի առաւ, ինչու՝ Պօղոսի թուղթերը իրեն կը վերագրուին։ Բացի Գաղատացիներու ուղղուած նամակէն, միև բոլորը, Պօղոս պատմած է, ուրիշներ գրի առած են, որովհետեւ ամենէն վերջը կը յաւելու «տեսէք ինչպիսի գրով, իմ ձեռքովս գրեցի» 6:11։ Հոռվմէացոց ուղղուած նամակէն ալ ի յայտ կուգայ թէ, Պօղոս խօսեցաւ եւ ուրիշներ գրի առին, այս նամակին մէջ կը կարդանք, «Կ'ողջունեմ Ձեզ ես ինք Տէրտուղոս որ այս նամակը գրեցի Տիրոջմով»։ 16, 22։

Ուրեմն Ղուկաս Ս.Հոգտոյն զօրութեամբ գրած է իր Աւետարանը, վասնզի կ'ըսէ «ինչպէս աւանդեցին մեզ անոնք որոնք սկիզբէն ականատես եւ սպասարուներ եղան Աւետարանին։» Իսկ Պօղոս կը գրէ «մարդոցմէ չստացայ ունէ մէկէն չուսանեցայ այս մասին, այլ Յիսուսի Քրիստոսի Յայտնութեամբ» Գաղ.։ 1.12։ Այլ տեղ Ս.Հոգտոյն համար կ'ըսուի «այն որ Հայրը իմ անունովս պիտի դրկէ, նա պիտի սորվեցնէ եւ յիշեցնէ Ձեզ ամէն ինչ» Յովի. 14.26։ Զարմանալի չէ որովհետեւ «անոնք որ մկրտուեցան, տարբեր լեզուներ խօսեցան եւ մարգարեացան»։ Գործք Առաք. 19.6։

Ի՞նչ պէտք է հասկնանք «սկիզբէն բոլոր դէպքերուն ծանօթ էի» բացատրութեամբ։ Այսինքն ոչ թէ վերջին հաւատացողներէն մին, այլ անոնցմէ որոնք սկիզբէն հաւատացին քարոզութեան։ ով քաջ Թէոփիլէ։ Զօրավարը կը քաջալերէ իր գինուրները քաջամարտիկ լինելու, նմանապէս կը քաջալերէ Թէոփիլէն եւ անոր միջոցաւ բոլոր ընթերցողները որպէսզի յաջողութեամբ իմանան Աստուածային անքննին տնօրէնութեան խորթերը, Աստուծոյ որդույն մարդկային բնութիւն առնելու խոնարհութիւնը, անարատ մտածմամբ։ Յիսուս աշխարհ եկաւ, մարդկային բնութիւն զգեցաւ, մարդկութիւնը նախնի պատուին տարաւ եւ իր հետ վեր բարձրացուց. սքանչացեալ կը բացազանչէ ըստ առաքեալին. «ով խորք հարստութեան, իմաստութեան եւ գիտութեանն Աստուծոյ, զի անքննելի են անոր դատաստանները»։ Հոռվմ. 11.33։ Այս պատճառաւ կ'ըսէ Ո Թէոփիլէ։ Տեսա՞ր թէ ինչպէս իր անձը ունայնացուց, ծառայի կերպարանք առաւ, մահացման անարգանքին համբերեց եւ ամենէն վեր բարձրացաւ։

Տարակոյս մը եւս կը մնայ. Ղուկաս կը յաւելու «այն բոլորի մասին որ ըրաւ Յիսուս»։ Բայց Յովիննէս կը գրէ «աշխարհ ոչ էր բաւական տանիլ զգիրսն որ թէ գրեալն էին»։ Ինչպէս հաշտեցնենք այս երկութը։ Յայտնի է թէ Աւետարանիները իրենց գրածին վրայ աւելցուցին նաեւ թէ «ուրիշ շատ բաներ ալ խօսեցաւ անոնց Յիսուս»։ Հրաշքներէն ալ ոմանք պատմուած են, թէ Տիրոջմէ այլ հրաշքներ ալ գործուած են որ եթէ պատմուէին «աշխարհս չէր բաւական տանել թէ որ գրեալն էին»։ Իսկ ո՞վ էր այս Թէոփիլէն։ Որովհետեւ Թէոփիլէ Աստուածաւը կը թարգմանուի, ոմանք կարծեցին թէ հաւատացեալներուն բոլորին ուղղուած է։ Ինչքան որ մեզի ծանօթ է,

Ծանալոր կամ երեւելի անձնաւորութիւն էր այս Թէոփիլէն եւ հաւատքի մէջ նորընծայ մը:

4.- Որպէսզի ճանշաս ճշմարտութեան խօսքերը որոնց աշակերտեցար:

5.- Հրէաստանի Հերովդէս թագաւորին օրով:

Մատթէոս կարեւոր Ըկատեց, Տիրոջ ծննդեան ժամանակ Հերովդէսի թագաւորութիւնը լիշել. նաև Ղուկաս: Ոչ միայն ժամանակագրութիւնը ստուգելու, ինչպէս օրէնք է պատմագիրներուն, այլ որպէսզի մարգարէութիւնը ճշմարտուի, այն որ ըսուեցաւ հրէաստանի վերաբերմամբ. «Հրէաստանէ իշխան չպակսի, ոչ ալ իշխանութեան գաւազան անոր սերունդներէն, մինչեւ որ գայ այն որ ունի իշխանութիւնը»: ԾԱՆԴՈՒ 49.10: Ահա ուրեմն թագաւորութիւնը տրուեցաւ հեթանոսներէն մէկուն, Հերովդէսի: Երբ որ Երուսաղէմ պաշարուեցաւ Պարթեւներու եւ հայերու կողմէ եւ Հիւրկանոս քահանայապետ գերեվարուեցաւ եւ Փառալէոս ալ սպանուեցաւ եւ Երուսաղէմի առաջնորդ Ծանակուեցաւ Անտիգոնոս, Հերովդէս փախչելով հասաւ Հռովմ. այնտեղէն օժանդակութիւն գտնելով Պոմպէոս զօրավարին հետ Երուսաղէմ եկաւ: Ինչպէս յայտնի է, Հռովմէացոց միջոցաւ թագաւոր Ծանակուեցաւ Երուսաղէմի: Ազգութեամբ Ասկելոնացի էր եւ որդի Անթիպատրի, մեթիաններէն գերեվարուած մանուկներէն: Ուրեմն յայտնի է թէ մարգարէութիւնը կը ճշմարտուի առ այն թէ Հրէաստանէ իշխան պակսած էր, որովհետեւ եկաւ այն որուն իշխանութիւնը յափտենական էր:

5.- Արիայի քահանայական դասէն Զաքարիա անունով քահանայ մը կար:

Բարւոք եւ արդար է որ Աւետարանիչը Ծանակէ նաև քահանայական դասը, յայտնելու համար որ ասիկա բոնութեամբ քահանայութիւնը յափշտակողներէն չեր: Այլ Արիայի դասակարգէն եւ օրինաւոր, ըստ կարգին Ահարոնի ընդունեցան քահանայական պատիր:

5.- Որուն կինը Ահարոնի դուստրերէն էր. անունը Եղիսաբէթ:

Այս ալ ցոյց կուտայ թէ ըստ ամենայնի օրինականութիւնը յարգուած է, որովհետեւ ըստ օրինի քահանայապետին կինը պէտք էր քահանայական ցեղէ ըլլար: Քահանաները կրնային, բայց քահանայապետին արտօնուած չեր. այս պատճառաւ ալ կ'ըսէ «Ահարոնի դուստրերէն էր»: Անունը լիշելն ալ պիտանացու է. առանց անունի անորոշութիւն է. անուանմամբ անձը հաստատապէս կը ճշդուի:

6.- Երկուքն ալ Աստուծոյ առջեւ արդար էին ու Տիրոջ բոլոր պատիրաններուն եւ օրէնքներուն ճանապարհէն կ'ընթանային անարատ կերպով:

Առաքինի ըլլալով արդար էր, օրինաւորապէս ստանալով քահանայական պատի: Կնոց վերաբերմամբ, արդար ըլլալը վերին խնամարկութեամբ կ'իմացուի, ըստ Սողոմոնի որ կ'ըսէ «Տիրոջմով կինը իր ամուսնոյն կը յար-

մարի» Առակ 19.14: Որովհետեւ այսպիսի ծնողք պէտք էր ըլլար այս մարդն ու կինը, զարմանալի պիտի ըլլային ամենքին: Ամենատես աշքը կը տեսնէ արդարութիւնը: Թերեւս մարդոց առջեւ ծեւանալ դիւրին է, բայց ոչ առաջի Աստուծոյ. ըստ այնմ թէ «կ'արդարացնեք Ձեր անձերը մարդոց առջեւ, բայց Աստուած գիտէ Ձեր խորհուրդները»: Աստուած սրտերուն կը նայի եւ այս ամոլը արդար էր.ուրեմն կը յաւելու, Տիրոջ բոլոր պատուիրաններուն եւ օրէնքներուն ճանապարհէն կ, ընթանային անարատ կերպով: Ընթացք մը կրնայ բարի ըլլալ կամ չար: Հեղիի զաւակներուն համար ըստած էր թէ «չար էր ճանապարհ նոցա»: Թագա. 3. Զ1: Խոկ ասոնց համար թէ անարատ էին:

7.- Անոնք զաւակ չունեին որովհետեւ Եղիսաբէթ ամուլ էր եւ երկուքն ալ տարիքով յառաջացած էին:

Այս ամլութիւնը պատահմամբ չէր այլ Աստուծոյ մատակարարութեան գործ, որովհետեւ Կարապետին ծնունդը զարմանալի է եւ ոչ թէ բնութեան օրէնքով: Ըստ որում Աննայի համար գրուած է թէ «Տէրը անոր արգանդը փակեց». 1 թագա. 1.5, որպէսզի սքանչելապէս ծնի Սամուել մանուկը: Հոս ալ այսպէս նախ ամլացուց ապա հինացեալ եղան ծերութեամբ, ըստ նմանութեան Աբրահամի, աւետեաց գործ եւ ոչ թէ բնութեան:

8.- Մինչ Զաքարիա Աստուծոյ առջեւ իր քահանայական պաշտօնը կը կատարէր, իր կարգի օրերը հասած ըլլալով:

Հաւանաբար որոշ տօնի մը, կամ թերեւս ուրիշ քահանայապետ մը իր տեղը գիշեցաւ եւ Զաքարիա շմերժուեցաւ որպէսզի քահանայութեան սպասաւորութիւն ընէ: Ըստ օրինի:

9.- Իրեն վիճակուեցաւ մտնել Տիրոջ Տաճարը եւ խնկարկել:

Մովկէսի հաստատած ո՞ր տօներէն մէկն է արդեօք այս: Կը թուի թէ քաւութեան տօնն էր երբ պէտք էր ամբողջ ժողովուրդի փրկութեան համար զոհ մատուցանել եւ զոհերու արիւնէն տանիլ Եերս ի սրբութիւն եւ այնպէս խունկ մատուցանել եւ խոստովանիլ ժողովուրդին մեղքերը եւ Աստուծմէ անոնց քաւութիւնը խնդրել:

10.- Ժողովուրդի ամբողջ բազմութիւնը դուրսը աղօթքի կեցած էր, խնկարկութեան պահուն:

Դուրսն էին կ'ըսէ վասնզի ոչ ոք անոնցմէ կը համարձակէր Եերս մտնել: Կը թուի թէ այն ժամանակ թերեւս չէին արհամարիներ տաճարը որովհետեւ Զաքարեա օրինօք արդար քահանայ էր, կը խրատէր զանոնք: Բայց այս քահանայապետի վախճանումէն ետք, զայն վաճառքի տան վերածեցին: Յիսուս նախանձախնդրութեամբ զանոնք արտաքսեց. Մարկ. 11.16:

11.- Տիրոջ հրեշտակը երեւցաւ անոր խունկերու սեղանին աշ կողմը կանգնած:

Աստուած երբ Մովսէսին խօսեցաւ, ըսաւ, որ քարութեան սեղանը դրուի կտակարաններուն արկդին վրայ եւ երկու քերովքէներ հովանի, քարութեան վրայ եւ այնտեղէն պիտի խօսիմ քեզ նետ, երկու քերովքէներու մէջտեղէն:

Ելից Զ5.Զ0: Իսկ այստեղ հրեշտակը կ'երեւի խունկի սեղանին մօտ: Այսպէս կ'ընէ որովհետեւ այնտեղ քարութեան սեղան չկար. Քաղդեացիները Տաճարը աւերած էին, Երեմիան ամփոփեց զայն: Այնտեղէն դարձին թէեւ ուրիշ կարգ-կանոն նորոգեցին, սակայն քարութեան ուրիշ սեղան չըրին. որովհետեւ կտակարաններուն արկդին վրայ պէտք էր դրուէր: Ուր որ օրէնքի տախտակները չկային, ինն տապանակի պէտք չկար եւ ոչ ալ քարութեան սեղան, թէեւ դարձին ետք մարգարէներ կային: Որովհետեւ քարութեան սեղան չկար, հրեշտակը խնկոց սեղանին մօտ կեցաւ: Սեղանը ըլլալու պարագային իսկ, Աստուծոյ յատուկ էր այդ սեղանէն խօսիլ եւ ոչ թէ հրեշտակին:

12.- Երբ Զաքարիա տեսաւ, խոռվեցաւ եւ վախ եկաւ իր վրայ:

Այսպէս է անմարմիններուն բնութիւնը, սարսափով կը տագնապէցնեն երբ մէկու մը երեւին: Դանիէլ ալ երեսին վրայ իշնալով չէր կրնար ոտքի կանգնիլ: Դան.10.9: Վախցաւ. ոչ միայն այնտեղ առանձինն ըլլալուն, այլ այդ օրերուն այլեւս սպառած էին Աստուածախօսութիւնները եւ հրեշտակներու երեւումները:

13.- Տիրոջ հրեշտակը ըսաւ անոր. «մի վախնար Զաքարիա, որովհետեւ քու աղօթքդ լսելի եղաւ. քու կինդ՝ Եղիսաբէթ, որդի մը պիտի ծնի քեզ»:

Նախ երկիրը կը փարատէ հանդարտ խօսքերով: Նմանապէս Դանիէլին. մի երկնշիր կ'ըսէ Դանիէլին, ցանկալի մարդ: Դան 10.11: Այստեղ եւս կը փարատէ երկիրը որպէսզի ըսուելիքները լաւ իմանայ: Աղօթքդ լսելի եղան: Արդ՝ եթէ քարութեան տօնին, Աստուծոյ խնդրուածքներ մատուցանեց ժողովուրդի փրկութեան, հապա ի՞նչ է այս առ այն թէ Եղիսաբէթ քեզ որդի մը պիտի ծնի: Թերեւս այս մասին բազմաթիւ անգամ աղաչած էր Աստուծոյ: Բայց նա որ ամէն ինչ կ'ուղղէ եւ կը յօրինէ, անքննելի իր իմաստութեամբ, պահեց այս մէկը իր պատշաճ ժամանակին, ըստով - աղօթքներդ լսելի եղան. քանի որ ծնելիք որդին քարոզ պիտի ըլլայ անոր որ աշխարհի մեղքը պիտի վերցնէ: Ըստ այնմ Ցովսէփին ալ ըսաւ «անոր անունը Ցիսուս պիտի դնես, զի նա պիտի փրկէ ժողովուրդը իր մեղքերէն:» Այսպէս կը ճշմարտուի այս խօսքը. անիկա փրկութիւն կը հայցէր եւ անիկա ամէնքը փրկողը կ'աւետարանէր: Մանուկին վերաբերմամբ ամէն ինչ կարգաւ կը յայտնէ: Նախ անունը:

Յովհաննէս պիտի կոչես անոր անունը:

14.- Ան ուրախութիւն եւ ցնծութիւն պիտի ըլլայ քեզի: Ուրախութեան կրկնութիւնը, անշուշտ պարգեւի մեծութիւնը կը յայտնէ: Շատերը անոր ծննդեամբ պիտի հրճուին: Ցոյց կուտայ նաև թէ մանուկին պատիւը ոչ թէ մարմնաւոր այլ հոգեւոր բարձրութեամբ կը հասկցուի:

15.- Տիրոջ առջեւ մեծ պիտի ըլլայ ան. գինի եւ օղի պիտի շխմէ եւ մօրը որովայնէն սկսած Սուրբ Հոգիով պիտի լեցուի:

Աստուծոյ կողմէ տրուած կատարեալ ճոխութիւնը այս է, ոչ միայն իր բարձրութեամբ այլ պատուին տեւականութեամբ: Երկրաւորներս փոքր ենք, կորստական եւ երեւութապէս խարեւութիւն: Գինի եւ օղի պիտի շխմէ: Օրէնքին ուղղութիւնը կուտայ. վասնզի ուխտաւորներուն համար այսպէս էր, անոնք որոնք նազովրեցի կը կոչուիին. Թուոց 6.1: Ըստ որում եւ Աննա մանուկն Սամուելի համար ուխտեց Աստուծոյ ըսելով գինի եւ օղի պիտի շխմէ: Այսափ օրէնքի մասին: Խակ նա ընդ օրինօք կամ արտաքս օրինաց ամենայնի կատարեալ էր:

Սուրբ Հոգիով պիտի լեցուի: Ուրիշի համար այսպիսի բան չէ գրուած. հաստատապէս ցոյց կուտայ այս պարագան նաեւ Քրիստոսի վկայութիւնը. «Յովիաննէսէ աւելի մեծ մարգարէ չէ յարուցուած»: Մատ. 11.11: Արդ՝ եթէ մօրը որովայնին մէջ Ս.Հոգիով լեցուեցաւ, գիտենք թէ Տիրոջ առջեւ «խաղաց նա ցնծալով»: Նոյն ժամանակ նաեւ Եղիսաբէթ անոր մայրը Ս.Հոգիով լեց- իւցաւ:

16.- Խրայէլի որդիներէն շատերը Աստուծոյ պիտի դարձնէ: Մկրտչին յառաջ գալը եւ Քրիստոսի մասին քարոզելը, շատ շահաւոր եղաւ որովհետեւ շատերը դարձուց առ նա, թէեւ ամէն բան գրի չէ առնուած: Ըստած է թէ մաքսաւորներ եւ մեղաւորներ արդարացան Յովիաննէսէ մկրտուելով, ինչ որ անշուշտ կը նշանակէ թէ շատերը դարձուց Յովիաննէսի ի Տէր Աստուծած:

Ահաւասիկ Ս.Կոյս Մարիամէ ծնեալը քարոզեց որպէս Տէր եւ Աստուծած:

17.- Այս պատճառաւ ինք պիտի գայ անոր առջեւ Եղիայի հոգիով եւ զօրութեամբ: Արդ՝ այն սպասաւորութիւնը որ Եղիա պիտի կատարէ Քրիստոսի երկրորդ գալստեան, նոյնը կատարեց Յովիաննէս, առաջին գալստեան: Ահա թէ ինչու Եղիա կ'ըսուի ոչ մարմնով այլ հոգիով: Եղիայի հոգին հանգչեցաւ Եղիսէի վրայ: Թագ. 4.Զ.15: Տէրունական խօսքերն ալ նոյնը ցոյց կուտան երք կ'ըսէ- «Եղիա եկաւ եւ շճանշցան զայն. այլ գործեցին որպէս եւ կամեցան» Մատթ. 17.19: Խակ հրեշտակը Զաքարիային կ'ըսէ թէ Եղիայի հոգիով եւ զօ- րութեամբ պիտի գայ, յիշեցնելով Մաղարիայի խօսքը 4.5:

17.- Հաշտեցնելու համար հայրերը որդիներուն հետ. Յովիաննէս գալով պիտի հաշտեցնէ հրեաները մարգարեներուն հետ որոնք կանխաւ գուշակեցին Տիրոջ մասին, ցոյց պիտի տայ մաքուր եւ ուղիղ վարք, ինչպէս որ մարգա- րեները զանոնք խրատած էին: Առաքեալը կ'ըսէ «Երբ որ հեթանոսները ընդունուին ամբողջութեամբ, այն ատեն ամբողջ խրայէլ պիտի փրկուի»:

Հում. 11.Զ5:

Տիրոջ ժողովուրդը պատրաստելու համար: Աշխարհիկ իշխանութիւն ունեցողները, քաղաք մտնելէ առաջ, սպասաւորներ կը դրկեն որպէսզի ամէն

ինչ յարդարեն: Այսպէս եւ նախ Յովհաննէս կը ժամանէ որպէսզի ժողովուրդը պատրաստէ, մեծ զգուշութեամբ գալիք Թագաւորը ընդունելու համար. մեղքերու ախտեն մաքրուած, հոգիներէն թօթափելով անօրէնութեան փոշին. այնպէս անախտ կեանքով, Աստուծոյ բնակութեան ընդունարան կ'ըլլան: Ըստ այնմ ըսաւ - «անոնց մէջ պիտի բնակիմ» Բ. Կորնթ. 6.16: Եւ «Ես ուր հանգչիմ եթէ ոչ հեզերու եւ խոնարհներու մէջ որոնք կը դողան իմ խօսքերէս»: Եսայի
66.Զ:

18.- Զաքարիա հրեշտակին ըսաւ.- «ինչպէս կրնամ գիտնալ ատիկա, որովհետեւ ծեր եմ, կինս ալ տարիները անցուցեր է»: Արդ՝ ի՞նչ է այս. թերեւ թերութիւն, քանի որ նախապէս իրեն համար ըսուցաւ արդար եւ անարատ. ի՞նչպէս արդար քանի որ պատգամին վերաբերմամբ կը կասկածի: Նախապէս ալ այսպիսի օրինակներու կը հանդիպինք: Ս. Հոգույն մատակարարութեամբ այսպէս պատահեցաւ որպէսզի ամէնքին յայտնի ըլլայ տեսիլքն ու սքանչելի ծնունդը: Տօնական օրուան մէջ պատահեցաւ, երբ ժողովուրդի բազմութիւնը զանազան շրջաններէն եկած էր որպէսզի լուրը ամենուրէք տարածուի:

19.- Հրեշտակը ըսաւ անոր - «Ես եմ Գարփիէլ որ Աստուծոյ առաջ կամ, դրկուեցայ քեզի խօսելու»: Աստուծոյ առաջ կամ ըսելով, չի նշանակեր թէ հրեշտակաց դասուն մէջ բարձր է պատուվ. նոյն դասուն կը պատկանին այն որ Զաքարիային երեւցաւ եւ անոնք որ հովուաց Երեւցան. Մատթ. 1.20 նաև գերեզմանին քով գտնուողները: Ինքզինք յայտնելու համար կը գործածէ այս բացատրութիւնը, թէ Աստուծոյ կամքը կը կատարէ: Բարի լուրին միջնորդ կ'ըլլայ եւ ընդդիմանալուն համար կ'ըսէ:-

20.- Համբ պիտի ըլլաս. պիտի չկրնաս խօսիլ մինչեւ այն օրը: Աւետիս բերելո՞ւ համար, թէ արդարը պատժելու կամ պատուհասելու համար դրկուեցաւ: ԱԾԾիշխան կամօք չըրաւ, չէր համարձակեր առանց զինք դրկողի կամքին գործել: Սամուելի հետ ալ անընդմիջաբար խօսեցաւ Յեսուի որդուց ընտրութեան մասին. Ա. թագ. 16.ԶԶ:

Զաքարիայի սիրու չէր թերահաւատը, միայն բերանը, ուրեմն միայն բերանը պատիժ ստացաւ: Սաստելէն ետք հրեշտակը նաև յուսադրեց ըսելով, «Ծիշտ ժամանակին խօսքերս պիտի ճշմարտուին»: Աստուծոյ կողմէ սահմանուած ամէն ինչ իրենց Ծիշտ ժամանակին անվրէպ կերպով կը կատարուին:

21.- Ժողովուրդը կ'սպասէր Զաքարիային, կը զարմանային ուշանալուն համար, սպասատրութեան սովորական չափը գիտէին, կ'անգիտանային թէ ինչո՞ւ ուշացաւ:

22.- Երբ որ դուրս եկաւ չէր կրնար խօսիլ անոնց հետ. իմացան թէ Տաճարին մէջ տեսիլք տեսաւ. նշաններով կը խօսէր, պապանծած էր: Անոնք տեսիլքին հաւաստի վկաներն էին:

ԱՆԱՌԱԿԻՆ ԶՂՋՈՒՄԸ

Մեծ Պահոց շրջանի իւրաքանչիւր կիրակին ծանօթ է անունով մը: Այս կիրակին՝ «Անառակի» անունով:

Այս անունները կ'առնեն օրուան նաշու աւետարանի ընթերցուածի գլխաւոր առակեն:

Նոր Կտակարանի ամենէն բանկագին գոհարներէն է «Անառակի» առակը: Եթէ ըսենք որ ամրող աւետարանի հիմնական ուսուցումները իր մէջ կը պարունակէ այս առակը չափազանցութիւն ըրած պիտի չըլլանք:

Հակառակ որ ամէն տարի կը լսենք այս առակը, հաւատացեալներու մտքին մէջ վերակենդանացնելու համար, աւելորդ չենք նկատեր զայն կրկնել:

Մարդ մը երկու Որդի ուներ, անոնցմէ կրտսերը ըսաւ հօրը. «Հայր, տուր այն բաժինը, որ ստացուածքներէն ինձի կ'իյնայ»: Եւ հայրը բաժնեց անոնց իր ինչքերը:

Կրտսերը ստանալով իրենց բաժինն զնաց օտար երկիր, եւ ինն անառակութեամբ վատնեց իր ամրող հարստութիւնը:

Անոր չար բախտեն, այդ երկրին մէջ սովոր տիրէ եւ ինքը կը սկսի աղքատանալ:

Ստիպուած այդ երկրի բաղաքացիներէն մէկուն քով կը մտնէ որպէս խոզարած, իր սնունդը հոգալու համար: Սակայն խոզերու առջև բափած մնացորդներէն ալ իրեն բաժին չէր հասներ: Իր ամենածանր նեղութեան մէջ կը յիշէ իր հօր հացալից տունը, բազմաթիւ ծառաներով: Եւ ինքնիրեն կ'ըսէ. «Ելլամ երթամ հօրս քով, եւ ըսեմ անոր. «Հայր, մեղանչեցի երկնելի եւ քու առջեւդ. այլիւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու. ընդունէ

զիս որպէս եռ վարձկաններէդ մէկը»: Եւ օր մըն ալ ելաւ, ու գնաց հօրը մօտ:

Ու մինչդեռ հեռուն էր, հայրը տեսաւ զինքը, գութը շարժեցաւ, ելաւ ընդ առաջ գնաց, վզին փաքքուեցաւ. Եւ համրութեց զինքը: Որդին ըսաւ, «Հայր, մեղանչեցի երկնելի եւ քու առջեւդ, այլիւս արժանի չեմ որդիդ կոչուելու»: Հայրը իր ծառաներուն կ'ըսէ. «Թերէք իր նախկին պատմունանը, եւ հագուեցուցէք անոր, մատանին անցուցէք մատը եւ կօշիկները ուտքը բերէք պարարտ եզը, մորթեցէք, ուտենք եւ ուրախանանք»:

Այս պարզ բայց պատկերաւոր ու գեղեցիկ առակին մէջ ամփոփուած է աւետարանական բարողութեան ամենամեծ գաղափարներէն մէկը, մեր երկնաւոր Հօր անհուն սէրը եւ անսահման գրութիւնը դէպի մարդ արարածը:

Անառակ Որդիին առակը ամէն մեղաւորի մարդու պատմութիւնն է. ամէն մեղաւորի, որ տեսնելով իր ստորին վիճակը՝ կը զղայ, կը խոստովանի եւ Աստուծմէ բողութիւն կը խնդրէ:

Աստուած միշտ բարեգութ է, արքուն եւ հոգատար, որ բազուկները բացած կ'ուզէ գրկել իրեն դարձողները եւ ներել անոնց, առանց հաշիւ կամ համար պահանջելու անցեալի մասին: Մեր երկնաւոր հայրը, ուրիշ բան չի մտածեր, բայց եթէ նախկին ազնուականութեան բարձրացնել իր թշուառ որդին:

Սիրելի հաւատացեալներ մեծ Պահոց շրջանի աղօքներուն մէջ մենք յանախ կը կրկնենք թէ Հայր Աստուածը չուզեր մեղաւորին մահը այլ անոր դարձը իր չար կամ անկեալ վիճակէն:

Անառակ Որդին երբ եկաւ, հայրը զայն չյանդիմանեց, քննութեան չենթարկեց թէ ինչպէս վատնեց իր հարսութիւնը, ի՞նչպէս անառակ կեանք վարեց. այլ գրկարաց ընդունեց զայն. համրութեց, ուրախացաւ եւ խննոյք սարքեց: Բաւական է որ վերադարձած է իր մոլորուած որդին, բաւական է որ ան հասկցած է իր սխալը եւ դարձի եկած, կորուսեալ էր եւ գտաւ: Մնացածները երկրորդական են:

Լայնախոնի, ներողամիտ եւ սիրող երկնաւոր Հօր պատկերն է որ գծագրուած է այստեղ, դէայի մարդը, դէպի մարդկային բանլագին հոգին:

Մարդասիրութեան, անձի կամ հոգիի գնահատութեան ամենաքարձը արտայայտութիւնն է այս բոլոր կոսմոներու եւ մարդկութեան պատմութեան մէջ, եւ բոլորովին տարբեր, մեր սովորական մտածողութեան եւ հասկացողութեան չափանիշներէն:

Մեր Տիրոջ կոչումը փրկիչ քառով սահմանուած է: Այս ան չէր եկած նիւթական կամ արտաքին, բաղաքական կամ տնտեսական հասկացողութեամբ փրկութիւն բերելու:

Անոր կոչումը աւելի քարձը էր: Ան եկած էր աւելի արժեքաւոր քանի համար: Հոգիներու փրկութեան, անոր արժեքի քարձացման համար: «Խնդրեցէ նախ զարքայութիւն Աստուծոյ եւ զարդարութիւն նորա եւ այդ ամենայն յաւելցի ձեզ»:

Արդարութեան գաղափարը աւետարանի մտքով ոչ միայն հակադրութիւն չէ բաղաքական ճշմարիտ ազատութեան եւ ժողովրդական կեանքի քարօրութեան, այլ եւ անոնց հիմքը պէտք է ըլլայ:

Քրիստոս մեր տէրը մարդկային յարաբերութեան մի նոր չափանիշ բերած էր. եւ այդ սիրոյ եւ եղայրութեան, հոգիներու հաւասարութեան գաղափարն էր:

Մէկ է Աստուած եւ ան երկնաւոր հայրն է բոլորին անխտիր, հոգներու մէջ ազգի եւ սենի խտրութիւն չկայ. բոլորն ալ հաւասարապէս քանզ են Աստուծոյ համար: Են որովհետեւ քանզ է ամենայն հոգի, ուստի կորսուածին գիւտը կամ դարձը, ուրախութիւն է Աստուծոյ համար: Ատոր համար պէտք է որ կորսուածին ետեւէն երթալ փնտոնել եւ գտնել զայն: Ուրիշ անգամ մեր տէրը ըսած էր. «Ոչ եկի կոչել զարդարս այլ զմեղաւորս»: Հովիւն ալ հօտը ձգելով կորսուած ոչխարին ետեւէն է որ կ'երթայ, եւ երբ կը գտնէ, զայն ուսին առած ուրախութեամբ տուն կը վերադառնայ:

Այսպէս ամէն մէկ մեղաւորի դարձը ուրախութեան պատճառ է թէ՝ հրեշտակներու եւ թէ Աստուծոյ համար երկնքի մէջ:

Մեծ եղբայրը, որուն վրայ կը կերդրոնանայ առակին մէկ մասը, երբ դաշտէն տուն դարձաւ եւ իմացաւ ուրախութեան պատճառը, իր դժգոհութիւնը յայտնեց հօրը:

«Այսքան ժամանակ էեզի հետ եմ եւ հաւատարմութեամբ իմ որդիական պարտաւորութիւններս կը կատարեմ, ուլ մը անգամ չտուիր որ ընկերներուս հետ ուրախանամ, իսկ քու այս որդին, որ՝ հարսութիւնդ անառակութեամբ վատնեց, պարարտ եզը մորթեցիր անոր համար»: Բայց հայրը մեղմութեամբ կը պատասխանէ. «Որդեակ դուն միշտ ինձի հետ էիր եւ ինչ որ իմն էր քուկդ էր. իսկ այս քու եղբայրդ, մեռած էր եւ ողջացաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»:

Սիրելի հաւատացեալներ, մենք ուրիշներու մէջ, շատ յանախ, միայն պակասաւոր կողմն է որ կը տեսնենք: Փոքր կամ պզտիկ պակասութիւններն ու թերութիւններն իսկ խոչորացոյցով կը դիտենք, մինչդեռ պէտք է նախ դրական կողմերը որոնել եւ ըստ այնմ դատել:

Սովորական, լաւ մարդիկ անգամ,

որոնց տիպն է այստեղ աւագ որդին, հաւատարիմ իր որդիական արտաքին պարտականութիւններու կատարման մէջ, չեն տեսներ կարեւորը, երբ ուրիշ հաշիւթերով կը մօտենան խնդրին:

Անոր համար կարեւոր չէ, որ եղրայրը տուն դարձած է. իր կարծիքով հայրը պէտք եղած չափով չէ գնահատած իր հաւատարմութիւնը:

ԿԵՎԱՆՔԻ ՄԷՋ, երբեմն ներողամտութիւնը դէպի յանցաւորը աւելի դրական արդիւնք ցոյց կու տայ քան պատիժը:

Մեր տէրը անգամ չհանդուրժեց այս ոգիին որ յատուկ էր փարիսեցիներուն եւ սադուկեցիներուն, որոնք միայն արտաքինով կը դատէին մարդը, որոնք ուրիշի աչքին իւղը դիւրութեամբ կը տեսնէին առանց անդրադառնալու իրենց աչքին մէջ եղող գերանին:

Մեր Տիրոջ խօսած առակներուն մեծ մասը առ հասարակ երկու տեսակ մեկնարանութիւն կը պարունակեն իրենց մէջ, մին ժամանակակից կամ այդ շրջանին համար միայն, իսկ միւսը յաւերժական:

Աւետարանական իմաստով առակին երեց որդին հրեայ ժողովուրդն է, դարերով Աստուծոյ ծառայող եւ անոր պատուիրանները իրեւ օրէնք ընդունող: Ինչպէս կը տեսնենք, երեց որդին առակին մէջ, զրկուած է սէրէ եւ մարդկութենէ. այնպէս ալ հին խրայէլը քարացած է օրինապահութեան եւ ծիսապաշտութեան մէջ, իր ընկերային քարոյականն է սիրել իր կրօնակիցը եւ ատել իր թշնամին եւ բոլոր հերանուները:

Իսկ կրտսեր որդին որ կը ներկայացնէ հերանոսութիւնը, դուրս եկած է Աստուծոյ տունէն եւ օրէնքէն:

Աւետարանը սակայն նոր կոչ մըն էր. նոր քարի լուր մը՝ ուղղուած բոլոր մարդկութեան, թէ հրեաներուն եւ թէ հերանոսներուն հաւատարապէս:

Երկուքն ալ, թէ հրեաները եւ թէ հերանոսները կուրուսատի դատապարտուած էին, երկուքն ալ պէտք ունեին իր բերած փրկարար պատգամին: Հետեւարար Աւետարանը քարոզուեցաւ երկուէին ալ հաւատարապէս: Առաւելարար հերանոսներ մտիկ ըրին այդ կոչին ու ապաշխարեցին, եւ իրենց հօր տունը վերադարձան:

Իսկ միշտ Աստուծոյ տան մէջ մնացող պատուիրանապահ հրեայ ժողովուրդը ի վերջոյ չուզեց մտնել Աստուծոյ տունը հերանոսներուն հետ միասնարար եւ քրիստոնէական եկեղեցին դուրս մնաց: Մեր տէրը ըսաւ, իր խօսքը ուղղելով հրեայ ժողովուրդին. «Ծատեր պիտի գան արեւելքէն եւ արեւմուտքէն եւ պիտի բազմին Արքահամի, Խահակի եւ Յակորի հետ երկնքի արքայութեան մէջ:» Իսկ արքայութեան սահմանուածները այսինքն հրեաները, պիտի մնան արտաքին խաւարի մէջ ուր իրենց կը սպասէ լաց եւ ակուաներ կրնտել:

Երկու եղբայրները կը ներկայացնեն ամրող մարդկութիւնը իր երկու հիմնական բարոյական տեսակներուն մէջ: Կրտսերը սանձարձակ է, քայց բոլորովին չէ պարպուած սէրով լեցուելու կարելիութենէն: Իսկ միւս երեց որդին հաւատարիմ, օրինապահ քայց անեներող: Կրտսերը հակառակ գրեթէ իր ամրողական քայլայման ինքիններին եկաւ ու զդումով եւ ապաշխարութեամբ իր մոխիրներէն վերստին կեանքի տիրացաւ, եւ քարձրացաւ իր որդիական պատիւին: Սակայն հակառակ ընթացքը նկատելի է երեց որդիին պարագային:

Երեց որդին նեղող եւ զայրացնող պատճառը նախ այն մտահոգութիւնն էր որ կրտսերը փնացնելէ ետք իրեն ինկած ժառանգութեան քաժինը, տուն եկած էր մասնակցելու իրեն մնացած քաժինին:

Քայց այստեղ է որ երեւան կու գայ տարրերութիւնը Աւետարանի եւ մարդոց

շափանիշներուն:

«Պիտի սիրես եղբայրդ կամ ընկերդ քու անձիդ պէս». ըսաւ մեր Տէրը ուրիշ առիթով մը:

Ո՞վ իր ունեցածը պիտի խնայէ իր անձին համար: Եթէ եղբայրդ կը սիրես չես կրնար ունեցածէդ քաժին չհանել եղրօրդ համար: Երէցը կը գանգատէր մինչեւ իսկ պարարտ եզին համար որ մորքուած էր եղրօրը վերադարձին առիթով:

Այս ընթացքն կարելի է հետևեցնել որ երէցը եսասէր նկարագրով լեցուն անձ մը ըլլալու է, որմէ հեռու չեն նաեւ քարկութիւնը եւ նախանձը: Աւետարանը քան մը չըսեր թէ ան հաշտուցաւ կամ համոզուցաւ իր հօր խօսերէն ու մտաւ տուն եւ ուրախացաւ եղրօր վերադարձին համար:

Սակայն մենք մոռնանք երէցը ու մեր մտքին մէջ մեզի օրինակ վերցնենք կրտսեր որդիին ընթացքը, յատկապէս ապաշխարութեան այս օրերուն:

Սիրելի հաւատացեալներ, Աստուած հայրն է բոլոր անառակ որդիներուն, որոնց դարձին ու զղջման կը սպասէ, զանոնք գրկելու եւ համրութելու համար: Ամէն անգամ որ քրիստոնեայ մը դարձի կու գայ ու կ'ապաշխարէ, պէտք է առանց ամշնալու խոստովանի իր հօրը առջեւ ըսելով. «Ամեղայ յերկինս եւ առաջի քո»: Այն ատեն մեր երկնաւոր Հայրը սիրոյ ժպիտով պիտի դիմաւորէ, գրկէ եւ հայրական սիրոյ եւ ներման համրոյրներ դրոշմէ նակտին վրայ եւ ըսէ իր հրեշտակներուն. «ուրախացէք ինձի հետ, վասն զի այս անառակ որդիս մեռած էր, յարութիւն առաւ. կորսուած էր եւ գտնուեցաւ»:

ԳՈՒՍՏԱՆ ՎՐԴ. ԱԼՃԱՆԵԱՆ

ԽՈՐՀՈՂԱԿՈՐ ԳԻՇԵՐ

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՓՈՔՐԻԿԻՍ»

Եկաւ երկար սպասուած Գիշերը: Փոքրիկս, երբեւէ լսե՞լ ես ծերուկ Գիշերի պատմած հին ու նոր պատմութիւնները: Զարմանո՞ւմ ես: Գիշերը ոչ միայն պատմում է, այլև հմտօրէն բեմադրում է սփանչելի քատերականացուած պատմութիւններ: Հաւատո՛, նա աշխարհի ամենախորհրդաւոր բեմադրիչն է: Նայիր երկինք եւ դու այսօր ականատես կը լինես այդ ամենախորհրդաւոր բեմադրիչի, ամենախորհրդաւոր բեմադրութեանը:

Սիա Գիշերը բացում է տիեզերքի բեմի քաւշէ վարագոյրները:

Բեմականացումը սկսուեց:

Տիեզերքը զարդարուած է հրաշակերտ եկեղեցւոյ պէս: Արարչի անտեսանելի աջը մէկիկ-մէկիկ վառում է հրեշտակների բնակարանի կանքեղները, որ մենք աստղեր ենք կոչում: Ամէն մի փոքրիկ, տիեզերքում իւր կանքեղը ունի . . . Տես-տես, Լուսինը բազմում է իր փառահեղ երկնային գահի վրայ: Ճերմակ-ներմակ նշանը լուսին: Այժմ բոլորը պատրաստ են եւ հնչում է տիեզերքի հինաւուրց մեղեդին: Երկնային երածիշտները իրենց անմարմին շուրբերով եւ աննիւրական նուագարաններով Աստուծոյ գովեն են երգում: Արանք սերովքներն ու քերովքներն են, որ միաձայն

սրբասացութեամբ սադմոսում են. «Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց, լի են երկինք եւ երկիր փառօք քո. օրհնութիւն ի բարձութեամբ . . .»:

Գիտե՞ս, փոքրիկս, մեծահասակ մարդիկ չեն կարող լսել աստուածային այս բարբառը, նրանք վարժուել են իրենց հողեղեն ականչներին: Հոգեւոր այս երգեցողութիւնը լսելու համար պէտք է մանուկ լինել. մանուկները կարող են լսել ամենիթական լսելիքներով: Նրանք պատիկ լոյսի տաճարներն են, որ ոչ միայն լսում են երկնայինների օրհներգութիւնը, այլ տեսնում են փառարանիշներին, նրանց հետ գուարեանում են հոգեւոր այս խրախնանքի մէջ: Որքան երանելի են փոքրիկները, որ դեռ չեն ճաշակել մեղքի դառը սեղանից: Նրանք սեղանակից են հրեշտակներին եւ յաղթական եկեղեցւոյ սուրբերին:

Հրաշքների գիշեր: Ամէն անգամ, երբ հրափայլ Արեգակը իր հրեղեն կառելով սուրբում է ծովի անհունը՝ հանգչելու իւր առագաստի մէջ եւ բարեպաշտօն երաժշտները սկսում են իրենց օրներգութիւնը, գալիս է ծերունազարդ Գիշերը եւ իւր պատմութիւնն է հիւսում զարմանահրաշ արարչագործութեան մասին: Խոկ Լուսինը, աստղերը, տիեզերքի փոքր ու մեծ մոլորակները իրեւ գերազանց դիրասաններ օգնում են նրան, նոյնիսկ կուում ու վիճում են, թէ ո՞վ աւելի

յարմար է այս կամ այն դերը կատարելու համար: Լուսինը երբէք իր դերը չի ուզում փոխել, կամենում է միշտ նշխար լինել, գտնելով, որ ինքը լուսափայլ է, ներմակ ու կորիկ, իսկ խորհրդաւոր է, երբ նշխարը օրերի ընթացքին նուազում է ու չի վերջանում, այլ նորից ծնուռ է:

Որքան մեծ ու հզօր է Աստուած: Այսանչացիք, փոքրիկս, Անմահ Թագաւորի ձեռքի գործերով, բոյլ տուր, որ մանկան հոգիդ մասնակից լինի գիշերուայ այս խորհրդաւոր բեմադրութեանը, բող որ երկների բեմի առջև երկրպագի Փառքի Թագաւորին, օրհնի նրան եւ փառարանի, բող որ հոգիդ սաւառնի անհունի մէջ: Հոգին սահմաններ չի սիրում, բաղցրիկս, արձակիք նրա քեւերը, որ Աստուած է տուել: Արծիւները պէտք է բռչեն: Եթէ ստիպսի, որ հոդի վրայ սողան գարշելի օձերի պէս, նրանք կը մահանան: Արծիւները պէտք է բռչեն:

Սիրելի փոքրիկս, Գիշերը աւարտում է իր պատմութիւնը: Արեգակի չարանենի ճառագայթները բոցեղեն զանգակներ դարձած ազդարարութեան են լուսաբացը: Լոյսը ողողում է տիեզերքը: Խոկ ծերուկ Գիշերը փակում է երկնային բեմի քաւշէ վարագոյները: Ակսում է մի ուրիշ գեղեցիկ պատմութիւն՝ կեանքի, լոյսի, գարնան ու սիրոյ:

Բարեւ Արեւ:

Բարի լոյս, փոքրիկ:

S. ԶԱՔԱՐԻԱ. ՔՃՆՅ. ՍԱՐԻԲԷԿԵԱՆ

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ

Քրիստոնեութեան հիմնադիր Նազովեցի Վարդապետը երկրային իր առաքելութեան ընթացքին գրադաւար միայն քարոզչական գործունեութեամբ եւ շնորհիւ անոր յայտանքերած քարոյական ուսուցումներուն, քրիստոնեութիւնը դարձաւ բոլոր կրօններու պասկը:

Պաղեստինի մէջ, իր շրջագայութեան ընթացքին ան ընտրեց 12 անձեր, որոնք աշակերտելով Յիսուսի, անոր համբարձումէն եսք, Հոգեգալյատեան օրը առաքելութիւն ստացան քրիստոնեութիւնը քարոզելու ու քրիստոնեական նշմարտութիւններն ու վարդապետութիւնը տարածելու աշխարհի չորս անկիւնները:

Քրիստոնեութեան սկզբնական այդ շրջանին, նորայայտ քրիստոնեական կրօնը հալածող Սողոս, հրաշալի հոգեփոխութեամբ մը դարձաւ քրիստոնեական եկեղեցւյ համայնական կեանքի հիմնադիր՝ Պողոս, որ իր բարձր ուսման ու կազմակերպչական կարողութեան շնորհիւ Յիսուսի քարոզած վարդապետութիւնը դուրս բերելով Պաղեստինի հրեական նեղ ու սահմանափակ շրջագիծէն, զայն տարածեց հեթանոս աշխարհներ, եւ այդ իսկ պատճառաւ անուանուցաւ հեթանոսաց առաքեալ:

Յիսուս հիմնեց քրիստոնեական կրօնը քայց անոր առաքեալներն ու աշակերտները, ու ապա առաքելական շրջանի եկեղեցւյ հայրեր հաստատեցին եկեղեցին, իր վարչական-դաւանական-հասարակական եւն. դրութեամբ եւ օրէնքներով:

Քրիստոսի Համբարձումէն եսք քրիստոնեաներ աղօքի եւ պաշտամունքի համար կը հաւաքուէին տան մը վերնատունը: Երբ նորադառներ

բազմացան, անոնք սկսան հաւաքուիլ ու աղօքել ժողովարաններու մէջ: Ընտանեկան խումբերու այս բազմութիւնը վերածուցաւ եկեղեցիի: Հետագային, այս կարգ մը առտնին եկեղեցիներէն կազմուցաւ Մայր եկեղեցին:

Եկեղեցւյ իմաստը հետեւեալ ձեւով սահմանուած կը տեսնենք Ս. Սահակ Հայրապետի կանոններուն մէջ.՝

«Քանզի եկեղեցի մեզ ոչ ցուցանէ պատուիրանն Աստուծոյ որ ի քարանց եւ ի փայտից է շինեալ, այլ զհաւատով շինեալ զազգս մարդկան ի վերայ վիմին հաստատութեան. ապա ուրեմն նշմարիտ հաւատն է եկեղեցի, որ գումարէ եւ շինէ զմեզ ի մի միարանութիւն գիտութեան Հոգույն Աստուծոյ» (Սոփերք Հայկականք Բ. էջ 100-101):

Ըստ Յովհան Օձնեցի Կարողիկոսին,

«Անհրաժեշտ է գիտնալ թէ ի՞նչպէս անշունչ քարէ եւ փայտէ շինուածն ու հաւատացեալներուն ժողովը հաւասարապէս Եկեղեցի կը կոչենք: Արդ, ինչպէս որ դրախտը կրկնապէս կ'ըմբռնենք, նոյնապէս եկեղեցին ալ կրկնապէս կ'ըմբռնենք, որովհետեւ եկեղեցին երրայերէնէն մեր մօտ ժողով կը բարգմանուի. ըստ նոյն անունին կը կոչուի նաև ժողովարան, որովհետեւ ստուգապէս Աստուծոյ տուն շինուած է անիկա, անոր մէջ Աստուծոյ Որդիին պատարագութելուն համար: Նոյնապէս մարդն ալ, ըստ Պողոսի տաճա՛ր է Աստուծոյ՝ աւազանին սրբութեամբ եւ վարքին մաքրութեամբ: Որովհետեւ, ինչպէս որ այս անշունչ տաճարին մէջ՝ շինուած քարէ եւ փայտէ՝ Աստուծոյ ամենակարող անունը կը կանչենք եւ Աստուծոյ անունով կ'օծենք զայն եւ Աստուծոյ տուն կ'անուանենք,

վասն զի ստուգապէս անոր մէջ կը բնակի Աստուած, նոյնակէս ալ հաւատացեալներ որոնք Աստուծոյ անունով կը մկրտուին, իւղով կ'օծուին եւ Քրիստոս Աստուծոյ անունով Քրիստոնեայ կը կոչուին . . .» (Ծաղկաբաղ . . . Արտաւագդ վրդ., էջ 95)

«Քրիստոնեութեան մարմնացումն ու Եերկայացուցիչը պատմութեան մէջ եկեղեցին է. կ'ըսէ Վեհափառ Գարեգին Յովսէփիան: Քրիստոս ինքը կազմակերպուած եկեղեցի չէ հիմնել, բայց բնական էր նորա այդպիսի զարգացումը: Եկեղեցին իւր նուիրապետական եւ համայնական կազմակերպութեամբ, իւր կրթական եւ բարեգործական հաստատութիւններով, ժարողով եւ աստուածապաշտութեամբ . . . միայն մի բարձրագոյն նպատակի արդիւնք է - Սրբազն մի մարդկութիւն դաստիարակել արժանի Յիսուսի անուան, արժանի նրա եղբայրակցութեան եւ Աստուծոյ որդեգրութեան: Նա աւետարանական նշմարտութիւնների մատակարարն է հօտի համար, եւ ճագում այդ սկզբունքները կեանքի հիմնաքար դարձնել: Ինչպէս Քրիստոնեութեան հիմնադրի առաջին խօսքը ապաշխարութեան կամ ներքին վերածնութեան ժարողն էր, հոգեւոր փրկութեան եւ յաւիտենական կեանքի աւետիսը, այդպէս եղիլ է եւ գաղափարական եկեղեցւոյ համար եւ պիտի լինի, եթէ իւր նպատակից

չէ շեղում: Նա կամենում է նշմարտութեան անշեշ լապտեր դարձնել մարդկային հոգին, որպէս զի արժանի լինի վայելելու ամենարարձիք բարիքը՝ ազատութիւնը, «ուր Հոգի Տեան է, անդ ազատութիւն է» (Դեպի Լոյս եւ Կեանք էջ 213-214):

Ներկայիս եկեղեցին որոշ չափով պարպուած է իր կոչումն եւ չունի առաքելական դարաշրջանի իր անկախութիւնը: Ատենին եկեղեցին կը կառավարուէր աստուածասէր եպիսկոպոսներու, սարկաւագներու եւ վերակացուներու կողմէ, որոնք հետեւելով Յիսուսի ուսուցումներուն եւ աւետարանական նշմարտութեանց, նիգ չէին խնայեր բարեգարդելու եկեղեցին եւ խնամելու հաւատացեալ հօտին հոգեկան, կրթական, տնտեսական կարիքները: Մինչ այսօր, հօտը իր վիճակին ձգուած է եւ օտար կրօնական եւ աղանդաւորական կազմակերպութիւններ ազատ ասպարեզ գտած կ'որան ու իրենց մէջ կը ներգրաւեն Հայց. եկեղեցւոյ անդամները:

Եկեղեցին իր բուն կոչումը իրագործելու համար վերահաստատելու է իր անկախութիւնը:

ԲԱԲԳԻՆ ԹՕՓՃԵԱՆ

ՆՈՐ ՏԱՐԻՆ

Պատասխան տուաւ Յիսուս ամոք.
«Ճշմարիտ, նշմարիտ կ'ըսեմ ժեզի, եթէ մարդ
մը նորէն չծնի, չի կրօար Աստուծոյ
բագաւորութիւնը տեսնել». Յովհ. 3:3

Այսպէս պատասխանեց մեր Տէրը Նիկողէմոսին, ցոյց տալով վերածնութիւնը մեր փրկութեան համար: Քրիստոս միշտ շեշտեց իր բարողներուն մէջ, նորոգութեան եւ փոփոխութեան կարիքը, նոր արարածի կերտումին մէջ: Քրիստոս բերաւ նոր արժէքներու եւ արժեշափերու շարանը մեր մտածողութեան անդաստանին: Այս նորութիւնը երբեմն խոտոր կը համեմատի աշխարհիկ ընկալեալ հայեցակետներուն հետ, բայց հոն է անոր իմքնատապութիւնը եւ կուտայ իրեն իմքնուրոյն նկարագիր:

Քրիստոնեութիւնը համակերպող եւ հանոյակատարական ուղղութիւն չունեցաւ, այլ բարձրադադակ յայտարարեց իր փրկութեան պատգամը: Ան հանելին չփնտեց, այլ օգտակարը եւ տեսականը: Քրիստոնեութիւնը օրուայ տիրող գաղափարաբանութիւններուն հակադրեց վսեմ եւ փրկաւետ իր սկզբունքները: Քրիստոնեութիւնը դրաւ դարերու վրայ իր փրկարար կնիքը, մարդկութիւնը առաջնորդելով դէպի կատարելիութիւն:

Կը դիմաւորենք նոր Տարին 1996, հաւատենք, յոյսով եւ յանձնառութեամբ: 1995 տարուայ հաշուեփակը, մեզ կը դնէ նոր առաջադրանքներու առջեւ: Զելքնել անցեալի թերութիւնները եւ կերտել ապագան մարդուս բարոյական վերածնութիւն: Անհրաժեշտ է այսօր, այս բարոյական վերածնութիւնը: Կ'ապրինք արագ տեղեկատուութեան դարու մը մէջ, համակարգիչներու, արքանեակեներու, արդիական գործիքներով տիեզերքի գաղտնիքները յայտնաբերելու. գիտական այս յառաջխաղացքի կողքին, կան նաեւ ժխտական երեւյթներ՝ թմրեցուցիչներու գործածութիւնը եւ բարոյական սայյաբումներ, խենէն բարեր, լսիր եւ վաւաշոտ կենցաղ: Կ'ապրինք սպառողական ընկերութեան մը մէջ, ուր նիւթապաշտութիւնը եւ ազահութիւնը իրենց աւերները կը գործեն: Ընտանեկան աւանդական կառոյցը վտանգի տակ է: Ազատագրութեան եւ կեղծ ազատութեան անունով, կը կատարուին բարոյական արժէքներու վերիկայրումներ, որոնք ընկերութիւնը կը դնեն

յախուու հիմերու վրայ: Ապագայապաշտ գրողներ, կը կանխատեսեն մարդկութեան համար մուր հեռանկար մը, իսկ այլ գրողներ՝ լաւատես են:

Հակառակ նարտարագիտութեան հզօր յառաջխաղացքին, մարդկութեան բարոյական արժեշափերը հաստատուն հիմերու վրայ չեն: Նոր Տարին, նորէն մեր առջեւ կը բանայ յանձնառութիւններու եւ պարտաւորութիւններու շարան մը: Քրիստոսի կանչը վերանորոգութելու, վերածնելու, բարոյապէս վերագիմութելու աւելի բան երբէդ այժմէական է: Այս դարում՝ մեզի հրամցուած ամէն նորութիւն շնորհումն անմիջապէս, առանց զանոնք լաւ մը բննարկելու:

Անտարբերութիւնը վնասարեր է: Քրիստոնեան չի կրնար հոսանքն էշուիլ, այլ ի պահանջել հարկին, իրեն կը մնայ հոսանքն ի վեր բիափարելու դաժան բայց յոյժ օգտակար եւ գովելի միջոցին դիմել: Ան ունի իր կեցուածքը եւ գաղափարական ուղղութիւնը, որ չի կրնար սակարկութեան դրուիլ: Քրիստոնեութիւնը իր հիմնադրութենէն ի վեր, պահեց իր բարոյական պահակի պաշտօնը:

Պայքար է հարկաւոր մեղքի եւ ապականիչ բոլոր տեսակի երեւյթներու դէմ: Մեր երիտասարդութեան մէջ, հարկ է շեշտել պատասխանատուութեան զգացումը, պարտականութեան եւ ծառայութեան ոգին: Քրիստոսի լոյսն է, որ կրնայ փարատի մարդոց հոգիներէն հոգեւոր կուրութեան բանձր խաւարը եւ բարոյական ապականութիւնը:

Նոր Տարուայ սեմին կանգնած, կը մարդեմ բոլորիդ դրական եւ շինիչ գործունեութիւններով թեղուն տարի մը, իսկ Ս. Աբովիս Գահակալին, երկար, առողջ եւ արդիւմաշատ տարիներ, իսկ Միարանութեան անդամներուն յաջող եւ բարօր գործունեութիւն:

Աստուած մեզ բոլորս օրինէ եւ առաջնորդէ ի գործս բարիս, Ամէն:

ԱՆՌԻՇԱԽԱՆ Շ. ՎՄԴ. ԶՂՋԱՆԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԱԿԱՆ

ՀԱՐՈԼԾԻ ՈՐԴԻՈՅՆ ՊԱՆԴԽՏՈՒԹԻՒՆԸ

- 56)** Մինչ կը զըննէի ես այդ բարձունքներ,
 Կար կէտ մոր պէտք չէր մընալ անտեսուած,
 Հըպարտ Մորաթի դաշտն Հայրենասէր,
 Սոսկմամբ կը տեսնես հոն յաղըն մեռնողաց,
 Ոչ իսկ կը շիկնիս վասն դաշտ գրաւողաց.
 Հոն է, կը ձըշան մեռելքն անշիրիմ,
 Ուսկրակոյտ մը որ դարերով մընաց,
 Յաղթական կամար ըսթիճեան եզրին՝
 Անգերեզման ոգիներ ճշացին անվերջ՝ ցայգին:
- 57)** Ուաթըրլուն - Գանի կ'մրցեն նախաճիրով,
 Մորաթ, Մարաթոն կ'ապրին փառանուամբ,
 Անբիծ ու շըքեղ յաղթանակներով,
 Ռազմը շահած հեզ սըրտով ու ձերամբ,
 Հըպարտ, եղբայրական քաղքենի գօրամբ.
 Ոչ մըրցումներով նենգ իշխանական՝
 Ընդմիշտ անէծքի ողբով պարարուն.
 Այլ մըրցակիցք ելած արդար մըրցման,
 Թագին օրէնքն Աստուածային չեղած պայման:
- 58)** Միակ պատի մը՝ առանձին մի սիւն,
 Հին օրերու ցափ, գորշ կերպարանքով,
 Վերջամնաց աւերը տարիներուն՝
 Կը նայի իհմայ շրփոթ նայուածքով.
 Ինչպէս քար կըտրած մէկուն կեցուածքով.
 Արդ կեցած կարծես գիտակցութեամբ, բայց
 Նաեւ զարմանքով որ, քայքայուած չէ,
 Մինչ իր տարեկից պերճանքն մարդու ձեռած
 Աւէնիզըս հպարտ երկիրն է արդէն հարթուած:
- 59)** Ու հոն - Օ՛, ինչ քաղցր, ու ի՞նչ անուն սուրբ,
 Յուլիանէ - դուստը - երկնի նըլիրած.
 Պահանջով մը իր սըրտի բարենուրբ,
 Երկնամօտ որ փըլաւ իր Հօր շիրմին դիմաց
 Արդարութիւնն էր արցունքին դէմ բայց,
 Ան կեանքն իր տըլաւ փոխան արդարութեան
 Մեռաւ վասն անոր որ փըրկել չկրցաւ,
 Առանց կեսանդրի է իրենց գերեզման
 Ուր Սափորին մէջ, մէկ միտք, մէկ սիրտ մէկ փոշի կայ միայն:

(շարունակելի)

LORD BYRON
 Թրգմն. Մուրատ Մանուկեան

ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ

Անմահութիւն՝ իրաւ կա՞ս, թէ ի՞րապէս դուն ջլկաս,
 Կը միանամ ես ահա այն մարդերուն կորովի,
 Այն մարդերուն եսասէր, եւ վախկոտ այն մարդերուն,
 Որոնք նոյնիսկ՝ երբ ջլկաս, այլեւս քեզ գաղտնօրէն

Եւ կամ ի լուր աշխարհին չեն ենթարկեր կասկածի:
 Կեանքը կ'ըլլայ այսպէս հեշտ. մահն ալ նոյնիսկ սիրելի.
 Բաժանումներն ողբալի չեն ցաւցըներ քեզ այլեւս:

Հռն կը գըտնես հայրըդ որ, առանց մընաս բարովի,
 Մահը տարաւ, ու մայրիկդ՝ որ դարձաւ տունն իր վըստահ.
 Եւ փոքրիկ քոյրդ որ առջիդ մահուան խորհութդը բացաւ.

Սիրելիներըդ բոլոր՝ նետուած մահուան մութին մէջ:
 Լինելու ես անպայման, որպէս զի վախս հեռանայ
 Մեռնելու ցաւ ամոքի. եւ չլթովի կեանքն ունայն:

ԱՆԵԼ

THE ETERNAL HOMELAND

by
Hovanness Shiraz

Let the world and the stars listen,
 If that horrific disaster occurred,
 If the rivers reversed their flow and
 The sun fell from the sky,
 If the seas clashed and dried up,
 If the ashen stars fell, and
 The awestruck desert spoke,
 If the deep, bottomless canyons
 Devoured the eternal thrones of proud Massis,
 If all the deadly comets
 Struck this ancient globe, and
 The heart of the universe stopped beating,-
 Death shall never visit my homeland,-
 For she bore the phoenix,-
 Eternity dreamt her, and
 She wove eternity's speech.

*Translated from the Armenian by
Marzbed Margossian*

ՅԱՀԵՐԺԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Զօն Հայ սերնդի դալար ծիլերին
Որ կառչած մնան բուն արմատներին

Թող ձայնս աշխարհն, աստղերն իմանան՝
 Որ թէ պատահէր աղեսն այն դժնի
 Թէ գետերն առնեն յետադարձ հոսանք,
 Թէ արեգակը երկնքից ընկնի,
 Թէ քախուեն ծովերն ու դառնան ցամաք,
 Թէ մոխրանալով աստղերը քափուեն,
 Թէ անապատը զարհուրած՝ խօսի,
 Թէ խոր-վիրապի երախը սուզուեն
 Յաւերծ գահերը խրոխս Մասիսի,
 Թէ ողջ մահարեր գիսաւորները
 Զարկուեն հինաւուց այս հողագնդին,
 Թէ տիեզերքի սիրտն էլ դադարի, -
 Դարձաւ մահ չի գայ իմ հայրենիքին, -
 Նա մայր բռչունն է փիւնիկեան մոխրի. -
 Յաւերժութիւնն է նրան երազել.
 Նա յաւերժութեան բարբառն է հիւսել ...

ԳԻՐՅԸ

4+3+4+3

Այս գեղատիալ հատորին, որ մենք Աշխարհ կ'անուանենք,
Եթէ էջերն, քերթիկներն հոգածութեամբ քդրատենք,
Պիտի յստակ մենք կարդանք իմաստութիւնն ու արուեստն
Յօրինողին, որ ընդ միշտ զայն կը կռիկ, կը ձեւէ:

Պիտի գտնենք ուժն Անոր, որ ամէնէն վայրագ ուժն
Անգամ կարող է զսպել, նախախնամող իր հոգին
Տարածելով ամենուր, արդարութիւնն իր նոյնալիս
Ամէն էջին յայտնըւող, որ ամէնէն ըմբռուտին
Անգամ պիտի չը խնայէ, պարագայքն ինչ էլ լինեն:

Բայց մենք յիմար, մանուկ խեռ, հաճոյք կ'առնենք՝ գունաւոր
Մագաղաքէն. ու ոսկը տնրեւնըրէն. ու սիրուն
Բոժոժաւոր ժանեալէն, անտեսելով ամէն ինչ
Որ լաւագոյնն է գուցէ, եւ առանց մեծ Գըրողին
Իմաստը խոր, իսկական, ըմբռնելու, տեսնելու.
Կամ՝ երբ բախտով, միտքը մեր կեդրոնանալ կարենայ,
Պատկեր մըն է՝ կը տեսնենք, ուրուագծուած՝ լուսանցքին:

Ուիլիլմ Տրամընտ Օֆ Հոքհօրնուըն

Թրգմն. Շէն-Մահ
24 Դեկտեմբեր 1994
Էջմիածին

THE BOOK

Of this fair volume which we World do name,
If we the sheets and leaves could turn with care,
Of Him who corrects and did it frame,
We clear might read the art and wisdom rare;
Find out His power, which wildest powers doth tame,
His providence extending everywhere,
His justice, which proud rebels doth not spare,
In every page, no period of the same.

But silly we, like foolish children, rest
Well pleased with colored vellum, leaves of gold,
Fair dangling ribbands, leaving what is best,
On the great Writer's sense ne'er taking hold;
Or if by chance we stay our mind son aught,
It is some picture on the margin wrought.

William Drummond Of Hawthornden

ԱՍԴԱՅԻՆ ԵԹԵՐ

Մոգական լապտեր... լուսինն այս գիշեր
Խաղաղ կը ցարէ արցունքի բիւրեղ.
Ինձի կը թուայ կարծես երէկ էր
Եկայ այս աշխարհ արցունքի մը տեղ....:

Լուսնի աչքերէն շիթերը անսեղ
Մանանայի պէս կը հոսին վարար...
Չիւնի պէս ձերմակ լուսամուտէս նեղ՝
Կամուրջ կապեցին երկինք ու աշխարհ....:

Կամուրջ կապեցին հոգիս ու եթեր
Բիլ արցունքներու լոյսերով վարար,
Հոգիս տունին լուսինն է լապտեր,
Իսկ աստղերը լոյծ' արցունքի կայծեր....:

Հարուատ է հոգիս, հարուստ այս գիշեր.
Աշխարհիկ գանձեր այնտեղ չեն շողար...
Ո՞վ է ունեցած աստղային եթեր
Իր հոգիին մէջ, զոր չի տար աշխարհ....:

ԲԱԳՐԱՏՈՒՄԻ

ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Բ. ՄԱՏԵԱՆԻ ՔՆԱՐԱԿԱՆ ՀԵՐՈՍԸ

Կեցութեան ողբերգականութիւնը Նարեկացին ընկալում է որպէս սեփական ողբերգութիւն: Նրան ցնցում է խախտուած Աերդաշնակութիւնը՝ լինի զգացմունքների ու գիտակցութեան մէջ, բնութեան երեւոյթներում, թէ տարրերի համամասնութեան մէջ եւ հասարակական կեանքում: Ողբերգութեան ծանրութեան կենտրոնը, այսպիսով, իրականութեան մէջ է, երկրային ոլորտում եւ ոչ թէ նրանից դուրս: Ներհակ ուժերից ծնուած այդ ողբերգութիւնը ոչ միայն իրական է ու ճշմարիտ, այլև յաւիտենական է եւ համամարդկային: Նարեկացու առաջին իսկ պահատանքներից մէկը կեցութեան այդ ողբերգականութիւնից ազատագրու ելու աղերսանքն է, ուր ամէն մի տող, ծաւալելու դեպքում, կը դառնար առանձին դրամայի հիմք ու հենք:

Մի եղեց անպտուղ ի փոքր վաստակոյս՝

Իրը ապաչան սերմանող անբերի երկրի:

Մի լիցի ինձ երկնել, եւ ոչ ծնանել,
Ողբալ, եւ ոչ արտասուել,
Խորհել, եւ ոչ հառաջել,
Ամպել, եւ ոչ անձեւել,
Ընթանալ, եւ ոչ հասանել,
Ինձ ձայնել, եւ ֆեզ ոչ լսել,
Պաղատիլ, եւ անտես մնալ,
Կողկողիլ, եւ ոչ ողորմիլ,
Աղաչել, եւ ոչ ինչ աւգտել,
Զոհել, եւ ոչ նեններել,
Զինակ տեսանել, եւ դատարկ ելանել:

(Բան Բ, գ)

Հակադրութիւնների այս ձեւը ոճի խնդիր չէ, այլ ինքնադրսեւորման պահանջ: Եւ Նարեկացին յանախ է դիմել այդ եղանակին: Մատեանը հակադրութիւնների միասնութիւն է՝ ինքնածաղկման ցածրակետից մինչեւ մարդու աստուած ացման բարձրակետը: Հակասութիւնները կարող են հալուել ու ծուլուել լոկ աստուած ային սիրոյ քուրանների հրում: Մինչ այդ հերոսին մնում է տառապանքը, մաքրուելու համար եռալու տեղատուութիւնն ու մակրնեացութիւնը:

Իրը ի քրայս ընտրութեան փուրոյ քոյ սիրոյ՝

Հանապազ եռամ եւ ոչ երբեք մարզիմ,
Միշտ խառնիմ զուգիլ եւ ոչ եւս
միանամ:

(Բան ԿԹ, ա)

Սա զուտ գեղեցիկ խօսք չէ, այլ բանաստեղծի ներաշխարհի բնական անդրադարձը: Մենքը մաքրում է զղչման արցունքով, ինչպէս ժանգը՝ հրով: Հանգիստ կարող է լինել միայն աստծու հետ գտած հաշտութեան մէջ, իսկ այդ վախճանակետին հասնելու համար պիտի անդուլ բարձրանալ՝ հոգեպէս լուսաւորուելով: Ամէն ինչ գեղեցիկ է գեղեցիկ նպատակի յարաբերութեամբ: Մոմը կոչուած է լոյս տալու: Այն պիտի վառուի, այրուի, սպառուի, լոյս դառնայ եւ որքան շոայլ՝ այնքան գեղեցիկ: Հոգին կոչուած է աստուածանալու: Նա պէտք է յաղթահարի մեղքի դիմադրութիւնը, ինչպէս բոցը՝ մոմի նիւթը: Դիմադրութեան յաղթահարման այդ ընթացքը Նարեկացու համար տիեզերական երեւոյթ է, եւ ամէն ինչ իր մէջ ունի թէ իր խաւարը եւ թէ իր

լոյսը: Պատահական չէ, որ Նարեկացին յաճախ է դիմում ծովի պատկերին՝ իր հոգու խոռվեները առարկայօրէն ցոյց տալու համար: Փոքորիկը մաքրում է ծովը, տառապանքը՝ հոգին: Կեանիքը ծով է, մարմինը՝ փոքորիկի մատնուած նաւակ, որի մէջ ալիքների անվերջ գրիներից տատանում է հոգին: Զարգացնելով պատկերը՝ Նարեկացին ալետատանութիւնից անցնում է ալեկոնութեան, նաւակից՝ նախն, տագնապած երերալուց՝ յանկարծահաս խորտակմանը: Իր յոյսը նա դնում է երկնային բարի նահապետի վրայ՝ վերստին նորոգուելու եւ երկնային խաղաղ հանգրուան հասնելու համար: Պահի յարաբերութեամբ, սակայն, փոքորիկն ու նաւարեկութիւնը անցեալ են, յոյսը՝ հեռանկար, մինչդեռ իրականը խորտակուած հոգին է, որ «ողորմագին բաղծանաւէ հեծէ» (Բան ԽԵ, գ):

Քնարական հերոսի ողբերգութիւնը միայն իր մէջ չէ, իր եւրիւնից: Նրա բարոյական անկման մէջ մեծ տեղ ունի հասարակական միջավայրի արտաւորութիւնը: Նարեկացուն յատուկ է քննադատական թեժ կիրքը: Նրա ատելութեան եւ սիրոյ նժարները զուգակոռում են իրար, բացասականի մերժման ուժը համարժեք է դրականի հաստատման նրա ուժին: Նա վարաբետօրէն է գծել ժամանակի հասարակութեան բոլոր դասերի ու դիրքի մարդկանց պատկերասրահը՝ մարգարէի անշառութեամբ նշանակելով նրանցից հրաքանչիր արատն ու ապականութիւնը՝ իրբեւ սեփական անձի այլակերպութիւն: Զկայ մէկը, որ բարձր լինի իր դիրքից՝ իրբեւ մարդ: Նրանից ամէն մէկը ներկայացնում է սեփական պարտաւորութեան յեղաշրջուած պատկերը: Մշակը ծոյլ է, մարտիկը՝ անպատրաստ, պահապանը՝ մատնիչ, խորհրդատուն՝ նենգ, պատուիրակը՝ բանագանց,

գանձապահը՝ երկմիտ, առաքեալը՝ խոռվարար, իշխանը՝ տիրադաւ, արքան՝ տարագիր, բագաւորը՝ անարգ, կայսրը՝ հոգեկործան, դատաւորը՝ աչառու, զօրավարը՝ զրկող, քահանան՝ անարժան, պաշտօնեան՝ հարրեցող, վաճառականը՝ շուայտ, հարեւանը՝ չարախոս, բարեկամը՝ գժուուած, հարուստը՝ ժլատ, աղքատը՝ հպարտ: Ո՞ր մէկը բուևս: Ինչպէ՞ս կարող է այդ բոլորը մտածող մարդու համար, առաւել եւս զգայուն բանաստեղծի համար չդառնալ մշտական երկիրի, ցաւի ու հոգի, տագնապի ու զգուանքի պատճառ ու առիթ: Այլազան ապրումների այդ համապատկերը՝ Նարեկացին տալիս է մանրամասների մի համադրութեամբ, ուր քննարական հերոսի մէջ յառնում է բոլոր ժամանակների մարդը՝ հոգու յարատեւ տագնապով ու տուայտանելով.

Եթէ զինուոր տեսանեմ՝ մահու ակն ունիմ,

Եթէ պատգամաւոր՝ խստութեան,

Եթէ մասնագէտ՝ մուրիակի կորստեան,

Եթէ աւրինաւոր՝ անիծից,

Եթէ աւետարանական՝ փոշոյ ոտիցն բաւրափելոյ,

Եթէ բարեկրաւ՝ յանդիմանութեան,

Եթէ ապառում՝ կակծման:

(Բան ԽԳ, գ)

Կարելի՞ է արդեօֆ լաւ բան յուսալ այդ հասարակութեան մարդուց: Ու՞մից կարելի է յուսալ փրկութիւն: Ու՞մ կարելի է դիմել՝ հարազատի՞ն, որ մատնուած են նոյն ցաւ ու դաւին, իշխանների՞ն, որոնց բարիքներն անցաւոր են իրենց նման, թէ՞

Առ բագաւորութիւնս աշխարհի արդեաւ,

Որք զմահացուցանելն միշտ արուեստաւորեն, բան զկենագործեն:

(Բան ԾԱ, ա)

Եւ բնական է, որ Նարեկացին դիմէր Աստծուն եւ աղերսախառն պաղատեր-

Հայեա'ց, տէր, ողորմութեամբ ի
պատկեր վշտաց դասնութեան
թագմավտանգ կրիցս կարեաց, զոր
հանդէպ քո տարածանեմ,
Կցորդակից լեր քժշկապէս,
Եւ մի ի խոյզ ընտրութեան կոչեր
դատաւորաբար:

(Բան ԻԳ, թ)

Թւում է՝ այստեղ պիտի աւարտուէր
հերոսի ողբերգութիւնը, սակայն այս
անգամ էլ նա ալեկոծւում է այն
գիտակցութիւնից, որ Քրիստոսն աշխարհ
էր եկել իր փրկութեան համար, տառապէլ,
անարգուել, փշէ պսակ ընդունել, խաչուել
ու արիւն էր հեղել, մինչդեռ ինքը
փոխանակ հետեւելու նրան, հայեացքը
յառելու երկնքին, ընդհակառակը,
«անասնական գետնաքարշութեան սողոնյ
սահեցմամբ կամաւ» (Բան ԼԲ, թ) հակուել
է երկրին եւ երկրայիննին: Նա գիտէ, որ
Աստուած մարդուն ստեղծել է կատարեալ,
նրան օժտել է հինգ զգայարաններով,
բանականութեան ձիք է պարգևել, որ նա
իմաստասիրաբար նանաչէր իր արարչին,
մինչդեռ ինքը, անապատի ցիոների նման
կորացել է դեպի երկիր.

Ով յիմար, զիա՞րդ քեզէն կորացար
յերկիր,

Զաստեացս միշտ հոգացեալ
դիպուածս՝

Ընդ ցիոս անապատականս
համարեցար:

(Բան ԽԶ, թ)

Զոպանեան իրաւամբ նշել է, թէ
Մատեանում կան «էջեր, ուր Շեխսպիրի
հով մը կ'անցնի» (8): Եւ իսկապէս,
Նարեկացին եւ Թեխսպիրը մօտենում են
իրար՝ մարդու նկատմամբ ունեցած իրենց
հայեացքներով: Նարեկացու հերոսը ողբում
է, որ օժտուած լինելով բանականութեամբ՝
ինքը դասուած է անասունների շարքը
(«Եւ ի բանականութեանն՝ ընդ անասունս
դասակարգեալ, Եւ զազիր գարշութիւն՝

ընդ գոյութեանն շարամանեալ» – Բան ԻԳ,
թ): Շեխսպիրի հերոսը՝ Համլետը, նողկում
է մարդուց, որ «Խոհականութեամբ կար-
ծես մի Աստուած», իրականում սակայն
դարձել է միայն իր կրթերի գերին՝
«Անասուն միայն, ոչինչ աւելի»(9):

Անտարակոյս, նա, որ մեզ ստեղծեց
այս լայն հանճարով,

Դեպի ետ նայող եւ դեպի առաջ,
Զպարգեւեց մեզ այնպիսի մի մեծ
ընդունակութիւն

Եւ աստուածանման բանականութիւն,
Որ նրանք անպէտ բորբոսնեն մեր
մէջ(10):

Մարդն արժանի չէ իր կոչմանը:
Նարեկացու համար մեղքն է, որ խախտել
է նրա ներդաշնակութիւնը եւ նա
տարութերում է անվերջ չարի եւ բարու
հակամարտութիւնից եւ քանի դեռ չի
փարուել Քրիստոսի իդեալին՝ պիտի լինի
բարոյապէս բերի ու թշուառ: Շեխսպիրի
համար մարդու բարոյական նկարագիրը
աղնատուած է մարդու յարաբերութեամբ:
Նա այն չէ, ինչ բուում է: Ողբերգութիւնը
ծնւում է իրականութեան մէջ հումանիստական իդեալի հաստատման
անհնարինութիւնից:

Մարդկային հոգու իր
նանաչողութեամբ Նարեկացին հասնում է
հոգերանական այնպիսի
բացայայտումների, որոնք իրենց
համամարդկային նկարագրով նրան
դարձնում են սերունդների յաւիտենական
ուղեկից: Նրա Մատեանը ինքներգութիւն
չէ, անձնական նակատագրի ողբերի երգ
չէ, սակայն քնարական հերոսի
անհատականութեան գծման մէջ ապշեցնում
է Նարեկացու ապրումների, յոյզերի եւ
զգացմունքների անձնամետ հնչերանքը:
Մարդկային ներաշխարհի բարդ ծալքերը
նա ներկայացնում է իբրև սեփական
էութեան արգասիք: Կամենալու եւ
կարենալու, ցանկութեան եւ նրա

իրականացման միջեւ ընկած է պայքարի ու մաքառման մի դժուարին նանապարհ՝ պայմանաւորուած մի կողմից մարդու իր իսկ բնութեամբ, միւս կողմից՝ հասարակական միջավայրով:

Քանզի կամելով ուժգինս ընթանալ՝ ընկլայ սաստկապէս,

Ցանչափն ձգտի՝ իմոյն ոչ հասի,

Ի մեծագոյնն ամրառնալ՝ աստուստ գլորեցայ,

Ցերկնային ուղւոյն՝ անդնդոց մատնեցայ,

Ի զգուշանալն առաւել՝ յաւէտ վնասեցայ,

Ցանարատն պահիլ՝ մանր խորտակեցայ,

Կարծելով ընդ ահեակն մրցիլ՝ յաջն գրեցի,

Ի զերկրորդն խուզել՝ զնախնին կորուսի,

Ի խնդիր սակաւում՝ ի կարեւորացն գրկեցայ,

Ի յուխտին պահել՝ դաշինն դրժեցի,

Առ սովորութեանն կտրիլ՝ կորուսիչն գտի,

Ի փոքունցն փախուցեալ՝ մեծամեծացն մատնեցայ,

Զոր ես ինքն ինձէն ստեղծեալ՝

Չարաչար դատախազ անձին կարգեցի:

(Բան ԾԵ, զ)

Այստեղ ամէն մի տող կարող է հնչել իրեւ թեւաւոր ասոյր: Հազուագիւտ վարպետութեամբ նարեկացին ջնջում է դարերի անջրապետը: Նրա քնարական հերոսի ապրումները համահնջուն են այժմէականութեանը, այսօրուայ ապրումներին: Խոհա-փիլիսոփայական ընդգրկման լայնութեանն այստեղ ներդաշն է խօսի յուզական եղերերգական շնչին: Քնարական հերոսի հոգին ալեկուտում է յարատեւ խոռվից: Դա չարի դէմ մաքառող բարու մաքրող ուժն է, որ ծաւալութեալ

բանաստեղծի յոյզերից՝ համակում է ընթերցողին:

Նարեկացու խօսքը հիմնականում ուղղուած է Աստծուն, իրականում՝ մարդուն: Այն ամէնը, ինչ գեղեցիկ է ու վեհ, նա մարմնաւորում է Աստծու՝ որպէս մարդկութեան յաւիտենական իդեալի մէջ: Քնարական հերոսի ձգտման բարձրակշն էլ այլ բան չէ, քան աստուածանալ, Աստուած իսկ դառնալ: Բայց դա միայն մարդու նպատակը չէ, այլև հենց Աստծու: Աստուածորդու՝ Քրիստոսի առաքելութիւնը իմաստաւորուած է հենց այդ խորհրդով՝ մարդուն ցոյց տալ նրա սատուածանալու ուղին: Արարածի թերութեան համար նարեկացին պատախանատու է համարում նաև Աստծուն: Նա չի կարող մոռանալ մարդուն եւ իր սիրուց ու շնորհներից զրկել նրան: Երէ մարդը բարոյապէս կատարելագործութեալ մօտենում է Աստծուն, ապա Աստուած իր հերթին մօտենում է նրան: ՉԼ^ո որ Աստուած բնակում է հենց արդարների հոգում: Մարդը Աստծու տանարն է, ինիգնը՝ աստծու ներկայութիւնը: Աստծուն չի կարող է փնտուել այլ տեղ, քան մարդու մէջ, նրա հոգու պատկերի մէջ: Եւ բանաստեղծը համոզուած է, որ մօտենալու եւ լոյսին մերձենալու այդ նանապարհին կայ այն ըդալի պահը, երբ մարդը կարող է հասնել իր իդեալին, ճուրուել նրան, դառնալ մի եռթիւն, մի անմահ ու աստուածային բնութիւն:

Միստիկական այդ գաղափարն է, որ դարեր շարունակ սերմանել է Քրիստոնէական վարդապետութիւնը: Այս գաղափարը, սակայն, ունի նաև իր բանական եւ զուտ մարդկային բացատրութիւնը: «Մարդը դեռ չգիտեր - զրել է էնցիլսը - որ ինքն երկրպագում է իր սեփական եռթեանը եւ աստուածացնում է այն իրեւ մի ինչ-որ օտար եռթիւն»(11): Այս, նարեկացին չէր կարող

մտածել, թէ ինքը երկրպագում է մարդկային օտարուած էռութեանը։ Նրա համար գերագոյն գոյը Աստուած է։ Բայց նա հաւատում է, որ մարդը կարող է հասնել իր աստուածային իդեալին, կարող է աստուածանալ։ Նարեկացին աստուածային վեհն ու կատարեալը փոխանցում է մարդուն եւ մարդու մէջ գեղեցիկը, նշանարիտը, բարին ու արդարը քարձրացնում է աստուածայինի աստիճանի։ Խոստվանելով մարդու մեղքերը, նա ճգտում է լուսաւորել հոգին, աստուածային շնորհների արժանանալ՝ կատարելագործուելու եւ աստուածանալու համար։ Կատարելութեան ճգտման այդ անվերջ ուղին միայն իր երազանքը չէ, այլեւ համայն մարդկութեան։ Եւ սրբազն մի երկիւղածութեամբ ու հպարտ արժանապատուութեամբ քանաստեղծ դիմում է Աստծուն։

Եւ զոր ահաւորն է ասել, կարգեմ աստանաւր,

Ցիշատակ եղեալ մեծիդ երախտեաց՝
Աստուած իսկ լինել ընտրութեամբ
շնորհին

Եւ ընդ հաստողիդ միանալ՝ տէրունի
մարմնոյդ ճաշակմամբ

Եւ ընդ լուսոյդ կենաց խառնութեամբ . . . (Բան ԾԲ, գ)

Աւելի հեշտ է զգալ Նարեկացուն, քան մեկնարանել։ Աստուածանալու այս գաղափարը յատուկ է միայն միշնադարին։ Նա տեղ չունի ոչ անտիկ եւ ոչ էլ Վերածնութեան դարաշրջանի գրականութեան եւ արուեստի մէջ։ Նարեկացու քնարական հերոսի ներաշխարհի քացայատման պարուս խտացուած է մեղքի գիտակցման, զղման եւ քաւելու ճգտման մէջ։ Նարեկացին արբնացնում է մարդու խիդելը, քացում է նրա հոգու աչքը՝ սեփական հոգու, հետեւարար եւ մարդկութեան հոգու, պատկերն ու եռութիւնը տեսնելու եւ

զգալու համար։ Կատարելութեան հասնելու այս ուղին անհատի համար սահմանափակուած է կեանքի տեւողութեամբ, բայց յարատեւ մարդկութեան համար։ Մարդկային քարոյական կատարելագործման այդ ճգտումը նարեկացին քանաձեւում է դարի կրօնափիլիսոփիայական ոգով։

Ցուս'ա յԱստուած, խոստվան լեր նմա, եւ նա հոգայ վասն քո։ (Բան ԽԴ, թ)

Նարեկացու այդ հաւատը ներթափանցուած է կատարեալին հասնելու անբեկանելի յոյսով։

Տաւենե'ա զկեալս կորուսելոյս վերնականացն պարերգութեամբ . . . (Բան ԽԸ, ա)

Նարեկացուն պէտք է հաղորդակցուել նրա անմիջական ու յուզական քանաստեղծականութեան ընկալմամբ։ Կրօնաստուածարանական, վերացական, միստիկ խորհրդածութիւնների շերտը աւելի շուտ պատկանում է նարտասանութեան եւ քարոզի, քան քանաստեղծութեան ոլորտին։ Անհենարին է կարդալ Նարեկացուն եւ չհամակուել ինքն իրենից քարձրանալու, ազնուանալու, գեղեցկանալու վսեմ խոհերով եւ զգացմունքներով։ Նարեկացին մեծ ագոյն հումանիստներից մէկն է համաշխարհային գրականութեան մէջ։ Անսպառելի է նրա ստեղծագործութիւնը, եւ իր իդեալի նման նա սերունդների համար պիտի լինի ու մնա'.

Անմատչելի հեռաւոր եւ անընդմիջելի մերձաւոր (Բան ԽԳ, ա)

Խոր ու տեսական է եղել Նարեկացու ազդեցութիւնը։ Զկայ հայ նշանարիտ մի քանաստեղծ, որին դիպած չլինի նրա հանեարի լոյսը։ Բաւական է ասել, որ ոչ մի հայ գրող հայոց լեզուի հարստութեանը չի տիրապեսել այնպէս, ինչպէս Նարեկացին։ Ոչ մի հայ գրող չի հասել համամարդկային նրա ընդգրկման

լայնութեանը, խորութեանը եւ քարձութեանը: Թէեւ իր քարոյական անկատարութեամբ մարդը հակադրուած է Աստծուն, սակայն նարեկացու Մատեանում հաւատի ու կասկածի, յոյսի եւ յուսահատութեան, սիրոյ եւ ներման բոլոր փորձառութիւնների միջով անցնում է մարդու քարոյական ինքնակատարելագործման եւ Աստծու հետ միաւորուելու, աստուածանալու գաղափարը:

Երկարատեւ ու քարդ է եղել հոգեւոր եւ աշխարհիկ գրականութեան սահմանազատման ընթացքը: Նարեկացին այդ սահմանարաժանի մեծագոյն դեմքն է հայ գրականութեան պատմութեան մէջ: Եւ որքան էլ զարմանալի՝ նա մնաց անըրկնելի եւ չգերազանցուած: Նրա բնարական հերոսի մէջ մարմնաւորուած է ոչ միայն դարաշրջանի մարդը՝ իրրեւ հաւաքական անհատականութիւն, այլև բանաստեղծի կերպարը՝ իրրեւ նոր ձեւաւորուող անձնաւորութիւն: Նարեկացու համար որքան կարեւոր է, թէ ինչ է աշխարհն իր համար եւ ինքը՝ աշխարհի, նոյնքան էլ կարեւոր է, թէ ինչ է Աստծուած իր համար եւ ինքը՝ Աստծու: Մատեանի միասնութեան առանցքը կազմում է մարդու ինքնակատարելագործման եւ հոգու փրկութեան գաղափարը: Նարեկացու հանճարը սակայն ընդգրկել է իր դարաշրջանի գեղարուեստական համապատկերը: Նա խորապէս գիտակցել է իր Մատեանի խորհուրդն ու նշանակութիւնը: Ժամանակի ըմբռնմամբ՝ այդ իմաստն ու խորհուրդը հանգում էր մարդու աստուածանալուն, նոր ժամանակների իմաստաւորմամբ՝ մարդու մէջ մարդկայինի յաղթանակին եւ նրա քարոյական վերափոխմանը: Մեղքի խաւարը հոգուց վանելու եւ աստուածային կատարելութեան լոյսին ձգտելու քարոյագիտական հայցակտից Գրիգոր Նարեկացուն գուգահաւասար է միայն Ալիգիերի Դանտեն:

ԱՂԲԻՒՄՆԵՐ ԵՒ ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 8.- Ա. Զոպանեան, Երկեր, էջ 272:
- 9.- Վ. Ծեխսպիր, Ընտիր Երկեր, Երեւան, 1964, հ. 1, էջ 63, 124:
- 10.- Նոյն տեղում, էջ 124:

Աւելորդ չեմ համարում գուգադրել Երկու հատուած՝

ՆԱՐԵԿԱՑԻ. Ահա ի ի յոտս տանողական Կրողաց Երկուց միակցորդ խորհրդականաց, Ըստ ձեւոյ հրեշտակի կառուցար, Երբ ի բոլիչս բեւոց կրկնարար քազկաց վերատանողաց՝

Յաշխարհն հայրենական հայել. Ով յիմար, զիա՞րդ բեզեն կորացար յերկիր Զաստեացս միշտ հոգացեալ դիպուածն՝ Ընդ ցիոս անապատականս համարիցար: Երբ զերագ քազմարերանեան ի յաշտանակի մարմնիդ հաստատեցաւ գլխոյդ բոլորութիւն,

Զի եւ այսու ի յաւրիմակէն շնորհէ մի աւտարացիս:

Զաստուած տեսանել եւ զմնացականացն իմաստասիրել:

(Բան ԽԶ, թ)

ՆԵՐԱՊՈՒՐ. Ինչ հրաշակերտ է մարդը: Որչափ ազնիվ է նրա դատողութիւնը: Որչափ անսահման են նրա ընդունակութիւնները: Կազմուածքը եւ շարժումը որչափ քարեձեւ եւ հիանալի: Կաց ու նիստով կարծես մի հրեշտակ: Խոհականութեամբ՝ կարծես մի Աստծուած: Աշխարհի գեղեցկութիւնը: Կենդանիների կատարելատիպը:

(«Համեստ», արար 2րդ, տեսարան 2րդ)

11.- Կ. Մարքսը եւ Ֆ. Էնգելսը արուեստի մասին, հ. 1, էջ 558:

Ա. ՂԱԶԻՆԵԱՆ
(Հարունակելի)

Տրըար Տունի և Տունակիր

- * -

Խոր Ֆլեշայիան պաշտուացման առաջ խոր պատճեն պատճեն կազմակերպություն է գործում և պահպան է համարվում ուղղակի:

Եթեաւ: Ժամանակակից, ու առ ասկան այս ամենը առ կամաց 6 մոլորդ է առ ամենը և Առ այս ամանը են բարեկարգություն:

Տիֆլ. Պարա Մաքարանիա և Կոմիտաս:

Այս ինք-Ամէս չափով ցամաց Տունակիր և Համանական իր առաջ է առ այս ամանը և Տունակիր, ամենամաս Ա. յանդարակ առաջ Տունակիր Տունակիր - Գանձարաւարություն:

1. - Չափ 4 + 3: Ենթա Շաբաթ:

Վայ կերպեաց Լուս կամ

պատահակ ամանայ և

երկու առաջ կամ եւ ուրիշ:

Կերպ առ կամ շաբաթ:

26x. Բր. 336c. լը 403:

Ըստ շաբաթ և պատահ առաջ պատճենը իր Տունակիր Պատճենը կամ այս կամ կամ:

Ի կամ այս այս պատճեն:

Այս այս այս պատճեն:

Ի կամ այս պատճեն:

26n. ԲԻ- 1193, Տ. 3.3:

2

Խոկերի ըստ Լուսավիճակի:

2.- Զարդ հ+4: Տեղայի բարեկան:

Հայութ յիշեցնել զերպատի մաս:

Կայութ առ ամառ կ'արձակի մաս:

Բայց առ ամառ կ'արձակի մաս:

Այլ զերպատի մաս չընկածի մաս:

26n. ԲԻ- 135, Բ. Դ. 13 ամ:

Հայութ առ ամառ պատճեն պատճեն:

Առ ամառ կ'արձակի մաս չընկածի մաս առ ամառ առ ամառ:

Յանուար դաշտ գոյացածի մաս:

Այ օրինակ մաս քայլութեալ մաս:

Արդյուն յանուար մաս կ'արձակի մաս:

Տեղ մաս Յանուար մաս առ ամառ մաս:

26n. ԲԻ- 135, Բ. Դ. 14 ամ:

3.- Զարդ հ+4: Տ. Առ ամառ:

Հայութ առ ամառ պատճեն:

Կ'արձակ առ ամառ պատճեն:

Կ'արձակ առ ամառ պատճեն:

Կ'արձակ առ ամառ պատճեն:

26n. ԲԻ- 1193, Տ. 360:

Հայութ առ ամառ պատճեն պատճեն պատճեն:

Տառապէ Թէկ-ըստ զնիւածիւն Արևել ուսէ:

Յու մու կյալ բայրէ Պէքան Պ,

շաղագութէ այզի Տարուհաւաւ,

և անտես չէ Գայսդէ Եւ Լ.

և Զատկուայ Մէջ վահաշայաւ:

2օր. Բդ. 1193, Խ 625:

4.- Հայք 4+4: Ջ. Ենքնադյու:

Որ ի օրուա ժամանակիւն,

յեր յարա-թնաւ ամ- պակիւն Բ,

ի Զիթեան հաշեր Երիւն:

ուսուրեաւ զայս Արքանակիւն:

2օր. Բդ. 2009, Խ 1589:

Տայշ Վահակ Բայ խաղան ս-կի Ան Ան, Տէ

Գրեթե Բայիցի Անդի Հայութ Էլիւն ուսէ:

Անունիւն Տիշաւ ու ունաւ

այս զիտիւն Պայս Եց ի շաբար,

Ռեփոր կենաւ ու բաւ յանար,

առանձազիւն Տաճայ հաւար:

2օր. Բդ. 1193, Խ 834:

5.- Հայք 4+4: Ջ. Ենքնադյու:

Վարդութիւնաւ Արքիւ Արքիւն:

ու զաւը ու զաւիւն հիւն:

Կուր թշ արքանցից յահագի ովկի չ:

Լեզուն գործակ արեւա ռայտ չ:

26-րդ 1193, կը 816:

Եղբ շարուջ և բայցուա զար ամայսր յախե-
ռա-թամար չազ սկսէ Շամի եղան պահան :

Տաշան լանջ ուն ամբայի չ:

Օրեն զիւ շինաւ աւահաւ զանի չ:

Դու կերակրե՞ս զամե ռես մաւ թաւ չ:

Ար համարով առ թեղ ռի սի չ:

26-րդ 1193, կը 766:

6.- Զար 4+4: Դա Երանեալ:

Յայտն դըր եաւ ժէ կապարի չ:

Մ շայտ մասր թէ պատմե յի թէ չ:

Տարդարեկի ժառ ժիշ յարդի չ:

Առանդեւ ու զէ զէ ձարի չ:

26-րդ 135. պր. 220 ա.

Երանեալ պերքին յաղի իւր - 32 - պաշ-
կոր ու խաղ ամբէ Զիւր - Զիւր Հայն բայս-
րանով իւր հերեալ անանչ յաղի:

Տը շաբին շէ շէ հաւարարի չ:

Դիւրիս ժէ Տիւր Եղի ի զեն ի թէ չ:

Կու լուհանար հէ անդի յի չ:

զի՞ ի պարունակ աշխարհից:

26n. թ. 135, թղ. 204 ս.

7.- Ըստ 4+4: Զ. Եղբական:

Ալեքսանդր պատրիարք կրթ և կառավագ,

Քերակարայ ե ինանդի մա,

ըստ Պատրիարք յէպրե Բաղդադի,

ի մարտելայ ջանդակակ աւստ:

26n. թ. 135, թղ. 243 ս.

Տայր խաղաղ իս ուզ և գրած Արքայուն-

կատ կայիս: Արքայա պատրիարք և Տէ գրած պեր-

գիւ ուղիւ ի այս:

Եղիսաբետ պատրիարք աւստ,

յափուհանաւ զանանեց զէմանի զէմանի:

Եղիսաբետ պատրիարք աւստ,

յափուհանաւ կայ զանանեց աւստ:

26n. թ. 1193, հ. 571.

8.- Ըստ 4+4: Զ. Եղբական:

Այս արքել եաց զեր ժողովանուր,

յեւ լի զշակ հայ աւստ:

այս յանանուր կարու անուր,

զափան յեւ հայ լիյա եղիսաբետ:

26n. թ. 135, թղ. 281 ս.

Եղիսաբետ այլ քաղցր շամա և այլ բարձրացուցիչ գույն պահ է Բաղդադի քաղցր զարգացելու համար դաշտ:

Մի զամանակ ի շեման առ Շահ Հաջ այս զամանակ այս հայութեա, և այս այս հայութեա այս հայութեա, և այս այս հայութեա այս հայութեա:

26m. դր. 1193, էջ 451:

9.- Հայութ 4+4 = Դ. Եղիսաբետ:

Խանական ի փերաց աշխատ, ի փերաց աշխատ և այս հայութ, ի փերաց աշխատ և այս հայութ, ի փերաց աշխատ և այս հայութ, ի փերաց աշխատ և այս հայութ:

26m. դր. 135, դր. 374f:

Հայութ Բյուզանդիական հայութ պահանջական առ Բյութ երան ժամանակ:

Խանական ի փերաց աշխատ և այս հայութ, ի փերաց աշխատ և այս հայութ:

26m. դր. 135, դր. 178a:

10.- Հայութ 4+4 = Դ. Եղիսաբետ:

Տերփ-սեղանի խոյր էլուրով
զատկա հիմ է բուժութեաց քայլուց,
աչուկ շառաւ, աչօշիւ,
զիւ ձրից լույս է բարդութեաց :
26n. պ- 135, բջ. 334թ :

Բարձր ծառի լոռոցիտ հիմնաց ուղարկութեաց պահանջանառ ամի և խաչ ամայ զերպի գառակ :

Անունածառի բարձր պահանջանառ .
անունածառ յինդ զըսքուր,
յինդ անունածառ լուսաւուր,
անունածառ կա սպանաւուր :
26n. պ- 135, բջ. 97թ-98ս :

Ա. - Զար 5+6: Զ. Հազարաւուր :

Երշանի վեհակ հոյտ ի Տասպանի և սարի,
սարի մուտ զենանի օշանդ յարտ վասույ:

26n. պ- 135, բջ. 348ս :

Ծառի լոռոցիտ հիմնաց պահանջանառ, խաչ ամայ զերպի գառակ Բարձր պահանջանառ ամայ խաչ :

Կորի զար առա ու Հազար ծաղկու
զարութեաց դա աշան զարի լույսեաւ :

26n. պ- 135, բջ. 37ս :

12.- Հարդ 5+6: Զ. Շաքենթ:

Խոյս ամսաբառ գովածի և կրտսերակերպ լուսական մասնակի և
բարեկա զբանքութեա պահանջ կա-սի և:
26m. Բդ- 2015. Կ 665:

Հարդեա առաջ գուշա կապա պահանջ են
և առաջ պահանջ առանձին բառապահեր առաջ
բարեկա զբանջ և:

Խոյս ամսաբառ և կրտսերակերպ լուսական մասնակի և
յերկան ամսաբառ առաջ կապա լուսական մասնակի և:

26m. Բդ- 1193. Կ 591:

13.- Հարդ 5+6- Զ. Շաքենթ:

Խոյս ամսաբառ և կրտսերակերպ լուսական մասնակի և
զարդարական ամսաբառ առաջ կապա լուսական մասնակի և:

26m. Բդ- 135. Բդ. 11, Հ:

Եղանակ յաջանար պահանջ են
և առաջ պահանջ առաջ պահանջ առաջ պահանջ և:

Բառ ամսաբառ և կրտսերակերպ լուսական մասնակի և,
յաջ պահանջ ամսաբառ և կրտսերակերպ լուսական մասնակի և:

26m. Բդ- 1193. Կ 139-140:

14.- Հարդ 7+5: Գեղար Շաքենթ:

Կապա արքան և այս պահանջ արքան և
զարդարական ամսաբառ և կրտսերակերպ լուսական մասնակի և:

26n. Բր. 135, թշ. 289ա :

Հետեւու չափ, առա հերթական և պարզ, ասկէ բարի
բառ-բառեր ու բառեր պարզացնելու համար :
Այս համարը չէ եղանակ յայտ առաջ առաջ, առաջ առաջ,
կամ շատ է գերեց հաշվու իւ իւ կամ իւ իւ իւ :

26n. Բր. 1193, թ. 546 :

15.- Զարդ Դ+Դ = յակարակ ծաղկական պլազ :

Առաջը ճաշակ պէտք է յայտ առաջ առաջ →
Տակար առաջ առաջ Տակար առաջ →
Եղանակ առաջ առաջ լուսակ, առաջ առաջ →
Տակար առաջ առաջ առաջ առաջ →

26n. Բր. 1521, թշ. 320ա :

Պարզեցնել ենթի զարգացնել հերթական չափ
ու այս բայց առաջ առաջ պարզաբանելու համար :
Առաջը ճաշակ պէտք է յայտ առաջ
իւ իւ իւ իւ իւ իւ պէտք պէտք պէտք
յայտ պէտք պէտք պէտք պէտք պէտք
առաջը լուսակ Տակար, առաջ առաջ :

26n. Բր. 135, թշ. 96ա :

Պարզեցնելու համար առաջ առաջ առաջ առաջ
և առ առ առ պարզաբանելու համար առաջ առաջ առաջ
պարզ համար պարզաբանելու համար առաջ առաջ առաջ
առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ :

Է. Ար. Ծագախն:

ԳՐԱԿԱՆ

ԱՂԱՍԵՒԻԻ ՀՈՎՃՈՒՄ

ԵՐԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԱԶՆԵՐ

Նոր տարին ինչքան մօտենում էր, այնքան աւելի պինդ էր ճգում Դիլիջանի լեռների եւ անտառների ձիւնապատ անդորրը: «Գնանք ու գոնէ երեք օրով կտրուենք քաղաքի աղմուկից, տօնական եռուզենից, հոգսերից», մտածում երազում էինք բոլոր:

Մենք տասներկու հոգի էինք եւ մեզանից ամէն մէկը իւրովի էր ծրագրում ենորեայ երանութիւնը: Մէկը օրինակ, որոշել է «հերն անիծել» անենութեան ու քննել, քննել ու էլի քննել: Միւսը, որ նրբորդ մասի քնակիչ է, մտադրուել է ամէն օր մտնել անտառ ու շնչել այնքան, որ քոյքերի վերջին քջիզն անգամ լիանայ օգննով, ծառ ու ծաղկի, հնած խոտի անտառում մոլորուած-մնացած քուրմուներով: Երբորդը, որ սասունցի է ճագումով, որոշել է մենմենակ նստել լեռների դէմ եւ ազատ շարունակել ներքին ուղեւորութիւնը դէպի չտեսած «էրգիր», դէպի Ծովասար, դէպի Մարաքուկ: Խակ Պարզ լին, Հաղարծին ու Գոշավան գնալ ցանկանում էին բոլորը:

Եւ այսպէս երանութեան երազ-ներ ...

Դեկտեմբեր 29ի յետ միջօրէ: Մանկական աշխուժով լցում ենք աւտորուս ու նանապարհում: Սեմյոնովկա գիտի 2045 մետր բարձրութիւնից սկսում է Դիլիջանի դժուար, վտանգաւոր վայրէջքը: Ձիւնապատ, տեղ-տեղ սառցակալած նանապարհ, իրար վրայ ծալուող սրանկիւն Կեռմաններ եւ մազից կախուած

տագնապալի զգացողութիւն: Լուս, անծպտուն, ինքնամփոփ ենք բոլորս: Տարօրինակ է վտանգի սուր զգացողութիւնը մեզ տարանցատում է իրարից, վերածում ինքն իր մէջ կծկուած-պրկուած առանձին անհատների, որոնք կանգնած են նակատագրին հանդեպ բոլորովին մենակ, անօգնական . . .

Փոքր Սեւանից ոչ հեռու, Ծովագիտի տակով, Դիլիջան տանող փապուղի են փորում: Ուղեւորների կեանքի ապահովութեան տեսակետից նոյնիսկ ուշացած անիրածեշտուութիւն է դժուար ու մեծածախս այս փապուղին, բայց, երբ մտածում եմ, որ նոյն այդ ուղեւորները պիտի զրկուեին նանապարհի տասներկու կելումետրանց այս հատուածի նախաստեղծ գեղեցկութիւնները դիտելու վայելքից, կարծես խամրում է ոգեւորութիւնս ...

Ապահովութիւն, գեղեցկութիւն ու վայելք: Ո՞ր մէկին տալ նախապատուութիւնը ... Ուշացած երկընտրանք է: Կեանքն արդէն իսկ կայացըք է վճիռը: Փապուղու շնարարութիւնն ընթացքի մէջ է:

ԴԻԼԻՋԱՆ

Աղստեւի տաքշունչ հովտի հարաւարեւմուտքում, Փամպակի լեռնաշղթայի լանջին եւ Բաղումի լեռների հմայուած, անկշտում աչքերի դէմ անփոյք նազանենով փոռւել է Գուգարաց աշխարհի Գեղեցկուեին՝ Դիլիջանը:

Մեղմանուշ բաւշեայ կլիման, հովասուն անտառները եւ սառնորակ աղբազըրերը Դիլիջանի համար շատ վաղուց ապահովել են առաջնակարգ առողջարանային քաղաքի նախանձելի համրաւ: Կլիման

առանձնապէս նպաստաւոր է բոքախտի բուժման համար, եւ հենց այդ պատճառվ էլ այստեղ գործում է մասնագիտացուած հիւանդանոցների, առողջարանների, հանգստեան տների ընդարձակ մի համակարգ, ուր անուանի շատ հայ գիտնական բժիշկներ պայքարում են մարդկային գարուն հասակի ոխերիմ թշնամի բռքախտի դեմ:

Ամէն անգամ որ լինում եմ այստեղ, յիշում եմ հայ բնարերգութեան հանճարեղ ծլարձակումներ, Պետրոս Դուրեանի, Մեծարենցի, Պեշիկլթաշլեանի, Տերեանի, Մատթէոս Զարիփեանի եւ այլոց եղերական նակատագրի մասին: Նրանք այս օդի, չըի հոգատարութեան կարօտ՝ խամբեցին-հանգն կեանքի վաղ Գարունքին, զրկելով մեզ, ո՞վ գիտէ, թէ ինչպիսի անանց Գեղեցկութիւններից ...:

Հստ 1826 բուականի արխիվային մի տուեալի, Աղստեւի հովիտ եօրանասուն երկու գիւղերից մէկը՝ 60 տնանց Դիլիջանը, այսօր դարձել է շուրջ երեսունինգ հազարանց ժամանակակից մի քաղաք, որի անու զարգացման ներքոյ հնարաւորութիւնները խոստանում են աւելի բարգաւան ապագայ:

Իսկ, այնուամենայնիւ, ինչո՞ւ Մեծ Հայքի Վարաժնութիւն Գաւառի պատմական Հովքը՝ Հայոց Արշակունի թագաւորների ամառանցն ու որսատեղին, այժմ կոչում է Դիլիջան: Այստեղ, լուծ-մնջացած պատմութեան փոխարէն խօսում է Գուգարաց աշխարհի հարուստ աւանդապատումը:

Ժամանակին այս կողմէրում ապրել է Դիլի(*) անունով մի հովիւ, որին, մի օր,

անտառում պատառուել են գայլերը: Խեղն մայրը, սարերն ընկած, փնտոում է կորած մինութարին եւ աղիոդորմ ձայն տալիս. «Դելի՛, ջա՛ն Դելի՛, ջա՛ն» ... Այդ օրուանից հովուի անունով վայրը կոչւում է Դիլիջան կամ Դիլիջան:

Առասպե՞լ է: Անշուշտ: Եւ սակայն, երկնամերձ լեռների, անդնդախոր ձորերի ու քաւ անտառների այս աշխարհում առասպելը այնքան հեռու չէ կեանքից, ինչպէս կեանքը՝ առասպելից:

Պատմեմ ողբերգա-զաւեշտական մի դէպէ, որ պատահել էր Դիլիջանին կիալ-կապած Գալավինո Գիւղում, մեր այնտեղ գալուց մի քանի օր առաջ եւ դեռ պատմում էր բերնե-բերան:

- «Սարաեալանջի ա՛յ են անտառամիջի տանից - ձեռքով ցոյց է տալիս պատմողը - Համրոն Գիշերը դուրս է գալիս, որ գնա ոտաց նանապար(***): Անլոյս ձմեռ գիշեր է լինում: Լաւում է կոնու նղնեց: Համրոն մօս է գնում ձայնին եւ տեսնում, որ գոմից դուրս է գալիս մի աժդահա՝ թեւատակին նղնդան կոնի: «Անարուր» (****) գողը բռնուել էր յանցանքի վրայ: Համրոն արխային մօտենում է թիկունքից, ձեռը դնում է աժդահայի ուսին եւ կծու ամօրանք տալիս: «Ախրե՛, եղ հայվանին դո՞ւ սա պահել, որ թեւատակ առած տանում ես: Բա՛, եղ շնո՞րհէ է: Բա՛, գետինը, չե՞ս մտնում են եղ բոյ ու բուսաբով ...»:

Գիշերային խոր լոռութեան մէջ լսում է խուլ դմրոց: Դուրս են թափում տնեցիք ու տեսնում, որ Համրոն ուշագնաց փռուել է գոմի առաջ: Զանգում են հիւանդանոց: Շուազօգնութեան մեքենան նրան հասցնում է Դիլիջանի քաղաքային հիւանդանոց: Երբ

(*) քաջ, անձուրաց

(**) գուգարաց

(***) անամօք

ուշգի է գալիս, պատմում է եղիլութիւնը: Պարզում է, որ «անարուր» գողը եղել է վիրխարի արջ, որ անտեղի ամօքանիքի ու կոնհն ձեռքից խելու անիրաւ փորձի համար մի բերել ապտակել է Համբոյին ու տարել նղնդան աւարը:

ՀՈՎԻՏԸ

Հայկական լեռնաշխարհի հիւսիս-արեւելքում, քաւ անտառների, քաւշեայ քացատների, ձորակների, կիրճերի, խոխոչուն գետ ու գետակների, աղրիւր-ակունքների հովասուն մի դրախտիկ, որը նախախնամութիւնը աշից ու ահեալից պատել-պաշտպանել Բաղումի, Փամբակի եւ Արեգունի լեռների ջլապինդ քազուկներով: Հովտի կենտրոնով հոսում-գնում է անուանատու Աղստել Գետը: Փոքրիկ է, վտիտ, քայց ժիր ու գործուն, յարատել յաման: Դարերի նամբորդ: Նայիդ իրեն ու նայիր դարերի տեսանենք քացած իր հունին ... Այդ հունով, միաժամանակ, կարող է անցնել իր նման հարիւր Աղստել ... իսկ ինքը դեռ իրեն քարե-քար տալիս է, գոռում-գոչում է, քար ու ժայռ պոկրում ու քշում-տանում է ... քայց, ո՞վ կ'ասի, թէ ի՞նչ է ուզում ...

Ճիշտ հայի բնոյր: Եւ ինչո՞ւ զարմանալ: Զէ՞ որ նա գալիս է 3001 մետր բարձրութիւնից բեժ լեռան ամենաբժիշխան մայու սրտից ...:

Ահ՛ա, դրախտակերպ այս հովիտը եղել է հայկական քաղաքակրթութեան հնագոյն օրբաններից մէկը, ուրկէ Աղստելի ջերերին համբնքաց հոսել է, գիտութեանց եւ արուեստների քազմանիւդ գետը: Քաղաքակրթութեան պատմութիւնն այստեղ սկիզբ է առել մեգալիթեան դարաշրջանից, շարունակուել է ողջ միջնադարում եւ շարունակում է այսօր: Ցայտնաբերուել-գրանցուել են աւելի քան 300 մեծ ու

փոքր յուշարձաններ: Պեղուել են Մեգալիթեան ու Կիլոպեան դամբարաններ, աւելի ուշ շրջանի բերդ-ամրոցներ, իշեւանատուն եւ շիրմակորող: Գտնուել են պատմամշակութային արժեք ներկայացնող իրեր:

Աղստելի հովտի քացօղեայ քանգարանում պահպանուող առաւել արժեքաւոր յուշարձաններից են Հաղարծնիքի և Գոյավանիքի վանական համալիրները, իսկ պաշտպանական բնոյրի շինութիւնների կուռ համակարգից՝ «Աղջկա բերդ», «Թանիկ ամրոց», «Աշոտ Երկարի Բերդը», «Բերդաքարի ամրոցը», «Ուզուն Թալայի Դիտարանը» եւ ուրիշներ:

Հաւատք, մշակոյք եւ պաշտպանութիւն՝ հայկական քաղաքակրթութեան երեք քաղաքուցիչներ: Հաւատքի եւ հանճարի տքնանել-տառապանենով ստեղծածը պահել-պաշտպանել կեանքով: Անողոք այս օրինաչափութիւնը չէր կարող շրջանցել ու չի շրջանցել հովտի հայութիւնը, քան զի ամենակործան չարիքը մէկ՝ քարար-սելչուկների, մէկ՝ մոնղոլների, մէկ՝ Օսման ու մէկ բուրքմէն ներխուժողների կերպարանքով եկել հասել է նաեւ այստեղ, յաղթահարելով ամենի լեռ նաշդաններ, ահալի ճորեր, դժուար կիրճեր, քաւ-մուր անտառներ:

Բնութիւնը նոյնպէս իր սկանչելի յուշարձաններն եւ ստեղծել Աղստելի հովտում: Ցիշեմ Վարդան Զօրավարի կաղնին: Աւանդութիւնն ասում է, որ Վարդան Մամիկոնեանը Խաղիսաղում տարած յաղթական նակատամարտից տուն դարձի նանապարհին, այս կողմերում մի ակնաղրիքի մօտ կարնատել հանգիստ է տալիս իր գօրքին: Մեկնումից առաջ զօրավարը շրջակայ շինականների խնդրանենք մի կաղնու ծառ է տնկում հենց աղրիքի մօտ: Պարսիկ ներխուժողների դէմ տարած յաղթանակի այդ կանաչ յուշակորողը տարերի դէմ խիզախնել ու

ապրել է մոտ 1500 տարի եւ միայն վերջերս կայծակը, այս էլ քանի՛ երորդ անգամ, զարկել-տապալել է այն: Այսօր, սակայն, Վարդան Զօրավարի տապալուած կաղնու տեղում հայրենի հողի մէջ իր արմատներն է տարածում մի նոր ծառ՝ Մարաշախտ Յովհաննէս Բաղրամեանի կաղնին, իրեւ խորհրդանիշ հայ ժողովրդի յաւերժութեան:

Բացի պատմա-նարտարապետական յուշարաձաններից հովտում ստեղծուել են դաւանարանական, գրական, գիտական, պատմարանասիրական, իրաւագիտական, երաժշտական յուշարաձաններ որոնք մեծարժեք ներդրումներ են հայկական ժաղաքակրթութեան պատմութեան մէջ եւ որոնց կ'անդրադառնանք իրենց տեղում:

ՈՒ՞Ր Է ԳԵՏԸ ԵՒ ՈՒ՞Ր Է ԱՆՏԱՌԸ

Գալավինո հասնելու յաջորդ օրը առաւտեան արեւոտ անո՞ւշ եղանակ է: Արեւի շեկ շողերի տակ պեծին տուող լեռ, անտառ ու ճոր գգում են, կանչում: Անդիմադրելի է հրաւերը: Մենք տեղն ու տեղը որոշում ենք այցի գնալ Հաղարծին ու Գոշավանք, մուծել մեր «հարկ հոգեկանը» ինչպէս ճեւակերպեց Թալինցի Պավլոս Մբանչելին:

Մեկնելով Դիլիջանից, մենք Աղստեւի Հովտով շարժում ենք Հիւսիս-արեւելք ուղղութեամբ: Մօտ 10 կիլոմետրի վրայ, թեքում ենք ճախ: Ակսում է վերելքը անտառի միջով, Հաղարծին Գետի ափին զուգահեռ: Բայց, ո՞ւր է գետը եւ ո՞ւր է անտառը ... Զինի փափուկ, սպիտակափառ սաւանը համատարած հոգածութեամբ պատել-պարուրել է ամէն քան եւ մրսած-փշաքաղուած մի արեւ նայում-հսկում է ներմակ անդորրը համայնի:

Խորունկ, խորհող լուսիւն: Երկունքի սարսուն կայ օդի մէջ ...:

Երեւի մի այսպիսի պահ էր, երբ վանահայր քանաստեղծ ու երաժիշտ Խաչատուր Տարոնացին, ներշնչուած՝ մագաղարին յանձնեց մեր շարակնոցի մարգարիտներից մէկը՝ «Խորհուրդ Խորին»ը ..

«Զարչարանօֆ քո սուրբ Միածնիդ նորոգեցան արարածք ամենայն.»

Եւ մարդն վերստին անմահացաւ, զարդարեալ ի զգստս անկողոպտելի»:

Այս երկնքին եւ երկրամերձ այս դարավանդին վայել վսեմական խորհուրդ ու խոհեր ... Ահ՛ա, ինչով է նա զարդարել մենութեան իր խուցն ու ժամանակը, օրինեալ այս հողի ու գովեալ այս երկնքի քանաստեղծ զաւակը, երբ աշխարհում միջնադար էր, հաւատագննութիւն ու խարոյկնե՛ր ...

«Խորհուրդ Խորին, անհաս անսկիզբն ...»:

Երկունքի սարսուն կայ օդի մէջ:

ՀԱՄԱԼԻՐԸ

«... ու երկնքէն իջուցինք զայն ցող առ ցող, ամպ առ ամպ»
Կահան Թէքեան

Խոր անտառի մէջ, զոյգ ձորակների կազմած գեղատեսիլ դարավանդի վրայ, իրեւ բարձր պահած կանաչ սկոտեղի, տեղադրուած է Հաղարծնի վանական վեհաշուիք համալիրը: Հոգեւոր ուսումնագիտական կենտրոն, որ հիմնադրուել է ու գործել XII-XIII դարերում, ծաղկում է ապրել ու հոչակուել XII դարի Յօական քուականներից, քանաստեղծ-երաժիշտ Խաչատուր Տարոնեցու վանահայրութեան շրջանում: Նրա մասին ահա թէ ինչ է գրում Կիրակոս Գանձակեցին իր «Հայոց Պատմութիւն» աշխատութեան մէջ. «Եկեղեցու (Գոշավանքի) տօնախմբութեանը ներկայ էր նաև

Խաչատուր Տարօնեցի Սուրբ Վարդապետը, առաջնորդը Հաղարծին կոչուող Սուրբ Ուխտին. այր Սուրբ եւ հոչակուած գիտութեամբ, եւ մանաւանդ երաժշտական արուեստով: Նա պայծառացրեց Սուրբ Ուխտը, որը իր գալուց առաջ ամայի էր եւ խամրած: Նա Հայաստանի արեւմտեան կողմից քերեց խազը, մարմին տուեց իմաստունների ստեղծած անմարմին եղանակներին, որոնք մեր կողմերու տարածուած չեին: Նա եկաւ դրսից եւ սովորեցրեց շատերին: Իր ծանր տքնանեներից հանգստացաւ եւ ի «Քրիստո Հանգեաւ» այստեղ, եւ քաղուած է եկեղեցու արեւմտեան կողմը»:

Համալիրի կազմում են Ս. Գրիգոր, Ս. Աստուածածին, Ս. Ստեփանոս եկեղեցիները, երկու Գաւիթ, հայ աշխարհիկ նարտարապետութեան գլուխ գործոցներից սեղանատունը, աղօքարաններ, արքայական դամբարան, խաչքարեր, տապանաքարեր եւ պահպանուած 126 արձանագրութիւն, որոնք պատմում են մեզ հազարամեայ հնութեան, դեպքերի, իրողութիւնների եւ մարդկանց մասին, համեստ տնտես Սիմեոնից մինչեւ Բագրատունեաց Սմբատ եւ Գագիկ Մեծազօր արքաները, որ ապրել, ստեղծել ու երազել են այստեղ:

Ահա, օրինակ, Բագրատունի Գագիկ Թագաւորին վերագրուող մի եզակի արձանագրութիւն. «Մատանի մի էր ձորն Հաղարծնի. կառուցանելով վանքս այս, ես եղի ակն ի վերայ»: Համալիրի կառուցման պատմութիւնն, այսպէս, սկզբնաւորում է քանաստեղծական այս չենադ պատկերով, որում հանճարեղորէն ներդաշնակուել են բնութիւն եւ նարտարապետական կառոյց: Համալիրն այժմ ես դիտում եմ նրա բոլոր կողմերից, հեռուից ու մօտիկից, վերևից

ու ներքեւից, սակայն, հիացումիս սնդիկը ոչ մի չափով չի իշնում իր ամենարարձից ... եւ ընդհանուր, լիակատար այս դաշնութեան համայնապատկերում տանարը դառնում է անձեռակերտ բնութիւն, իսկ բնութիւնը՝ վեր ու վսեմ մի տաճար: Ո՞ւմ աչքն է կատարել ընտրութիւնը տեղի եւ ընտրութիւնը կառոյցների տեղապատշան ոն ու ձեւերի: Ո՞ւմ հանճարն է չենադ այս դարաւանդը դարձրել երկնի եւ երկրի հանդիպման խորհրդաւոր սրբավայր ...

Հրաշքն, ինչպէս միշտ եւ ամենուր, իրականացնուել է ժողովրդի հաւաքական հանճարի, հաւատքի, սիրոյ եւ գոհարերութեան վիթխարի գումարով, որի մէջ իրենց լուման են ներդրել եւ քագաւորը, եւ նարտարապետը, եւ պարզ շինականը եւ մօտակայ Արասանոր գիւղի համեստ քարհատները, որոնք անվճար հիմք են փորել ու քար հայրայթել իրենց քարհանքից. «Քրիստոս Աստուած ողորմեսցի Արասանորոյ քարհատացն, որ զտներոյս տեղս հատին ...»: Միայն այսքան՝ ողորմեսցի. եւ ամրող արածի համար լիուլի վարձատրուած են քագաւորից մինչեւ քարհատ:

«ԶՍիմէօն տնտես յաղաւքս (*)
յիշեսչիք»

«Ցիշատակն արդարոց օրինութեամբ եղիցի»

Հաղարծնի եկեղեցիներից մէկի գաւթի առաստաղի Հիւսիս արեւելեան անկիւնում, մի քարձաւանդակի շուրջը արուած արձանագրութիւն է: Քանդակը պատկերում է ձեռքին շերեփ բռնած մի մարդու, որը վանքի ծախսարար Սիմէօն տնտեսն է: Իր «Հոգոյ արդիւնքը» ամրողութեամբ վանքին նուիրած այս մարդը ի՞նչ է խնդրում ի

(*) աղօքների մէջ

«տրիտուր»: Խնդրում է, որ այս արանագրութիւնը կարդացողները իրենց աղօքներում յիշեն իրեն, իրեւ մի մարդու, որ պարկեշտօրէն է ծառայել սոյն հաստատութեանը:

Ով Սիմեօն, ազնիւ տնտես, ի՞նչ լաւ է, որ դու եղել ես, ծառայել եւ անաղարտ պահել ֆեզ վստահուած շերեփի պատիւր: Հաւատա՛ որ ֆեզանից մեկ հազարամետակ յետոյ էլ քո շերեփը կը շարունակի յուշել մեզ եւ սերունդներէն՝ մաքուր ձեռքի, արդար խղճի եւ ազնիւ ծառայութեան մասին: Ուստի՝ օրինութեամբ եղիցի յիշատակդ:

Սիմեօնը եզակի չէ վանքի արանագրութիւններում: Ահա՝ գոհար Խաբունը. «Առաջի միարանութեան ետու, զիմ այգին եւ շինական մի ազատ ...»: Ահա՝ Կիրակոս Վարդապետը, որ վանքին է նուիրել ծո գիրք, 'օ դահեկան, մեկ հատ շուրջառ եւ շինել է եկեղեցու դասը: Այսինքն՝ տուել է ինչ որ ունի: Մի ոմն Արտավազ տուել է «զիմ հոգոյ արդիւնս». դարձեալ՝ ինչ որ ունի: Այսպէս են վարուել ոմն Սեւադա, ոմն Աշխարքել, ոմն Ապստամբ եւ շա՛տ ու շա՛տ ուրիշներ:

Դժուար է առանց յուզմունքի կարդալ Աղասեւի հովուում ապրած ստեղծագործած տաղանդաշատ նարտարապետներից Միիթար Հիւսնի ծերութեան քողած արանագրութիւնը. «Ես Միիթար Հիւսն աշխատող այս եկեղեցւոյ ի մանկութենէ ի ծերութիւն շինեցի զունա աղաւթից^(*), իմով որդիացեղովս^(**) Յովհաննէսի եւ ստացայ ինձ յիշատակ Բ^(***) պատարագ»:

«Ի մանկութենէ ի ծերութիւն» տարած դժուար աշխատանքի դիմաց տարին երկու անգամ պատարագի եւ յիշատակութեան

իրաւունք. տուածի, ստացածի զգացած գոհունակութեան միջև ընդունուած չափի ու կշռի ինչպիսի՝ խախտում ... Բայց, այս խախտում-անհամաշափութեան մեջ չէ արդեօֆ մեր հոգեւոր հաստատութիւնների դարաւոր գոյութեան ու մշտական պայծառութեան բուն գաղտնիքը:

Ոչ, Սիմեօնները եզակի չեն եղել: Նդել է կամաւոր ինքնազրկումի եւ սիրայօժար նուիրաբերման անվերջ, բազմամարդ մրցութիւն, որի բոլոր մասնակիցները յաւերժ յիշելու արժանի յաղթողներ են, եւ Սիմեօն տնտեսը, եւ Միիթար Ճարտարապետը, եւ ոմն Ումեկը, եւ ոմն Սիրաշակը, Ովասափը, Նազխարունը եւ անուանի ու անանուն, արանագրուած ու շարձանագրուած բազմաբազում ուրիշներ:

Զեր բոլորի յիշատակը, ազնիւ երախտաւորներ, օրինութեամբ եղիցի ի կատարած աշխարհի:

Երախտագիտութեան այս մրմունչն իրեւ աղօք մեր շրբներին, մեկնում ենք Հաղարծնից դեպի մի այլ սրբավայր, դեպի Գոշավանք:

ԳԵՏԻԿԻ ԱՓՈՎ

Անցնելով Աղասեւի մեջքին բամփի պէս նստած կամրջով, իսկոյն միրնուում ենք Տանձուտի կիրճը: Մեր առաջ լեռնան եւ անտառի հոծ, բարձրաբերձ պատնէշն է, որ առաջին պահ, բւում է անանցանելի:

- Ոչի՞նչ, (ասում է վարորդը) Գետիկը կը տանի կ'անցկացնի մեզ:

Նև իրօք, Գետիկ իր մանրիկ, անու՛շ կարկաչով ուղեկցում է մեզ եւ դարձարձիկ իր ափով տանում վե՛ր, աւելի վե՛ր,

(*) աղօքի տուն, եկեղեցի

(**) ինձ որդի դարձած

(***) երկու

մինչեւ հասցնում է գոշգիս ու գոշավանք:

Առաջին հայեացքից զարմանք է յարուցում տեղի ընտրութիւնը: Մեր ավտումբենայի հետքով-փնջոցով քարձրացած այս լեռան ուսին քարձրացել-քազմել է նոյնքան ամենի ուրիշ մի լեռ եւ քարձրանալիս իր ոտնաքարի հետքն է քողել նրա ուսին ...: Եւ ոտնաքարի մեծ ութեամբ այդ տեղի վրայ էլ մարդիկ կառ ուցել են իրենց գիւղն ու վաճեցը:

Սակաւահող, սակաւազուր, դար ու դարեր վայրենարարոյ ներխուժողների, ալան-քալանի, գերեվարութեան եւ անմեղ նահատակութեան քատերաբեմ մեր երկրի պատմութիւնը չիմացող օտարերկրացիներ զարմացած՝ միշտ նոյն հարցն են տալիս,

թէ ինչո՞ւ հայերը իրենց խցկել են աշխարհից հեռու, այս բար ու ժայռերի նեղուածքի մէջ ...

Թեկուզ պատմես-քացատրես, փաստեր յիշես ու վկայութիւններ բերես, ի՞նչ պիտի հասկանայ անծայրածիր Ռուսաստանի եւ միշտ ապահով-անվտանգ Ամերիկայի քաղաքացին: Նրանք եւ աշխարհն ամբողջ այդպէս էլ չհասկացան Ղարաբաղցիներին, երբ սրանք իրենց 160 հազարով դիմադարձ կանգնեցին Ադրբեջանի 7.5 միլիոնին ...

Զհասկացան ու չեն հասկանայ, թեկուզ պատմես-քացատրես ու վկայութիւններ բերես:

(շարունակելի) ՍՍՐԳԻՍ ԵԱԳՈՒՀԵԱՆ

Ի ԽՆԴԻՐ ԱՆԳՏԱՆԵԼԻ ՀԱՅ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐՈՒԻ

Աւագ Ռւրբար՝ 1995: Երկրորդ օրն է Հալէպ այցելութեանս, քառասուն ուրտարիներու քացակայութենէս ետք: Վաղը, Առաջնորդարան՝ պիտի տեսնեմ քեմին առաջնորդը՝ Գերշ. Տ. Սուրէն Արքեպիսկոպոս Քարարոյեան, որուն անցեալ շարար ծանօթացայ Ս. էջմիածնի մէջ գումարուած Ազգային-Եկեղեցական ժողովին առիթով: Սրբազնը ճամրան իմ գրաւոր դիմումին վրայ Առաջնորդարանի իր մէկ պաշտօնեային միջոցաւ կարգադրութիւն ըրած էր իմ եւ երեցկնոչ Հալէպ օրեւանելու առնչութեամբ, եւ առ այդ տեղեկութիւն դրկած էր ինձ անյապաղ: Երէկ քարեկամիս եւ նախկին պաշտօնակիցիս Կարապետ Ճուհարեանի քնակարանին մօտակայ նորակառոյց Ս. Աստուածածին հայ Եկեղեցին գտնուեցայ այն պահուն երբ Ռուսլուայի արարողութեան յանգող ժամապաշտութիւնը սկսած էր:

Ինչ քազմութիւն դասին մէջ քաղցրագոյն երգող դեռատի մանչերու, եւ ի՞նչ խանդավառ, ինքնավատահ խումբ պատանի ուրարակիրներու՝ բեմին վրայ: Խոնուած ժողովութիւն մէջ եւ քահանաներու շարքին զիս - անսեմ եւ անմօրուս քահանայ - կը նանջնան եւ փսփութի նիւթ կ'ընեն նոր Գիւղ քաղի Զաւարեան Վարժարանի նախկին աշակերտներէն ումանք:

Վաղը Ս. Զատիկի նրագալոյցի արարողութեան եւ պատարագին դարձեալ երեցկնոչ հետ պիտի աղօքեմ այս քարաշէն, սիրուն եկեղեցւոյն մէջ: Սակայն այսօր Յիսուսի առժամեայ գերեզմանը այս կամ այն եկեղեցւոյն մէջ մեծարելու փոխարէն, որոշած եմ երբալ Հայոց Ազգային Գերեզմանատունը, փնտուելու կէս դար առաջ այնտեղ քաղուած հօրս գերեզմանը: Գիտեմ որ նոյն հոդին մէջ տարիներ ետք քաղուած մօրս գերեզմանին վրայ եւս

տապանակար դնել տուած էին Հայէպ մնացած երկու քոյրերս: Փոքր քրոջ նախան իր մահը դրկած մէկ լուսանկարը ապացոյց է թէ կողդ կողդի բաղուած են տապանակար կրող Աշնեան Աւետիս եւ Մարիամ: Միայն թէ այդ լուսանկարը հետս չեմ բերած նիւ նորքէն: Գերեզմանատան մուտքի պահակը անկարող է մեզի ուղղութիւն տալ: Կը ջանայ բացատրել որ Առաջնորդարանի տոմարներէն պէտք է ստուգեմ գերեզմանատան այն բաժինը ուր բաղուած են ծնողին եւ վարսուն մէկ տարի առաջ բառամեայ մահացած Վարուժան եղբայրս: Վայրի դեղին ծաղիկներով հասակ նետած խոտ մը ամէն կողմ ողողած է անցերը տապանակարերուն միջեւ: Քալելը դժուար է: Տեղ տեղ տապանակարեր խախտած, թեքուած դիրքով մնացած են, կամ կրադիւսով ծեփուածները մաշած կոտրտած են: Խմ պատանութեան սկիզբի շրջանի, նախ քան ամենակրտսեր եղքօրս մահը, գարնան Մեռելոցներուն հանելի էր պտոյտ ընել հայկական այս գերեզմանատան մէջ, որուն մօտ դաշտերէն կակաչներ կը բաղէինք, համտեսելով նոյն ատեն կարգ մը վայրի խոտեր: Հիմա, գրեթէ կէս դարու յաւելեալ խնողումէ ետք, հայկական այս մեռելաստանը այցելուին կ'ըսէ թէ քաղաքակրթութեան պահանջները գոհացնելու մտադիր չէ: Ազգը - կամ քաղաքը - բաւարար պիտնէ չունի իր մեռելները պարունակող այս տարածութիւնը մարդավարի, վայելուչ յարդարուած եւ մաքուր պահելու մարտահրաւերին դիմակալելու համար:

Կը փնտոենք, երբեմն մագլցելով փած քարերու վրայէն, երբեմն հրելով խիտ անած վայրի խոտերը: Կը փնտոենք երեխ՝ Կարապետ Ճուհարեան, երեցկինն ու ես, իրարմէ հեռացած, բափառելով այս բազմամարդ սակայն լուր գերեզմանատան մէջ: Կը կարդանք շատ մը տապանագիրեր,

տեղ տեղ նշմարելով նաև լուսանկարներ: Ահա փոքր անցքի մը եզերքը՝ կոթողի նման տապանակարը նրուսաղէմի ժառանգաւորաց Վարժարանի ուսուցիչին գրող-քննադատ Յակոր Օշականին՝ որ իր բափառական հայու բախտին անակնկալ մի դարձուածքով յանկարծամահ եղաւ Հայէպ 1948ին եւ բաղուեցաւ այստեղ: Խնչ զարմանք՝ Օշականի գերեզմանին կից, քրիստոնավայել ոնով շինուած նոր տապանակար մը կը ծածկէ հողը ժառանգաւորացի իմ դասընկեր եւ Տէր Զօրի հայ նահատակներու յուշարձանին բարերար Հայկագուն Գահվէնեանին: Հայկագուն Յակոր Օշականի պահանջած շարադրութիւնները կը գրէր շարաբէ շարաբ, սակայն չեղաւ մատենագիր, այլ շուկայի կեանքին անհրաժեշտ մետաղէ ծանր կշիռքներ շինող: Օդը կը դառնայ նեղացուցիչ այս յետմիջօրէին: Հասած եմ գերեզմանատան մի այլ մասը, ուր տապանակարերը համեմատարար աւելի վայելուց վիճակի մէջ են: Ահա ծանօթ անուն մը՝ Պարսումեան Գեորգ, Այնքապցի, առաջին ատենապետը հոգարարանութեան Զաւարեան Վարժարանի, որ դիրացուց նոյն վարժարանին մէջ ուսուցիչ վարձուիլս 1941ին վանքէն աշխարհ վերադառնակէն անմիջապէս ետք: Խնչակս պիտի գիտնայ մետաղի ծուլիչ Գեորգ Պարսումեան որ նշանար շինելու համար շարունակ կը գործածեմ 1954ին արոյրէ շինած եւ իր անունով փորագրած տիպը, զոր բարեկամի մը ձեռքով նուէր դրկած էր ինձի:

Այլեւս ուրիշ առիթի մը պէտք է սպասեմ, Առաջնորդարանի տոմարներէն անհրաժեշտ ստուգումը կատարելէ ետք, կրկին այցելել Հայէպի Ազգային Գերեզմանատունը, եւ առանց ժամավանառ ըլլալու գտնել իմ եւ կնոջս հարազատներու գերեզմանները: Մնողաց վեց զաւակներէն հինգը մեռած են: Առաջին երկուք՝ Եղեռնէն առաջ ծնած Ուրֆա, իրենց

դեռատի կեանքի շրջանին սնունդ առին Ուրֆայի շինչ օդէն եւ մաքուր ջուրէն։ Առջինեկը՝ Զապէլ, իր կեանքի վերջին խանինգ տարիները անցուց մշուշով հարուստ Սան Ֆրանսիսկոյի մէջ իր կրտսեր աղջկան խնամքին տակ, մեռաւ եւ բաղուցաւ այնտեղ անցեալ ամառ։ Զապէլի ծնունդէն եսք աշխարհ եկած Յակորնանը, Թրքական քանակ տարուած հօրմէն, եւ Քիւրտ հարեւանէ առեւանգուած քրոջմէն հեռու, 1915 շարագուշակ բուականին տեղահանուած մօրս գրկին մէջ կամ ուսին վրայ բռնեց Սիւրիոյ անապատներուն ճամրան։ Այնտեղ՝ անգտանելի կէտի մը,

անեռուն, անօրի, ծարաւ եւ յոգնած, Յակորնան պաղատեցաւ մօրս, մրմնչելով «զո՞յ, զո՞յ» եւ աւանդեց իր անմեղ, մանկական հոգին։ Մայրս զայն իր ձեռքերով թաղեց, անգտանելի վայր մը դէպի Տէր Զօր երկարող արեւակէզ եւ փշոտ ճամրուն վրայ։ Զատկի Մեռելոցի օրը, Հասիչէի ճամրով պիտի ուղեւորինք դէպի Տէր Զօր, ինքնաշարժով, կուշտ ստամբուսվ, եւ թերեւս անցնինք այն կէտէն, որուն մօտ է Յակորնան եղրօրս անգտանելի գերեզմանը, Խապուր գետի կից մարդկային անքաղ ոսկորներով հարուստ Մարքատէի դաշտերուն մէզ։

Տ. ԱՐՏԷՆ Ա. ՔՃՆՅ. ԱՇՃԵԱՆ

ԳՐԱԽՈՍՏԱԿԱՆ

ԱԶԳԱՊԱՏՍՈՒՄ Դ. ՀԱՏՈՐ Ա. ԳԻՐՔ

Երկսիւն 382 էջ պարունակող այս պատմագիրքը արդիւնքն է որպես բանասեր եւ հեղինակ տարիներէ ի վեր ծանօթ Դոկտ. Զաւէն Ա. Քինյ. Արգումանեանի յարատեր եւ նուիրեալ աշխատանքին, կատարուած մեծ մասամբ Ֆլորիտայի մէջ, ուր հեղինակը մօտ տասնամեակէ մի վեր կը ծառայէ իրրեւ ժրաշան հովի Ս. Դաւիթ Հայց. Եկեղեցւոյ (Boca Raton) եւ այլ նորակազմ հայ համայնքներու: Պատկառեի այս հատորի ծաւալին մասին լրիւ գաղափար կազմելու համար կ'արժէ գիտնալ թէ բուագրեալ էջերը կանխող 12 էջէ րադկացած բաժինը կը պարունակէ գնահատական էջեր Երուսաղէմի հայ Պատրիարք Ամեն. Տ. Թորգում Արք. Մանուկիանէն եւ Ամերիկայի Արևելյան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեանէն, որու հրամանով լոյս տեսած է մատեանը, որպես հրատարակութիւն հանգուցեալ Տ. Զգօն Եպս. Տէր Յակոբեանի կտակով հաստատուած հիմնադրամին:

Ազգապատումի Գ. Հատորը, մեծանուն հեղինակին՝ Մաղաքիա Արք. Օրմանեանի Պոլսոյ մէջ 1918ին վախճանելէն ինչ տարի ետք լոյս տեսաւ Երուսաղէմի մէջ 1927ին, Օրմանեանի արմաշական անդրանիկ ձեռնասունին՝ Տ. Բարգէն Եպս. Կիւլէսէրեանի «Հոգողութեամբ»: Այդ հատորը կ'ընդգրկէր 1809-1909 հարիւր տարիներու պատումինը, եւ գրուած էր այնպիսի ժամանակ մը երբ Օրմանեան ախորուած Երուսաղէմ եւ ապա Դամասկոս, դրկուած էր Կ. Պոլսոյ իր կարգ մը բղբածրաբներ եւ այլ աղքիւրներ օգտագործել կարենալու պատեհութենէն: ԱԶԳԱՊԱՏՍՈՒՄի Ա. եւ Բ.

հատորները հրատարակուած էին Պոլսոյ մէջ, Մեծ Եղեռնը կանխող այն տարիներուն երբ Օրմանեան հարկադրաբար դադար առած էր Կ. Պոլսոյ Պատրիարքի իր երկարամեայ պաշտօնավարութենէն:

Դոկտ. Հ. Զ. Արգումանեան, 1993 ամառը գրած իր նախագիտելիքին մէջ, հարկ կը զգայ բացատրել. «Ազգապատումի չորրորդ հատորի պատրաստութեան երբ ձեռնարկեցինք, ընդհանուր գործը երեք մասերու վերածեցինք, որոնցմէ առաջինը կը ներկայացնէ ներկայ հատորը: Այդ երեք մասերն են.

ա. Տ. Տ. Գերգ Ե. Սուրենեան (1911-1930)

բ. Տ. Տ. Խորեն Ա. Մուրատրէգեան եւ Տ. Տ. Գերգ Զ. Զերեբենեան (1930-1955)

գ. Տ. Տ. Վազգէն Ա. Պալգնեան (1955էն մեր օրերը):

«... Նկատի ունենալով որ «Ազգապատում»ի մեծանուն հեղինակը՝ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, որ իր երկրորդ հատորը հասցուցած է մինչեւ 1910, ինչ ինչ պատճառներով զանց ըրած է շարք մը նիւթերու, դէպքերու եւ դէմքերու շարադրութիւնը՝ Գերգ Ե. Կաթողիկոսի ընտրութիւնը նախորդող տասնամեակին պատկանող, մենք անհրաժեշտ նկատեցինք աւելցնել զանոնք 48 յօդուածներով, ու դասաւորել Մատքէոս Բ. Խոմիրլեան կաթողիկոսի անուան ներքեւ ...»:

Դոկտ. Զ. Արգումանեան այս հատորի պատրաստութեան համար օգտագործած է 90է աւելի աղքիւրներ որոնց մէկ տասներորդը՝ Անգիւրէն: Ասոնց ցանկը եւ նիւթերու ցանկը առանձին դրուած են

գրքի վերջաւորութեան։ Հասորը կը սկսի թիւ 3149 յօդուածով, որպէս շարունակութիւն Օրմանեանի ԱԶԳԱՊԱ-ՍՈՒՄԾԻ չորրորդ հատորի վերջին յօդուած ին։

Սկզբնական այն բաժնին մէջ որով հեղինակը կը շանայ ամրողացնել Օրմանեանի զանց ըրած նիւրերը, կը ծանօթանանք Մայր Արքոնի Գերգեան ձևմարանի եւ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան Արմաշի դպրեվանքի առաջին հունգերուն։ Օրմանեան կարեւոր դեր ունեցած էր երկուքին մէջ ալ։ Աւելին Օրմանեան իր Պոլսոյ Պատրիարք ընտրուելու նախօրեակին կը հանդիսանար Արմաշի «միտք» (3100) մինչ իր կրտսեր գործակից նոյնչ Վրդ-Դուրեան կը հմայէր ուսանողները որպէս Արմաշի «հոգին» (3101)։ Այս բաժնին մէջ կը տեսնենք ճարտարապես Թորոս Թորամանեանը առնչուած հնադարեան Զուարքնոցի կործանած տանարին, եւ Կոմիտաս վարդապետը առնչուած հայ եկեղեցւոյ ճայնագրեալ պատարագներուն եւ Պոլսոյ մէջ հայ տոհմիկ երգին։ Այստեղ կը տեսնենք ճնունդը «Լոյս» կրօնաբերքին, Մ. Օրմանեանի դասական դառնալիք ֆրանսերէն գրուած «Հայոց Եկեղեցին» գրքին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան։ Տակաւին՝ մահը բարերար Ալեքսանդր Մանթաշեանի, եւ ի հանդէս գալը նոր բարերարներու՝ Գալուստ Կիլպէնկեանի եւ Գրիգոր Նդիայեանի։

Տեղ մը հեղինակը կը ներկայացնէ Մ. Օրմանեանի Ազգապատումի Ա. եւ Բ. հատորները, որակելով զանոնք «նշանաւոր», «հեղինակաւոր», «անմահանուն» (3194)։ Հիացումով պէտք է դիտել թէ Օրմանեանի պատմագրութիւնը շարունակել փորձող Դոկտ. Արզումանեանը մի քանի հարիւր էշերու մէջ - հոգ չէ թէ տեղ տեղ կրկնարանութիւն ըրած - կրցած է տալ յստակ եւ հասկնալի ներկայացնումով, ճնունդը 1920ական թուականներուն Մայր

Ա. Եջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդին չեղեալ համարուած Պոլուժինիայի Սինոդին փոխարէն եւ Սիւրիա Լիբանանի մէջ նրուսաղէմի հայոց Պատրիարքութեան սեփական երեք տեսչութիւններու - Պէյրուր, Դամասկոս, Լաբաթիա - Սրբոց Յակոբեանց միարանութեան որոշումով փոխանցումը Կիլիկիոյ Կարողիկոսութեան տնազուրկ Սահակ Խապայեան Հայրապետի իրաւասութեան։ Այս բաժնին մէջ կը տեսնուի համայնապատկերը Օսմանեան Թիւրքիոյ հայարեակ քաղաքներու եւ գիւղերու մարդկային եւ մշակութային բնաշնչումներուն, ի լուր ջարդերու, ախորներու, նահատակութեան, հրկիզումներու եւ կործանումներու։ Հայերէն ձեռագիրներու հանդէպ մասնաւոր հետաքրքրութիւն ցուցարերող Տ. Զաւեն Արզումանեան մէկ կողմէ կը խօսի նդեռնէն առաջ հրատարակուած այս կամ այն վանքի հայ ձեռագիրներու ցանկի մասին, ապա կ'ափսոսայ Թիւրք բարբարոսներու կողմէ փնացումը հայ գրչագիրներու, վերջապէս գորգուրանքնով ներկայացնելու համար հրաշեռվ փրկուած սակաւարի ձեռագիրները որոնց շարքին Մշոյ Ճառընտիրը (3255)։ Այստեղ են Ապրիլեան նդեռնը իր ծրագրումով եւ գործադրութեամբ, երկար շարքը արեւմտահայ հոգեւոր եւ աշխարհական նահատակ առաջնորդներու, Հայաստանի հանրապետութեան հաստատման եւ անկումի պարագաներուն, յետ զինադադարի հայ ժողովուրդի միջազգային խորհրդաժողովներու հանդէպ յուսալիք կեցուածքը եւ ապա յուսախարութիւնը, որրահաւաքը, նդեռնէն վերապրոներու համար սարքուած վրանաքաղաքները, տարածուող հայ սփիւրքը, նոր եկեղեցիներու շինութիւնը, Հայ Միջին Արեւելքի եւ Եւրոպայի մէջ, նոր կրթական եւ մշակութային հաստատութեանց

կազմութիւնը ի սփիւռս եւ ի Սովետական Հայաստան։ Մատենագրութիւն սիրող հեղինակը ուրախութեամբ կը քուէ հրատարակութիւնը Գր. Նարեկացիի «Ողբերգութիւն» աղօրագրքի երկու ժամանակակից քարգմանութեանց, Սովետական Հայաստանի մէջ հայ լեզուի եւ մատենագրութեան վերաբերող կորողական երկեր շարադրող գիտնականներ Ստ. Մալխասան եւ Հրաչեայ Աճառեան, Մ. Արեգեան եւ Ցակոր Մանանդեան, Ժողովրդական արեւելահայ բանաստեղծներ Յովիհաննես Թումանեան եւ Աւետիք Խահակեան, եւ յարգուած արեւմտահայ գրողներ Վահան Թէքեան եւ Արշակ Ալպօյանեան։ ԺԹ. դարուն ընդհատուած ՍիՌՈՆ ամսագրի վերահրատարակութիւնը Երուսաղէմի մէջ 1927ին, Մ. Օրմանեանի Ազգապատումի Գ. հատորին եւ անոր «Խոհեմանական պայմանագրի մէջ, Մելքոնեան կրթական հաստատութեան հիմնումը Կիպրոսի մէջ Հ.Բ.Լ. Միութեան հովանաւորութեամբ, Համազգային Մշակութային Ընկերութեան գործումէութեան տարածումը Պէյրութի մէջ Նշան Փալաննեան ձեմարանի բացումով 1929ին, եւ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի ժամանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի վերածնունդը Եղիշէ Դուրեան Պատրիարքի եւ ուսումնապետ Բարգէն նպա։ Կիւլէսէրեանի առաջնորդութեամբ, նշաններ եղան որ հայ ազգը եւ կենացին տակաւին կային եւ պիտի մնային Մեծ Եղեռնին ետք։

Դուկտ. Զ. Արգումանեան այս գրքի նախագիտելիքին մէջ կը յայտնի իր յոյսը «որ հետագային մնացեալ բաժիններն ալ պիտի կարենանք շարադրել եւ հրատարակել»։

Առ այդ, մի քանի դիտողութիւններ եւ թելադրութիւններ։

Ներկայ գրքին մէջ մէկ էջի աւելի տեղ գրաւող Հայադաւան Հրեաներ յօդուածը (3201) աւելորդ է։ Ռուսական կայսրութեան օրենքով, Հայ եկեղեցւոյ արտօնուած չէր աւետարանչութիւն ընել։ Լոկ հայ եկեղեցւոյ պատմութիւնը եւ անոր ծիսակատարութիւնները սորվելով ունէ մէկը չէր կրնար իսկական հայադաւան Քրիստոնեայ դառնալ, առանց Աւետարանի ուսուցումները իւրացնելու։ Ադկէ զատ, յայտնի չէ թէ ըստ ձեւի «հայադաւան» դարձած այդ հրեաները ո՞ր մէկ դաւանութեամբ մեծցուցին իրենց զաւակները։

Երկրորդ՝ Եկեղեցականաց Մահեր (3364) յօդուածին մէջ յիշուած պէտք էր ըլլար 1913ի աշնան Վանի մէջ վախճանած Յովսէփ Արք. Սարանեանը որ մանաւանդ Ամերիկայի հայութեան համար կարեւորութիւն ունի իր անդրանիկ հոգեւոր հովիւի (1889թ.) եւ անդրանիկ եպիսկոպոսի (1898թ.) հանգամանքներով։ Յովսէփ Արք. Սարանեան Վանի առաջնորդական պաշտօնին վրայ էր երբ վախճանեցաւ յետ վիրահատութեան։

Դուկտ. Զաւէն Արգումանեան հայերէմի իւրայատուկ ոն մ՝ունի, որ տեղ տեղ կրնայ քծախնդիր ընթերցողը խրտչեցնել։ Զոր օրինակ՝ երբ եղելութիւն մը կը պատմէ բայերը գործածելով անցեալ ժամանակով, յանկարծ նոյն յօդուածին մէջ մնացեալ բայերուն ժամանակը կը փոխէ ներկայի։ Յայտնի չէ թէ այս ոստումները կ'ընէ դիտմամբ թէ անուշադրութեամբ։ Երկրորդ՝ երկար նախադասութեանց մէջ վերջակետի գործածութիւնը յետագելով կը կիրարկէ յարաբերական դերանունի յանախակի գործածութիւնը. այսպէս՝ տեղ տեղ կը տեսնէ ընթերցողը «որ», «որոնք» դերանուններով եւ «ուր» մակրայով իրարու կապուած եւ իրարու հետեւող նախադասութիւններ,

որոնք կրնային անշատուած ըլլալ
միջակետով կամ վերջակետով:

Լուսանկարներ, որոնց գործածութիւնը այս դարու առաջին տասնամեակի վերջատրութեան անհրաժեշտ չէ համարած Մ. Օրմանեան Սզգապատումի սկզբնական հասորներուն համար, ներկայ մատեանը մեծապէս պիտի նոխացնէին, անշուշտ միեւնոյն ատեն տպագրութեան ծախքը քարձրացնելով: Սակայն երբ նկատի առնուի քարտեզներու կարիքը, զանոնք գործածելը պերճանիք համարել կարելի չէ: Դոկտ. Զ. Արզումանեանի այս հատորով ներկայացուցած դէմքերն ու դէմքերը կը պատկանին ժամանակաշրջանի մը ուր մեծ թափ կ'առնեին տեղաշարժեր եւ փոխադրութիւններ, գիտութեան նուանումներուն հետեւանելով: Պայքանեան եւ Անդրկովկասեան պատերազմները հետեւակագօրքի եւ ճահարուներու մակարդակն անդին անցած էին: Շոգենաւէ զատ շոգեկառք կ'օգտագործուեր, հոգ չէ թէ Արեւմտահայատանի հայաշատ վայրերէն դէպի սպանդ կամ անապատ քշուող հայորդիները չորիէ աւելի արագաշարժ փոխադրութեան միջոց չունեին իրենց տրամադրելի: Սաւառնակի դարուն տակաւին չհասած կարգ մը յանախ նամրորդող դէմքեր այս գրքին մէջ, զարմանալիօրէն տոկացած են այլեւայլ հեռաւոր վայրեր ուղեւորելու տաղտուկին: Հետեւեցէ՛ ուղեւորութեանց զոր օրինակ Կոմիտաս վարդապետ Սողոմոննեանին, Գարեգին Արք. Ցովսէփեանին, Զաւեն Պատրիարք Տ. Եղիայեանին, Բարգէն Եպս. Կիւլսէրեանին, Թորգոմ Եպս. Գուշակեանին, Գարեգին Եպս. Խաչատուրեանին, եւ գրողներ Աւետիս Ահարոննեանին, Ցովհաննես Թումանեանին, եւ Վահան Թէքէեանին: Աւելցուցէ՛ ասոնց ուղեւորութեանց վրայ տեղահանեալ հայոց կարաւաններու եւ հայկական հողի վրայ կոիր մղող գորքերու տեղափոխութիւնները, եւ եթէ

հնարաւոր է, մի զգաք կարիքը քարտեզներու: Մաղթենք որ գալիք երկու գրքերը ձեւով մը լիցնեն այս պակասը:

Հեղինակը՝ Դոկտ. Զաւեն Ա. Քինյ. Արգումանեան ծնած է Եգիպտոս 1933ին: Երջանաւարտ է Գահիքէի Գալուստեան նախակրթարան: Ուսանած է Անքիլիաս-Լիքանան-ի Կիլիկիոյ Կարողիկոսարանի դպրեվանքը ուր 21 տարեկանին ստացած է քահանայական ձեռնադրութիւն: Հայր Զաւենի հովուական ծառայութեան առաջին դաշտը եղած է Երովայի մայրաքաղաք Աստիս Ապապա ուր հայոց Ս. Գեորգ Եկեղեցւոյ մէջ պաշտօնավարած է երկուեռիկւ տարի: Երովահայ բարերար Մարտիրոս Տարքնեանի հաստատած եռամեայ կրթարշակին շնորհի Հ. Զաւեն ուսանեցաւ Լոնտոնի համալսարանին մէջ, նոխացնելով իր աստուածարանական հմտութիւնը: Դեպի Մայր Արոռ Ս. Էջմիածին Հ. Զաւենի ուխտագնացութիւններէն առաջինը տեղի ունեցաւ 1958ին, երբ այդ սրբավայրին մէջ ստացաւ վարդապետի գաւազանի իշխանութիւն: 1962ին Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ Տ. Սիրն Արք. Մանուկեանի հրաւերով եկա Ֆիլատէֆիա: Քաղաքի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ հովիւ պաշտօնը ստանձնեց եւ երկրորդ տարին հազիւ բոլորած, հարկադրուեցաւ սրտապնդել եւ կազմակերպել իր ցրուած հօտը երբ անակնկալ հրդեհ մը բոլորովին քանդեց Ս. Երրորդութիւն Եկեղեցին: Հ. Զաւեն Արգումանեան յաջողեցաւ համաձայնի վարչութեանը հետ որքանոցի մը, որու սրահը կարելի եղաւ վարձել եւ իրը աղօքավայր օգտագործել քի քանի տարի: Մինչ այդ ծուխը Հ. Զաւենի ղեկավարութեամբ գնեց հող մը Ֆիլատէֆիայի հիւսիսային սահմանին վրայ՝ Զելքընիմ աւանին մէջ, ուր

հայկական ոճով կառուցուեցաւ փառաւոր նոր Ս. Երրորդութիւն Եկեղեցին եւ 1966ի աշնան օծուեցաւ թեմի նորընտիր առաջնորդ Գեր. Տ. Թորգոմ Նպս.ի ձեռքով: Հ. Զաւէն Ֆիլատէլֆիայի մէջ ժամանակ ստեղծեց Թէմփի համալսարանի մէջ կրօնագիտական ուսմանց հետեւելու եւ ստացաւ Մագիստրոսի աստիճան: Առաջնորդ Թորգոմ Նպս. Մանուկան Հ. Զաւէնին ձեռնադրութեամբ տուաւ Ծայրագոյն վարդապետի աստիճան: Աւելի քան 7 տարի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ հովութիւն ընելէ ետք, Հ. Զաւէն յանձն առաւ 2 տարուան պայմանաժամով փոխադրուիլ Մոնթրէալ, որպէս Առաջնորդի փոխանորդ ապագային ինքնավար Թեմ դառնալիք Գանատայի շրջանին: Վերադառնալով Ֆիլատէլֆիա Հայր Զաւէն

ստանձնեց Ուկստ Ֆիլատէլֆիայի Ա. Սահակ եւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյն հովութիւնը, եւ 10 տարի ծառայութեամբ շնչցուց այդ ծուխը եւս: Միաժամանակ հետեւեցաւ Նիւ Ենրի Գոլոմպիա համալսարանի հայ պատմութեան ուսմանց, եւ Փրոֆ. Նինա Կարսոյեանի ցուցմունքով պատրաստեց իր աւարտանառը եւ արժանացաւ Դոկտոր Փիլիսոփայութեան աստիճանին: Հ. Զաւէն ութ տարի անընդհատ վարած է թեմական խորհութիւնի ատենադպրի պաշտօնը: Ան իր երեցկնոց հետ մօտ 10 տարիէ ի վեր կը բնակի հարաւային Ֆլորիդա: Տ. Զաւէնի առաջնորդութեամբ շինուեցաւ Պոքա Ռաբօնի մէջ Ս. Դաւիթ Եկեղեցին, որ օծուեցաւ 1988ին:

Տ. ԱՐՏԵՄ Ա. ՔՃՆՅ. ԱՇՃԵԱՆ

Բաղձալի Հաշտութիւն

Հիւսհսային Ամերիկայի Արևել եան Թեմի քարեջան առաջնորդ Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեան Վերջերս Ս. Կարդան մատենաշարէն լոյս ընծայեց անզլ երէնով գրքոյկ մը, որուն Վերնագիրն է "A Pastoral Letter to the Armenian Faithful", որ թարգմանի «Թուղթ Հովուական առ Հայ Հաւատացելոց», որ հնքնին քարի տրամադրութեամբ ու ազնիւ զգացումով կատարուած երկարամեայ ցանկալի կոչ մըն է Վերջ տալու Հայ եկեղեցւոյ պատմութեան մէջ քացուած վերքին ու Վիհին: Այն քարի հրաւէր մըն է նաև գործածելու ներկան իբրև ոսկի պատեհութիւն՝ խօսքէն գործի անցնելու և հրականութիւն դարձնելու հայ ժողովուրդի տարիներու տենչը, իղձը և երազը՝ միութիւնը:

Մեր առաջնորդ Սրբազան Հօր գրքոյկի բովանդակութիւնը կուր է ու խիստ այժմէական։ Իսկ թել աղրութիւնները՝ տրամաքանական ու համոզիչ։ Բովանդակ գրքոյկը կը կարդացուի հեշտութեամբ և մեծ հաջոյքով։ Ընթերցանութեան աւարտին, ընթերցողը կ'ունենայ հաճելի տպաւորութիւն և տրամադրութիւն մը, որովհետև գիրքը հեռու է անհմաստ մեղադրանքներ կատարել և աննպատակ նետեր արձակելէ։ Անոր հիմնական նպատակն է լուսաբանել ընթերցողը, և յատկապէս, անոր միտքը և էութիւնը առաջնորդել դէպի քաղձալի հաշտութիւն, միութիւն և Վերջնական խաղաղութիւն։

Այստեղ, անտարակոյս, մեր նպատակը չէ ամենահն շարադրել եկեղեցական այս սուր ու վնասաբեր տագնապին տուն տուող պատճառները և ոչ ալ դոյզն չփոկ հսկ անդրադառնալ անոր շարժառիթներուն և այլ քաղաքական հանգամանքներուն։

Ներկայիս, հայութիւնը թեակոխած է այնպիսի փուլ մը որ կը կոչէ զմեզ ամենքս հնքնագիտակցութեան, հնքնաքննութեան և շրջահայեցութեան։ Հայ ազգային-եկեղեցական կեանքը այժմ կարիքն ունի Վերազարթօնքի, Վերանորգման ու Վերակազմակերպման։ Ներքին միութիւնը անկասկած պիտի գայ զմեզ գօտեպնդելու և գօրացնելու մեր հոգեւոր, ազգային ու մշակութային գոյատեսութեան վթուակամութեան մէջ։ Մեր քազմաշարչար եկեղեցին այսօր, աւելի քան երթեւէ, ծարաւի է հաշտ ու խաղաղ կեանքի, եկեղեցական միութեան և վարչական կառոյցի ամբողջականութեան։

Ողջ սփիւրքի և հայրենիքի հայութիւնը յուգող և մտալլկող հարցը ներկայիս միութեան ապահովումն է։ Հայ եկեղեցւոյ ծոցին մէջ օրինապահութիւնը և կարգապահութիւնը Վերահաստատելու հրամայականին առջև կը գտնուին ներկայ սերունդին ներկայացուցիչներն ու Վերին հշխանութիւնները։ Լաւատեսութեամբ տոգորուիլը, միութեան գաղափարով յուսադրուիլը և վարդագոյն արշալոյսներ ընդգրկելու քարի իղձերը և տրամադրութիւնները անքաւարար են միութեան գործադրման համար։ Հարկ է

աւելի գործել, բան խօսել:

Հետևաբար՝

Ժամանակը չէ անցեալի պատմական տիսուր ու խոր անցուղարձերը վերյիշելու և մատնացոյց ընելու դէմքեր, դէպքեր ու թուականներ իրք հիմնական դրդապատճառը բոլոր անհասկացողութեանց ու անհարկի վիճաբանութեանց:

Ժամանակը չէ կիրքերը գրգոելու, ջուրերը պղտորելու և ցեխարձակումներով զիրար նշաւակելու ու այպանելու, վասնզի բաւ է ինչ մելան սպառեցինք և գերագոյն թիգ գործադրեցինք զիրար մեղադրելու, անուանարկելու և նսեմացնելու:

Անցեալին թող պատկանին այլևս մութ, տիսուր ու տրտում էջերը հայեկեղեցւոյ տագնապալի օրերուն:

Ժամանակն է որ լուրջ, զգաստ ու խոհեմ քայլ երով դիմաւորենք հրաշգեղ արշալոյսը հայ կեանքի, հարցին մօտենանք հեռատեսութեամբ, լաւատեսութեամբ և տուաջնորդուինք հայ բովանդակ ազգի գերագոյն շահերով:

Ժամանակն է որ ընդմիշտ դադրեցնենք սնամէջ բանավէճերը, որոնք կուզան լոկ մեր թանկագին ժամանակը կորզելու, սքանչելի պատեհութիւնը փախցնելու, ապա և մեզ ուժաքամ ընելու, պարպելու զմեզ մեր ոգեղէն արժէքներէն, և յատկապէս մեր դարաւոր ոստիին զուարթութիւն ու գոհունակութիւն պատճառելու և յաշս օտարաց զմեզ նշաւակ դարձնելու:

Եղաւ ժամանակ մը երը մեր մամուլին էջերը ողողուեցան տագնապը յուզող հարցերով: Մէջբերուեցան տգեղ միջադէպեր, արծանագրուեցան հայուն վարկին անվայել ու աններելի խօսքեր: Այդ բոլոր մտքի մարզանքներուն, ժամարտակութեանց ու զրպարտութեանց ժամանակն անցած է այլևս: Ժամանակն է որ մէկդի դնենք անձնական կիրքն ու մոլուցքը և զիրար հակընանք սիրոյ ու յարգանքի հաղորդակցութեան ժանապարհով:

Այժմ, երը այլևս համայնավար ծանր ու կործանարար թաթը վերցուած է հայոց եկեղեցիին վրայէն, և հայուն հոգին թեթեցած ազատօրէն կը շնչէ ու կը ժախրէ գրկելու անհուն լազուարթ երկինքը。

Այժմ, երը անսատուածեան վարչակարգը մէկընդմիշտ խորտակուած է ու անոր վարդապետութիւնը դատապարտուած յաւիտենական վախթանի ու լոռութեան։

Այժմ, երը Ղարաբաղի մեր հարազատ քոյրերն ու Եղբայրները անհաւասար քայց արդար մարտ մը կը մղեն ընդդէմ ոստիին յանուն հողային ամբողջականութեան և առհաւական արժէքներու և սրբութիւններու պահպանման։

Այժմ, երը երկիրն հայոց, գտած իր երբեմնի ազատութիւնը և սակայն դարձած Արշակաւան բազում աղնաւորներու, մոլար վարդապետութիւններու և օտարոտի թիւը ուսմունքներու։

Այլևս կարելի չէ չլսել ու շանսալ մեր պատերուն ծայնին, հայրենին-

քի բաջամարտիկներուն ծայնին, մեր խղճմտանքի ծայնին ու շղառնալ մէկ ճակատ, չկազմել մէկ բոռունցը ու չունենալ մէկ նշանաքան ու նպատակակէտ:

Հայոց հողն ազատագրուած է այսօր, բայց հայոց մէկ ծանր հոգը կը մնայ դեռևս իր պարանոցին: Հայեր ամենուրեք կը զգան խիստ պահանջը յամեցած, բայց ցանկալի միութեան:

Մայրենի երկրի վրայ տեղի ունեցած պատմական վերջին իրադարձութիւնները, և մանաւանդ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին՝ Գարեգին Բ-ի Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրութիւնն ու օծումը պէտք է վերջակէտ դնեն մեր եկեղեցւոյ երկփեղկման ու երկպատակուման:

Հայ իրականութենէն ներս, նորագոյն նշանակալի և ուրախալի դեպքը Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռին նոր Կաթողիկոսի ընտրութիւնն էր ու օծումը: Արամ Ա. նորընտիր, պայծառամիտ ու լուսամիտ կաթողիկոսը իր պատգամներուն մէջ բազմիցս կը շեշտէ մեր մէկ եկեղեցի, մէկ հայրենիք, մէկ ազգ, մէկ մշակոյթ, մէկ ապազայ ունենալու ճշմարիտ իրողութիւնը: Իրօր որ հայ ժողովուրդը հպարտ ու գերերջանիկ պէտք է զգայ ունենալու երկու հայրապետական Աթոռներու վրայ բազմած բարձրորակ, միջազգային շրջանակներու մէջ գերազանցապէս յարգուած, սիրուած ու գնահատուած կաթողիկոսներ: Պատիւ մեր ազգին ու եկեղեցին որ ունին նման արժանաւոր դեկապարներ, երախտաւոր մշակներ ու հոգևոր պետեր:

Մեր մաղթանքն է ու աղերսը առ Աստուած որ Ամենաքարի Տէրը պարզեւ արևշատութիւն գոյգ Հայրապետներուն, լիակատար առողջութիւն և բազմաթեղուն գործունէութիւն իր անդաստանէն ներս:

Հայ ազգը կը մնայ լիայոյս և աղօթող որ բաժանումի սառցահալը սկսի, ակնկալուած ու խիստ ցանկացուած միութիւնը, միացեալ ջանքերով և սերտ գործակցութեամբ, դառնայ իրականութիւն, և ի վերջոյ, մեր եկեղեցին հասնի իր բարձալի հաշտութեան և վերագտնէ իր երեխնի ըղձալի ու կարօտալի խաղաղութիւնը:

Այս առիթով նաև մեր սրտագին շնորհաւորութիւնները կը յղենք մեր առաջնորդ Խաժակ Սրբազն Պարսամեանին՝ զրքոյկին մէջ արտայայտած իր առողջ մտածումներուն, գաղափարներուն, քրիստոնէական մօտեցումին և սքանչելի ու օրինակելի ոգիին համար:

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԻԲՐԵՒ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԲԵՒԵՌՈՒ (^(*))

20-րդ դարու վերջաւորութեան, հայ ժողովուրդի և իր եկեղեցական հաստատութեան միջն շարունակուող կապը ծիսական է միայն. ծէռը այս պարագային պէտք է հասկնալ որպէս հանդիսապրում:

Եկեղեցականի մը կողմէ հրապարակաւայս այս արտարայտութիւնը իր Մայր Եկեղեցին հանդէս, քիչ մը այսպէս բիրտ կերպով ըստած, զուցէ հաճելի չթուի բնթերցողներէն շատերուն համար. բայց տանն է այլեւս, եթէ կը սիրենք մեր Եկեղեցին անկեղծ սրտով, չծածկել ճշճարտութիւնը և խոստովանի իրականութիւնը, որպէսողի Եկեղեցին ինքն այ անդրադառնայ իր ծիսական պարտականութիւններէն անդին իր բուն առաքելութեան եւ փորձէ մտնել իր զերին մէջ:

Այսօր հայ Եկեղեցին եթէ միայն ծիսանդիսական եկեղեցի է, ասիկա հետեւանքն է անշուշտ անցեալէն եկող պատճառի մը: Եկեղեցիին ներգործական եւ արի զործունկաւթիւնը, Եղեռնէն զեռշատ առաջ, սկսած էր տկարանալ, որովհետեւ իր վանական զրութեան ցանցը համընդունած սկսած էր նօսրանալ: Եկեղեցի մը իր վարչական կեղրոնով, դժուար թէ կարենայ ինքնուրոյն, անկախ կրօնական իշխանութիւն մը հաստատել եւ զեկավարել, եթէ երբեք այդ Եկեղեցին իր ետին չունենայ հոգուր ստեղծագործական կեղրոններ. վանքիք՝ ուր նորողութիւն կրօնական մտածողութիւնը, լեզուն, դաւանական բանաձեւումները, եւայլն: Եղեռնէն առաջ քանի մը զպրեվանքներ՝ Գէորգեան ճեմարան, Արմաշ, Երուսաղէմի ժամանակաւորացը, բաւական չէին հայ Եկեղեցւոյ վարչական կեղրոնին ձեռքը տալու ուժեղ կրօնական իշխանութիւն մը:

Իսկ Եղեռնէն յետոյ, եւս առաւել աըլարացաւ Հայ Եկեղեցւոյ կրօնական իշխանութիւնը, մանաւանդ խորհրդային կարգերու հաստատումով, որովհետեւ կրօնական իշխանութեան վարչական կեղրոն՝ Մայր Աթոռ կիմիածինը ո'չ միայն իր մականին ներքեւ չկրցաւ պահպանել իշխանութիւնը, այլև վտանգուեցաւ ի՞ր իսկ զոյտութիւնը, հողեւոր պարունակը, իր վրայ զործադրուած քաղաքական ճնշումներու պատճառաւ, Այնուհետեւ լուսամիտու ազգանուէր բարձրաստիճան եկեղեցականներու պարտքն էր, առնուազն փրկել զարաւոր հաստատութեան արտաքին կերպարանքը: Ատիկա կը շահուէր չնորհիւ, ծիսակատարութեան թոյլտութեան:

Հայ Եկեղեցւոյ վարչական կեղրոնին զէմ մզուած հայածանքի այդ տարիններուն, այսինքն՝ 1920-ական թուականներէն ետք, Հայոց պատմութեան մէջ տեղի կ'ունենային նոր անցուղարձեր: 1915-ի մէծ զէպքով, երկուքի ճեղքուած Հայոց պատմութենէն, ծնունդ կ'առնէր պատմութիւն մը բոլորովին նոր սկիզբով, որ պիտի կոչուէր Սփիւրքի Հայոց Պատմութիւն: Նոսրական չէ այստեղ Սփիւրքի Հայոց ծննդեան պատմութիւնը ընել, բայց պարտաւոր եմ պատմական համառոտ ակնարկ մը նետել Սփիւրքի Հայ Եկեղեցիներու ծննդոցին, նիւթիս մէջ կա- րենալ յառաջանալու համար:

Այն պահուն երբ զաղթական Հայեր դի-

բենք հիւրընկալով երկիրներու մէջ տեղաւորուիլ կը սկսէին, ընկերային բնախօսական պահանջը է որ նման պարագաներուն, մարդիկ իրենց հասարակացութեան ձեւ եւ կերպարանք մը տան, հայզաղթական այդ զանկուածներուն հաւաքական, համայնական կեանքը, առաջին հրթին կը ձեւաւորուէր ծխական - թեժական կաղմակերպութեամբ եւ եկեղեցիներու շինարարութեամբ. ինչ որ կը նշանակէ թէ Սփիւռքի հայ եկեղեցիներու ծընունը, անմիջականօրէն կապուած պիտի ըլլար Սփիւռքի Հայոց պատմութեան սկիզբին:

Միջին Արևելքի մէջ, Սիսի վերջին կաթողիկոս՝ Սահակ Բ. Խազայեան, աստանդական կեանք մը վարելէ յետոյ, 1930 թուականին Լիբանանի մէջ կը վերահիմնէ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը, որու իրաւասութեան սահմանները կը տարածուին Սուրբոյ, Լիբանանի եւ Կիլիկոսի վրայ: Պաղճատինինի եւ Յորդանանի զաղութները կը վայելն երուսաղէմի Պատրիարքութեան Հովանաւորութիւնը: Եւրոպայի եւ Ամերիկայի ցամաքամասերուն վրայ ծլող, միւս բոլոր եկեղեցիները, իրենց թեժական կառոյցներով կը մտնեն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հովանաւորութեան տակ: Հոսուկէտք է յիշատակիմ որ այն բոլոր եկեղեցիները, որոնք հողեւոր եւ կրօնական մնունդ բաշխելու եւ հայկական տոհմիկ ուսում ծաւալելու նպատակով հիմնուեցան Եւրոպայի եւ Ամերիկայի քաղաքներուն մէջ, իրենց կապը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ եղաւ միայն բարոյական կապ մը, եւ երբեք օրկանական:

Հայաստանի մէջ վսորհ. Պետութեան մը հիմնումէն անմիջասկէս յետոյ, Հայ եկեղեցին համար կը սկսի խառնաշխոթ մըջան մը: Այս Երեւոյթի կելլոնական հանդամանքը այն է որ կրօնական հալածարութեան կողմէ, եւ թոյլ չի տար որ Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը իր ձեռքն առնէ իր սեփական ճակատագրի տնօրինութիւնը:

Որքան կը թոյլար Հայ Եկեղեցւոյ կեղոնակոն իշխանութեան հեղինակութիւնը, այնքան աւելի սոսկ բարոյական յարաբերութիւն մը կը դառնար Սփիւռքի, մասնաւորաբար արեւմտեան հատուածի քաղաքներու տեղային, ինքնավար եկեղեցիներու զործակցութիւնը ընդհանուր միացնող կրօնական իշխանութեան կեղրոնին հետ:

Ինչպէս կը տեսնենք, իրերու այս կացութեան մէջ սփիւռքեան տեղային, ինքնաւոր եկեղեցիները զեկալարուած չըլլալով ընդհանուր ծրագրով մը հողեւոր կեղրոնական իշխանութենէ մը, տեղային մասնաւոր իւրաքանչիւր ծուխ կամ թեմ, իր ուժերուն ներած չափով կը մատակարարէր իր առօրեայ հողերը սահմանափակուելով իր կալուածէն ներս:

Բայց ի՞նչողէս կը պատահէ որ Սփիւռքի քաղաքական տարբեր մինուլուտի տակ ծնունդ առնող եւ անող Հայոց եկեղեցիները, քաղաքական ճնշումներէ ձերբադատ, Հայաստանի եկեղեցիներուն պիսս կունենան յար եւ նման ճակատապիր:

Սփիւռքի եկեղեցիները առանձնապէս ցայտուն, հողեւոր, կրօնական նորողուած լովանդակութիւնը մը չեն յաջողիր գրսեւորել անցնող ամրող 70 տարիներուն:

Ճակատագրի ի՞նչ զուգաղիտութիւն:

Այսօր Սփիւռքի լոյլոր Հայ առաքելուան Եկեղեցիներն ալ ծիսական եկեղեցիներ են: Գիտեմ թէ ոկտոք է յարգեմ ծէսր, անիկա եկեղեցւոյ կամ կրօնական կւանքի բաղադրիչ կարեւոր տարբերէն մէկն է, եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ սպասուորի մը Համար աններիլ է քըննադատական վերաբերմունք մը ունենալ. բայց իրաւունք ունիմ ցաւելու հրը եկեղեցւոյ աւազանին մէջ մկրտուած անդամներ, հաւատացեալներ, այդ ծէսը կ'ապրին լոկ իրբեւ արտաքին ձեւ, նշան, եւ ո՛չ թէ իրբեւ նշանազործութիւն կապուած Աստուծոյ եւ անոր խորհուրդին

Հետո : Ասիկա կը նշանակէ թէ երրոր և կեղեցական կազմակերպութիւններ կը հաստատուէին Սփիւռքի տարածքին, առոնք մէջտեղ կու դային կարծէք, պարզապէս մարդոց ծիսական, զուտ անհատապաշտ կարիքներուն զոհացում տալու նպատակաւ։ Հողեւոր սնունդ, հողւոյ փրկութիւն, հայեցի տոհմէիկ դաստիարակութիւն, ինքնութեան պահպանում, կարօտարագութեամբ լցուն ցանկութիւններ ըլլալու էին իրենց կանոնագրութիւններուն մէջ արժանադրուած։

Այստեղ նշումի արժանի կարեւոր կէտը կայ։ - Եկեղեցաշինութիւն, ծիսական - թեմական կազմակերպութիւն, վարչական կազմութիւն, - նախաձեռնողները ընդհանրապէս աշխարհիկ անհատներ, խմբակցութիւններ եղած են։ Եկեղեցականը ընդհանրապէս իրրեւ ծիսակատար պաշտօնեայ, հրաւիրուած է տուեալ ծուխին կամ թեմին մէջ երաշխաւորելու ծիսական պարտականութիւն մը։ Եկեղեցաշին անձնուէր աղղայիններ, հակառակ իրենց կրօնական զգացմունքներու անուրացութեան, առաւելացած առաջարար զործած են առաւելարար զործած, քան թէ Եկեղեցադիտական խորունկ ծանօթութիւնէ, իրենց նպատակն ու զործակցութիւնը բերած են օժանդակելու համար կազմակերպութեան արտարին արդիւնքին եւ ծաւալումին։ Աշխարհիկ դասակարդի տնօտեսական նպատար, Եկեղեցական - թեմական կառույցներու ստեղծման զործին մէջ, միւս կողմէ յառաջ բերած է այլ կացութիւններ։ Աշխարհականներ առհասարակ մեծ իրաւունքներ առած են տիրութիւն բնելու, որու պատճառաւ յաճախ տեղի ունեցած են անհասկացողութիւններ աշխարհիկ եւ կրօնական իշխանութիւններու միջեւ։ Այսպիսի մանր վէճեր եւ դեռ այլ բազմաթիւ ժխտական զործուններ պատճառ զարձած են որ քաղաքային, տեղային Եկեղեցիներ (ըսել կուզեմ հողեւոր պաշտօնէութիւն եւ վարչական աշխարհիկ կազմ) ընաւ առիթ չունենան իրենց վիճակին անդրադառնալու։ Բայց պիտի չերկարեմ խօսքիս կարգը, կը բաւէ դանալ, օրինակի համար, Ֆրանսայի

կարդ մը եկեղեցիներու ատենագրութեանց տոռմարները, հասկնալու համար թէ ինչքա՞ն ժամանակի մսիում, վատնում եղած է։ ընաւ չէք հանդիպիր լուրջ ծրագրի մը մշարկման որ զործադրութեան դրուած ըլլայ։

Սփիւռքի Հայոց պատմութեան ժամանակամիջոցը եթէ երկուքի կիսենք, կ'ունենանք առաջին քառասնամեայ շրջան մը, եւ երկորդ քառասնամեայ շրջան մը։ Ինչ կը վերաբերի առաջին քառասնամեայ շրջանին՝ հողեղին դրութիւնը ծանօթ է։ Հիմնական հարցը ծննդեան հարցն է օտար հողերու վրայ։ Ինչ որ ալ լլլան թերիները Սփիւռքի Հայոց ծննդեան պատմութեան, իրաւունք չունիք անրարիսիոն ըլլալու, մէնք կը ռնանք միայն երախտագէտ ըլլալ այն մարդոց նկատմամբ, որոնք արհաւերքէ եղած, դաժան, եղերական, աներեւակայի լիի պայմաններու տակ, ձնունդ տուեն կաթողիկոսութեան, Եկեղեցիներու, հայրենակցական միութիւններու, մշակութային տուններու, մարդական, կուսակցական եւ այլ խմբաւորումներու, և այս բոլորը տնտեսական անպատճելի չքաւորութեան տակ։ Եկեղեցական, ծիսական, թեմական, կրթական կառոյցները բնականարար պիտի հիմնուէին 19-րդ դարու պոլսական կաղասլարներուն վրայ, որովհետեւ ուրիշ մոտէլ չկար։

Որքան որ բարեխիղճ պէտք է ըլլալ, ներող սիրտ ունենալ առաջին քառասնամեայ շրջանին համար, բայց աւելի քան խստապահնենց պէտք է ըլլալ երկորդ քառասնամեային համար։

Առաջինները՝ մահուան մէջն ելլելով, տրնեցան անկարելին ի զործ զնելով, իսկ երկորդները՝ այսինքն մենք, ընթացքին մէջն ենք մտնելու մահուան մէջ։ Երկորդ քառասնամեայի սերունդներուն պարտքն էր ծնիլ սփիւռքեան զիտակցութեան մէջ։ Ահա այդ ծնունդն է որ անկարելի կը դառնայ, եթէ նկատի չունենանք հայ զրականութիւնն է որ չնորհչիւ մատի վրայ

Համբուռղի իր քանի մը վաւերական գըրզներուն, կը դիտակցի Սփիւռք կոչուած լինելութեան բայց յաջողեցա՞ւ անդառնալու ընդունաբանը, ինչպէս կը կարծէր Յ. Օշական, հաւաքելու, ժողվելու մարդեմ, որոնք ցըրումին մէջ պէտք ունին համայնական կենդանութեան:

Մինչեւ այսօր տնրացատրելի կը մընայ թէ երկրորդ քառասնամեային Եկեղեցին ինչո՞ւ համար իր սփիւռքեան առաքելութեան վրայ չկրցաւ անդրադարձ մը ունենալ, մանաւանդ 1955 թուականին ետք, երբ այլեւս յայտնի էր թէ Սփիւռքը մնայուն երեւոյթ էր: Գիտեմ պատասխանը որ կրնայ տրուիլ: յառաջ պիտի րերուին էջմիածին - Անթիլիաս արուեստական պայտքարը պիտի ըսուի թէ Մայր Աթոռը ի վիճակի չէր առանձին պղղային - Եկեղեցական ժողով հրաւիրելու, բոլորին ծանօթ քաղաքական պատճառավարող էջմիածնական միարանները պիտի չյօժարէին մեծամասնութեամբ երուսաղէմ հաւաքուիլ Եղիշէ - Տիրան անձնական կույներուն հետեւանքով, Եւայլն: Բայց այս բոլորը արդէն ապացոյցներ են հաստատելու համար թէ հայ Եկեղեցական պաշտօնէութիւնը (ես ալ մէջը բլլարով), չկրցաւ ի վիճակի բլլալ այս ո՞չ շահեկան խնդիրներէն վիր, քննելու սփիւռքեան հիմնահարցը Եկեղեցոյ առաքելութեան ճամբով, որուն առաջին պատասխանատուն է ինք:

Իսկ ի՞նչ է այդ սփիւռքեան հիմնահարցը, եւ ինչո՞ւ համար Հայ Եկեղեցին իր առաքելութեան ճամբուն վրայ ձեւով մը պարտաւոր է քննութեան Ենթարկելու զայն: Այսօր Սփիւռքի հիմնական հարցը հաւաքական զոյտառեւման հարց մընէ, զոյտառենական խնդիր մը, եւ այս խնդիրը որ ամէնէն աւելի քաղաքականացման առարկայ դարձած պէտք է ըլլար Սփիւռքը Եկեղեցարով մարմիններու կողմէ, բուն այս հայոցն է ահաւասին որ երբեք քաղաքականացման օրակարդի վրայ չէ դրւած: Իսկ կրերապետական թող չժուի արտայայտութիւնս եթէ ըսմ թէ Սփիւռքի զոյտառեւման, հաւաքական զոյտ-

թեան օրէնքը կը գտնուի եկեղեցիին մէջ: Նախ այս շատ պարզ հանդամանքով որ Եկեղեցիին ընորոշումը հաւաքող է, ժողովող: Ասոր համար, սփիւռքեան մեր իրականութեան մէջ, Հայ Առաքելական Եկեղեցւոյ ղերեւ այսօր աւելի քան երրեք այժմէկական է: Անիկա բայց ցարդ չէ յաջողած անդրադառնայ իր կոչումին եւ օրակարդի վրայ զնել Սփիւռքի հիմնահարցը որ ամէնէն աւելի իր ուսերուն վըրբայ կը ծանրանայ զայն քաղաքականացընելու խնդիրը:

Իսկ որո՞նք են ժողովումի եղանակները: Գրիդոր Նարեկացի կը գրէ իր 75-րդ րանին մէջ «Եկեղեցին տապան է մաքրական եւ ընդ երկրայնոցս եւ զվերինսն յինքն հաւաքող»: Երէբայինը եւ երկնայինը հաւաքող անտեսանելի կառուցուածքը մըն է տեսանելի Եկեղեցին, որը անպայման կապուած չէ հողի, սահմանի, պետութեան եւ միայն ու միայն ճարդկային օրէնքրութեան խօսքին խօսքին ասութեան մէջ պիտի ասութեան կառուցուածքը, որո՞նք են ժողովումի հանդամանքը, որո՞նք են ժողովումի կարելի զարձնող աղղակները: Այստեղ կը գտնուի Եկեղեցիին հաւաքումի, ժողովումի հանդամանքը, որո՞նք են ժողովումի կարելի զարձնող աղղակները: Ասութեան խօսքը, որ ամէն հաւատացեալ պարտի ժառանգել, ծէսուը: Ինչպէս տեսնուեցաւ, ներկայիս Հայ Եկեղեցին Սփիւռքի մէջ զիստառարար ծիսական ԴՆՌ մը կը կատարէ: Բայց ի՞նչ է ծէսուը: Կարելի է Ենթաղրել մեր վերի զիտողութիւններէն որ ծէսու ներկայիս կը մըրընուի իրեւ ընմադրութիւնը շարժումներու, խօսքերու, աղօթքներու, որոնց առարկան մէրթ ծնունդն է, մէրթ հարսնիքը կամ մէրթ թաղումը. ծէսու վերածուած է պարզ անրովանդակ նշանի մը, արարքի մը, որուն նշանակութիւնը չի փնտուիր հաւատացեալ անհատին կամ զանդուածին կողմէ: Բարացած համարդի մը կարծէս ըլլար, որ կը կրկնուի ժամանակներէ ի վեր, և որուն հանդէսու օրերու մարդիկը կ'որդեղըն միայն

հանդիսատեսի զիրք մը: Այլ խօսքով ծէսի նշանակութիւնը, այսինքն փրկչական խորհուրդը մանաւանդ պատարաղի ընթացքին կը մնայ անմատչելի: Խսկական հաղորդութիւնը մեր եկեղեցւոյ մէջ տեղի չունենար: Եկեղեցին հիմնականորէն հաղորդութեան, Ս. պատարաղի վրայ հիմնուած համայնք մըն է, իրբեւ այդպիսին՝ ծիսական համայնք մըն է, ծէսին հական խսկական իմաստով: Ծէսը պարպուած իր խորհուրդէն, իր էութենէն, անկենդան տարր մըն է: Հիմա է որ կը հասկցուի թէ ինչո՞ւ մերօրեայ մարդիկ եկեղեցի կու դան միայն հոգեհանդիստին. կարծէք թէ ուզին աւելի մահը փառաւորել կամ մեռնովին յիշատակը ողեկոչել քան թէ պատարաղի խորհուրդին, սուրբ հաղորդութեան հաղորդ դառնալ: Ծէսի՝ նման բմբոնումի պատճառաւ է որ մեր հաւատացեալներէն քիչեր անձնական փորձառութիւն մը կ'ապրին եկեղեցւոյ կամարներուն տակ: Զկարծուի թէ ծէսին այս անկենդան տարր դառնալը արդիւնք է զրաբարի դործածութեան կամ անհասկնալի լիզուի մը նշաններու հանդիսադրութեան: Թերեւս ասոնք իրենց բաժինը ունին աղկտին մէջ, սակայն ծէսի ըմբոնումն է տիրականը, աւելի ճիշդը արդիւնք է եկեղեցին արտաքին նշաններու վերածելու ձգտումին: Անկասկած եկեղեցին չի կրնար դոյութիւն ունենալ առանց ծիսակատարութեան, ի նշալս ըսուեցաւ վերը: Սակայն եկեղեցին ունի նաև ծէսին անդին դացող նշանակութիւն մը: Ժողովումը չի կրնար տեղի ունենալ առանց սրբազն խօսքի ժառանդութեան, որդեպրումին: Հետեւարար Սփիւրքի մէջ Հայց: Եկեղեցին չի կրնար նկսուուիլ աղդային հաստատութիւն մը, կամ իւրայատուկ ծէսերու համակարգի մը թատերաբեմը: Եկեղեցիին տիեզերական, ընդհանրական նկարագիրը աղղային սահմաններէն անդին կ'անցնի, ընդհանրապէս մարդկայինին ուզդուած տարր մըն է: Բայց իրբեւ կրօնական մտածովութիւն եւ հողեւոր սնունդ եկեղեցին կը հիմնուի նաև իր աւանդութեան վրայ. այս կէտի վրայ է որ կը կազմուի եկեղեցիին տարբերակիչ եղըը: Ազդային աւանդութիւնները եւ եկեղեց, ոյ խորհուրդը սերտօրէն

եւ ներքնապէս միահիւսուած են, որով կարելի չէ ազգային աւանդութիւնները առնել եւ խորհուրդը մերժել: Հայ Եկեղեցւոյ այս կրկնակ նկարագիրը կը կաղմէ անոր հիմունքներէն մէկը, որուն ըընորհիւ ան կրնայ կաղմել ինքնութեան բեւեռ մը:

Սփիւրքի մէջ եկեղեցին կը մտնէ ընկերային ընդհանրութեան մը մէջ: Արեւմուտքի մէջ ընդհանրապէս անիկա յարաբերութեան մէջ կը գտնուի ուրիշ եկեղեցիներու հետ, ճիշդ այնպէս ինչպէս որ Սփիւրքի Հայը կ'ապրի զինք հիւրընկալող ժողովուրկներուն հետ մէկ ընդհանուր հողամասի վրայ, եւ կը խօսի յաճախ անոնց հետ նոյն լեզուով, կ'ապրի տնտեսական նոյն կեանքով եւ ունի հողերանական նոյնանման կերտուածք: Բնկերային այս ընդհանրութիւնը անշուշտ իր անդրադարձ ունի համայնքներու առանձնայատկին եւ տարբերութեան, ընդհանրական բնկերութեան մէջ: Իր առաքելութիւնն է միւս բոլոր եկեղեցիներուն պէս հաւաքի, ժողովել մարդկերը, աստուածային ուխտին չուրջ, բացայատկելով սակայն այդ ուխտին իւրայատկութիւնը: Ինչ է այդ ուխտին իւրայատկութիւնը, եթէ ոչ զօղումը իր աւանդութեան եւ եկեղեցւոյ տիեզերական, ընդհանրական նկարագրին ժամանակակից աշխարհի աղպային բմբոնումին վրայ:

Այլ խօսքով եկեղեցին այսօր կարո՞ղ է միաւորել ցըուած Հայ հաւաքականութիւնները իր իւրայատուկ ծէսին ընդմէջն Քրիստոսի փրկչական խորհուրդին չուրջ: Ցըուեալ հաւաքականութիւնները, որովէս մկրտիալ հաւաքականութիւններ անշուշտ, Աստուծոյ հետ կնքած իրենց ուխտը չեն յարգեր. ո՛չ մէկ սպասում ունին երկինքն: Վերահաստատել այդուխտը, վերակնքել զայն, ահաւասիկ հրամայականը, Սփիւրքի Հայ Առաքիլական, եկեղեցիներուն:

Հայ Եկեղեցւոյ պաշտօնէութիւնը մեծ

Հենրիկոս Գելեր 19-20րդ դարերու Եւրոպական աշխարհի հանրայայտ պատմաբաններէն մին է, բիւզանդախոս եւ հայագետ: Ան, իր պատմաբանափական հետազոտումներու ընթացքին յատուկ տեղ յատկացուցած է հայ պատմութեան, մատեսագրութեան եւ մշակոյթի մասին: Ոչ միայն ծգտած է բացայատել սովոր պատմական իրադարձութիւնները, այլև իրարմէ զատորոշելով կեղծն ու ճշմարիտը, բազմից նշած է հայերու դեռն ընդհանուր քաղաքակրթութեան եւ մշակոյթի պատմութեան մէջ:

Մնած է Պերլին 1847 թուի Յուլիս 1ին: Դաստիարակուած է գերմանական համալսարաններու մէջ, ապա դասաւանդած է դասական բանափորւթիւն եւ հիմն պատմութիւն Թեսլիի ուսումնարանի եւ Հայդելբերգի, Բագելի ու Խենայի համալսարաններուն մէջ: Ան անդամագրուած է բազմաթիւ գիտական կանոններու: Մեծ Գերմանացի հայագետ պատմաբանը բաժնուեցաւ այս աշխարհէն, 1906 թուի Յուլիս 11ին:

Հենրիկոս Գելերի վաստակը հայագիտութեան մէջ աւելի մեծ համբաւ ստացաւ գլխաւորապես ներքոյ յիշեալ իր չորս հեղինակաւոր գործերով.

«Դիցաբանութիւն Հայոց», թարգմանուած հայերէնի ի Հ. Յովհաննես Վ. Թորոսեանէ, տպ. ի Վենետիկ:

«Պատմութիւն Հայոց», թրգմ. ի Հ. Գ. Գալիմբեարեանէ, տպ. ի Վիեննա:

«Փաւստոս Բիւզանդ կամ Սկզբնաւորութիւն Հայ Եկեղեցւոյ», թրգմ. ի Հ. Յովհ. Վ. Թորոսեանէ, տպ. ի Վենետիկ:

«Ուրուագիծ Բիւզանդական Կայսրութեան պատմութեան», թրգմ. ի Մեսրոպ Վ. Տեր-Մովսեսեանէ, Էջմիածին:

Առաջին երեք գործերը նուիրուած են հայկական պատմութեան ընսլութեան, իսկ վերջին գործը ընդհանուր ակսարկ մըն է բիւզանդական պատմութեան, բայց երեք առիթը կը ներկայանայ, մեծ գովեստներով կը յիշէ հայոց ազգին ունեցած ազդեցութիւնը Բիւզանդիոյ պատմութեան ընթացքին վրայ: Հայագիտական արժեքի տեսակտուն ոչ պակաս

կարեւոր են 1898ին հրատարակած Նիկիոյ ժողովի հայրերու անուններուն բազմալեզուեան բաղդատական ցանկը վեց ծեռագիրներու համեմատութեամբ, ինչպէս նաև զանազան հանդեսներու մէջ այլեւայլ հարցերու շուրջ տպագրած գիտական յօդուածները:

Գելերի հայափրական զգացումները ոչ միայն կը տեսնենք գիտական յօդուածներու այլեւ հրապարակակիսական աշխատանշներու մէջ: Այդ տեսակետն յատկանշական է «Թուրք-Յունական Արեւելքի Հոգեւոր ու Սշխարիկ Կեանցից» աշխատութիւնը, ուր Նկարագրած է Թուրքիոյ մէջ ապրող հայերու, պուլկարեններու եւ յուներու ծանր վիճակը եւ քննադատած Ապտիկ Համիտ 2րդի վարած քաղաքականութիւնը, իսկ Հայկական կոտորածներու նկատմամբ Գերման կառավարութեան ցուցաբերած անտարբերութիւնը համարած է բարոյական անկում:

Գելեր ջատագով հանդիսացած է հայկական օգտաշատ հրատարակութիւններու: Ասոր լաւգոյն հաստատում է առ Արշակ Տ. Միքելեան գրած նամակը, որ Վերջինս հետազային հրատարակեց իր «Հայաստանեաց Եկեղեցին եւ Բիւզանդական Ժողովոց Պարագայք» գրքի «Յառաջաբանին» մէջ (Մոսկուա, 1892, էջ թ. -ժէ.):

Մեր խորին համոզմամբ այդ նամակը չէ կորսնցուցած իր այժմէական կարեւորութիւննը, որովհետեւ այս հարցերը, որ համբաւար հայագէտը կը շօշափէ իր գրութեան մէջ, այսօր կրկին կը յուզեն Հայաստան աշխարհը եւ սփիւրքի հայութիւնը: Աղանձներ եւ այլադաւան համայնքներ, նորէն կը փորձն խեղափրել Հայաստանեաց Առաքելական Եկեղեցւոյ դիմագիծը, անոր խաղացած պատմական բացառիկ դեր եւ մեր ժողովորդի պատմութիւնը:

Այսօր այս նամակի վերահրատարակութեան կարիքը կը զգացուի այն իմաստով, որ օտար գերմանացի հայագէտ պատմաբան մը կը ջատագովէ հայոց դարերու դիմագրականութեան կամքն ու կորովը ըսելով, որ ումանց կարծիքով «Իբր թէ Հայոց ճակատագիրն է Եղել իրեանց Խզուակից եւ բարոյակից Պարագիւների հետ մազեցն խստովանել: Խնչ խնդութիւն. ընդունած մինին Հայը կրակապաշտութիւնն... , այն ժամանակ, է դարում, երբ Խ-

լամ ստումունքով արեւելքը նուանեց, «Հայր մահմետական կը դառնային եւ այսօր լաւագոյն դրութեան մէջ անգամ կը թնդին որւանապաշո...»։ Ականաւոր հայագետի իրաւացի կարծիքով, թեւ հայեր դարեր շարունակ տառապեցան իրենց քրիստոնեայ ըլլալուն պատճառաւ, «Սակայն աղետից բոլոր դարերում Հայ ազգը պահպանել է իր թանկագոյն գոփարն իր քրիստոնեական հաւատն, եւ զահը չէ շարժուել»։ Ըստ այդմ ան կը գոտեպընդէ չանսալ օտար հոսանքներու հրապուրիչ մոլար խօսքերուն։

Այսօր, երբ համայն հայութիւնը կը պատրաստուի

Ահա՝ նամակը*

Դուք վեռել եք աստուածարանութիւն սովորել ձեր բոլոր ոյժն ձեր ազգին նըւլիրելու համար. հոյակա'պ եւ փառաւո՞ր նպատակ։ Որպէս ես պատանեկութիւնց անտի ի վեր քան զամենայն սիրել եմ իմ ամբողջ գործս ու ծգումներս միայն իմ քանզագին զերման ազգի բարեկեցութեան համար տալու, այնպէս եւ դուք կամենում եք ձեր ազգի, Հայկայ հին, մեծայարգ ժողովրդի համար աշխատել։ Ես բարեմահքում եմ ձեզ առ այդ վեհոն, որ դուք յանձն եք առել Քրիստոսի նախատիմքը. վասն զի աստուածարանութիւնն աշխարհի երթեմնական առաջին եւ բարձրագոյն գիտութիւնն, անող լուսաւորութեան եւ անաստուածութեան մօտ, որի սոսկալի արդիւմքը տեսնում ենք ընկերվարութեան (sozialismus) եւ ոչնչականութեան մէջ (nihilismus), երթալով իշաւ միջնել նախատեալ եւ ծառայող սպասարկութիւնը։ Որպէս առ ձեզ, այնպէս եւ տիրում է առ մեզ -եղո՞ւկ- բազմապատիկ այն հայեցողութիւնը, թէ սրբագոյնն ամենայն գիտութեանց՝ աստուածարանութիւնը, վարդպահութիւնն Աստուծոյ եւ եկեղեցու վը-

*Նամակը կը վերահատարկենք ուղղագրական փոքր փոփոխութիւններով։

ոգեկոչելու Հայաստան աշխարհի մէջ քրիստոնեութեան պետական կրօնք հոչակման 1700 ամեակը, մեր կարծիքով կարող է այս նամակը իր նպաստը բերել Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ պատմական եերի ըմբռնմանը։

Սոյն հրատարակութեան անհրաժեշտութիւնը կը զգացուի այս պատճառով, որ առաջին տպագրութիւնը Ներկայիս դարձած է մատենագիտական հազուագիւտ երեւոյթ եւ կարդացողներու լայն շըրջանակներուն անմատչելի։

Ա.Ա.ԻՓՐԱՃԵԱՆ

րայ այլ եւս ոչ թէ ուսեալների համար է, այլ միայն ժողովրդի։ Իմ լաւագոյն երկու բարեկամներս՝ ուսուցչապեսն գործնական աստուածարանութեան ի Հայդելբերգ՝ դր. Բասսերման եւ տեղույս բարողիչ դր. Կինտ, ունեցել են նոյն փորձն, որպէս դուք. նոքա երկոքին սերուած են հարուստ եւ անուանի սոսկ ոսկեշահութեան վրայ մտածող վաճառական ընտանիքից եւ միայն մեծագոյն մաքառմամբ կարեցել են այդ քաջ՝ բայց սահմանափակ մարդկանց դատապարտութեան դիմաց, Տէրի կոչման հետեւ եւ աստուածարանութիւն սովորել։ Նոյնն է եւ ձեզ պատահել. ձեր արիւնակից բարեկամները մարմնաւոր պատճառներով ընդդիմադրել են ձեզ Աստուծոյ արքայութեան համար գործելու՝ որպէս Քրիստոսի Ս. եկեղեցու սպասաւոր։ Արդ, յարգոյ բարեկամ, գիտեմ, որ ձեր հաւատքն առուր հաստատուած է միակ հիման վրայ՝ որ է Յիսուս Քրիստոս, երեկ եւ այսօր, նոյն եւ յաւիտեան։ Ուստի լսեցէ նաև նորա ս. աւետարանի խօսքեն, որոնք ի ձեզ՝ յանարժան անօթի, բայց եւ այնպէս աստուածային ողորմութեան ծառայի մէջ, կատարուել է. «Մի՛ համարի՛ թէ եկի արկանել խաղաղութիւն յերկիր. ո՛չ եկի արկանել խաղաղութիւն, այլ սուր. Քանիզի եկի քակել գայր ի եօրէ իւրմէ, եւ զդուս-

տըր ի մօրէ իւրմէ, եւ զհարսն ի սկիսրէ իւրմէ: Եւ թշնամիք առն-ընտանիք իւր: Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս, ոչ է ինձ արժանի. եւ որ սիրէ զուստըր կամ զդուստը առաւել քան զիս՝ չէ ինձ արժանի: Եւ որ ոչ առնու զիսաչ իւր՝ եւ զայ զկնի իմ, չէ ինձ արժանի ...: Եւ եղիշիք ատեցեալք յամենեցունց վասն անուան իմոյ. իսկ որ համբերեսցէ ի սպառ, նա կեցցէ¹: Այս մեծ եւ աստուածային խօսքերն ամբացնեն ձեզ ձեր ընտրած կոչման մէջ եւ ի ձեզ այդ որոշումը հասունենեն ի սուրբ օծումն մտնելու եւ որպէս Աստուծոյ օծեալ երէց գործել կարենալու: Լսեցէք թէ ինչ էր ասում արեւմտեան եկեղեցու մէկ սուրբ այր՝ ձեր՝ աստուածային սահմանմաք ընտրած կոչման վրայ. «Վեհ է գաղտնիքն եւ մեծ է արժանիքն քահանայի, զի նոցա տուեալ է այն, որ ինչ չէ տուեալ հրեշտակաց: Քանզի միայն եկեղեցում օծեալ քահանայք են, որ ունին իշխանութիւն Քրիստոսի մարմինն եւ արիւնն օրինելու եւ խորհուրդ բաշխելու: Քահանան է իրօք միայն ծառայ Աստուծոյ, որ Աստուծոյ խօսքը կիրարկում է ըստ Աստուծոյ հրամանին եւ պաշտօնատրութեան. սակայն Աստուծ է, որ աստ առաւելապէս գործում է եւ աներեւապէս ազդում է, որի ներքոյ է ամենայն, ինչ նա կամենում է, որին ամենայն հնազանդում է, ինչ որ նա հրամայում է²:

Արդ եթէ դուք լրջութեամբ մտադիր եք ձեր ազգի վարդապետը դառնալու - գեղեցկագոյն կոչումն, զոր ես երեւակայել կարեմ մի հայրենասէր եւ ազգասէր հայի համար՝ փորձեցէք ձեզ Աստուծոյ առաջ հանապագօր եւ ամբացրէք ձեզ եռանդուն պատուիրաններով առ Քրիստոս

մեր միակ Տէրն եւ միջնորդն, որպէս զի նա ձեզ շնորհէ ձեր ազգի վերածնութեան համար ամբողջ հոգով եւ բաշակամութեամբ գործելու: Աստուծ օրինէ ձեզ, ձեր ընտրեալ գեղեցիկ կոչման մէջ:

Դուք գիտէք, սիրելի բարեկամդ իմ, որ ես իմ պարապմունքներով նուիրուած եմ արեւելեան հին ազգերի պատմութեան ուսումնասիրութեան. թէեւ աշխարհական, մեծ ուշադրութիւն եմ դարձրել ի սկզբանէ թէ եկեղեցական պատմութեան եւ թէ քաղաքակրթութեան պատմութեան էական մասին եւ ըստ նմին բերման գրադրուել եմ բաւապէս մանրամասնարար Անտիռքայ ասորական եկեղեցու, Եղիպտոսի Ս. Մարկոսի եւ Հայոց Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցեաց պատմութեան: Ես չեմ կարող գերմանական ուսումնականաց հասկանալ, որոնք անզգամ ընդ նմին եւ անհաննար ու յիմար միտք յառաջ բերին, որ իբր թէ հայոց ազգային անքաղցութիւնն է եղած Քրիստոնեութեան ընդունելը: Իբր թէ Հայոց նակատագիրն է եղել իւրեանց լեզուակից եւ բարոյակից Պարսիկների հետ մազդեզն խոստովանել: Ի՞նչ խենդութիւն. ընդունած լինեին Հայք կրակապաշտութիւնն՝ այդ տաղտկագոյն եւ չնշինագոյն հերանոսութեան մեծ վարդապետութեան մէջ, այն ժամանակ, է դարում, երբ Խոյամն ստումունենով արեւելքը նըւանեց, Հայք մահմետական կը դառնային եւ այսօր լաւագոյն դրութեան մէջ անգամ կը լինեին դուրանապաշտ աւագակներ, որպէս իւրեանց հարեւան Քրդերը: Քրիստոնեական վարդապետութեան խոստովանումն բերաւ Հայոց համար բոլոր դարերում սարսափելի հալածանեներ եւ շատ արիւնաքօր նահատակութիւնք: Պէտք չէ ձեզ՝ տեղական պատմութեան նշդագոյն գիտացողիդ, երկար մանրամասնել, որպիսի՝ սոսկալի նեղութիւնն կրելու ստիպութեան Հայք Սասանեան Պարսիկներից, արարական խալիֆներից, Թիրքերից եւ

1 Մատք. Ճ. 34-38, 22.

2 Թովմաս, Յաջորդութիւն Քրիստոսի. 4. 5.

Նոր-Պարսիկներից: Սակայն աղետից բռլոր դարերում Հայ ազգը պահպանել է իւր թանկագոյն գոհարքն՝ իւր քրիստոնեական հաւատն, եւ չահը չէ՛ շարժուել: Վասնորոյ եւ Աստուծոյ օրինութիւնն իշնում է յայտնապէս Հայոց առատահանճար ազգի վրայ եւ ես հաստատ համոզուած եմ, որ ապագայ դարերում Հայ ազգը դեռ մեծամեծ իրաց համար է սահմանուած:

Բայց իւր ապագայ տիեզերապատմական կոչման բաջարար նախապատրաստելու համար, ազգը պէտք ունի հաւատարիմ եւ նախանձաւոր վարդապետների, լուրջ խրատող հոգեւորականների եւ օծեալ սուրբ քահանաների, որոնք իւրեանց հաւատացեալ հօտն առաջնորդն Քրիստոսի շաւղաց վրայ:

Այսօր ցաւալի է, որ ժողովուրդը բազմապատիկ խրուել է արտաքին ծիսապաշտութեան մէջ. նորա նշանաւոր անդամք գերազանց վաճառականներ են, սակայն այնպէս խրուելով՝ երկրային բարեաց, ոսկու եւ արծաթի ետեւից ընկած, որ նոքա յայնմ մոռանում են նըշմարիտ մարգարիտն որոններու, զոր յայտնի վաճառականն աւետարանի մէջ էր փընտոում եւ երբ գտաւ զայն, ծախսց իւր բռլոր ստացուացքն այդ թանկագին գոհարը ձեռք թբրելու համար: Անհաւատութիւնն, որ մի կիսատ եւ անիմն իւրացմամբ արեւմտեան լուսաւորութեան հետ զինքն թերեւապէս միայն գօտել է, յաջողութիւն է ունեցել, որպէս դուք ինքններդ խոստովանեցիք, նաև Հայկի զարգացեալ որդոց մէջ եւ թէ հարկաւ զարգացելոց եւ մանաւանդ ժողովրդի մէջ բազում նշմարիտ եւ համոզանուէր քրիստոնեայք իսկ կան, այնու հանդերձ միւս կողմից -որպէս շատ ժողովրդագէտների տեղեկութիւնք համաձայնում են - քահանայից եւ աշխարհականաց մօտ քրիստոնեութիւնը մասսամբ սուլուել է արտաքին ձեւապաշտութեան մէջ: Ուստի յիշեցէք Դուք Խսայի մարգա-

րէին սոսկալի խօսքերը, զոր Քրիստոս Տէրն մեր եւ Փրկիչն ասաց առ Հրեաները. «Կեղծաւորք՝ բարւոք մարգարէացաւ ի վերայ ձեր Խսայի՝ եւ ասէ. Ժողովուրդս այս շրբամբք պատուէ զիս, եւ սիրտ իւրեանց հեռացեալ մեկուսի յինէն»:

Աստուծած մի՛ արասցէ որ այս սոսկալի խօսքերը Հայկայ ժողովրդի վրայ ստուգուին եւ նա աստուածային հրամանով նման դատավճին կրելու ստիպուի, որպէս հրէից դժբախտ ժողովուրդը: Ուստի վեհագոյն է խնդիրն, որ մնում է այդ ժողովրդի ուսուցչին: Դուք պէտք է Հայոց վերստին երկիւղած եւ քաջ ժողովուրդ դարձնէք որպէս եղել են Ս. Գրիգորի, Ս. Սահակի եւ Ս. Ներսէսի օրերով: Ցիշեցէք որ ինչ Ս. առաքեալն Պետրոս իւր առաջին քղում առ հաւատացեալքն ասում է. «Դուք ազգ էք ընտիր, քահանայութիւն բազաւորական, ազգ սուրբ, ժողովուրդ սեպհական, որպէս զի զանը առաքինութիւնս նուիրեցէք այնմ՝ որ զանը ի խաւարէն կոչեաց յիւր սբանչելի լոյսն: Որք երբեմն շժողովուրդ՝ բայց արդ ժողովուրդ Աստուծոյ. որք չողորմեալ՝ այժմ ողորմութիւն գտիք»:

Ո՛ փառաւոր է կոչումն վարդապետի, որ պէտք է գործ է իւր ազգն Աստուծոյ սեփականութեան ժողովուրդը դարձնելու:

Մեր դարում արեւմտեանների մէջ զարքել է շահագրգութիւն արեւելեան ազգերի նկատմամբ: Անգլիան եւ հիւսային Ամերիկան, նաև Գերմանիան եւ Զուլցերիան բազմարիւ քարոզիչներ են առաքել, որոնք Հայոց մէջ, Ասորիկում եւ Կոպտերի մէջ գործել են ուզում: Այդ նշմարիտ նանապարհը չէ. նոքա ուզում են իւրեանց անգլիական, իւրեանց նորոգող կամ լուրերական եկեղեցին Հայոց շատ հնագոյնին վիզը կապել: Խմասութիւնը պիտի զինքն պատժել տայ իւր որ-

1 Մատք. ԺԵ. 7:

դիներին: Այդ չէ նամապարհն, որով Հայաստանեայց Ս. Եկեղեցու վերածնութիւն են բանում. այդ պարտ է ի ներքուստ կատարուի: Այն օտար պատուիրակները ըերում են, որպէս Հռովմայ որդիքը, երկպառակութիւն եւ բանակութիւն Քրիստոսի Փարախը: Գիտեմ, որ շատ աւետարանական (Հռովմարողոքական) Քրիստոնեայք դատապարտում են այդ ժարողութիւնն արեւելեան ժողովրդոց մէջ: Մենք ուրախանում ենք, երբ Հայկայ որդիք գալիս են առ մեզ եւ արեւմտքում արեւմըտեան զարգացումն եւ գերմանական գիտութիւն սեփականում. բայց ապա ոչ թէ օտարք, այլ նոքա պէտք է իւրեանց ժողովրդի մէջ գործեն եւ նոցա ուսուցանեն եւ լուսաւորեն, որ նա, որպէս նախկին դարերում, վերստին մի երեւելի դիրք բռնէ ուսեալ ազգերի մէջ: Ես համոզուած եմ, որ թէ Հայաստանը լուսաւորուող տեղացի ժահանաների միջոցով մի նոր կենսազօր Քրիստոնէական հաւատքի հասնի, այն ժամանակ ազգային կեանքն եւս նոր զօրութեամբ կը զարքենի եւ էջմիածնի փառքը վերստին կը ճառագայթի, որպէս հին ժամանակները:

Խնդիր մի մեծ սպասում է դեռ Հայ ազգին եւ մանաւանդ նորա սուրբ Եկեղեցուն, իւր ժահանայից եւ վարդապետաց. բոլոր այն ժողովրդոց մէջ, որոնք հին Եկեղեցու, Կիւրեղ Աղեքսանդրացու եւ այլ սուրբ հայրերի հաւատքին հաւատարիմ են մնացել, այն է՝ Եգիպտացոց, Ասորոց, Երովացոց եւ Հայոց մէջ, Հայկայ որդիք միակն են, որոնք կատարելապէս եւ ամբողջապէս իւրեանց որդոց մեծ մասամբ՝ սեփականել են արեւմտեան ժաղաքակրութիւնը, վասն որոյ եւ մեծ առաւելութիւն ունին իւրեանց եղանակը և ամբողջապէս իւրեանց որդոց մեծ մասամբ՝ սեփականել են արեւմտեան ժաղաքակրութիւնը, վասն որոյ եւ մեծ

եւ մեծայարգ Եկեղեցեաց մէջ պիտի հրսկեն, որպէս զի աւետարանի եւ առաքելոց եւ Ս. հայրերի աւանդած նշմարիտ վարդապետութեան ջակը չիարուածուի: Արդ երէ Հայոց Եկեղեցին բազմարիւ ժահանաներ վերստին ունենայ, որոնք ժարողին հին Եկեղեցու վարդապետութիւնն ու հաւատն անկեղծութեամբ եւ սրութեամբ, եւ բոլոր սրտով՝ ու հոգով՝ ո՛չ թէ մարդու՝ այլ Աստուծոյ գործ կատարել կամենան, յայնժամ պարտ են նոքա նաև այդ տկար եղայրներին ընդունել եւ զօրացնել նոցա, նոցա', որոնց որոգայր են դնում Հռովմայ պատուիրակ Եզութիւներն եւ ցաւալի է, որ շատ Ասորիք եւ Կոպտեր դոցա բակարդի մէջ են ընկնում: Հարեշատանում լաւագոյն է. այնտեղ Քրիստոնեայ կայսրներն Թէոդորոս եւ Յովհաննէս ս. քարեյիշատակութեամբ վնանցեցին այդ ոչխարագգեստ գայլերին, նաև նոր բազաւորեալն Նեգուս Նեգեստէ Մենելէն Շօայի՝ մի հաւատարիմ որդի է Ս. Մարկոսի Եկեղեցուն:

Ըստ իմ մասնաւոր կարծեաց, զոր որպէս աշխարհական եւ օտար առաջարկում եմ միայն բոլորովին խոնարհարար, յարմար ժամանակ է, որ, երէ աշխարհական կառավարութիւնք դժուարութիւն չեն յարուցանում, կարուղիկոսն Ամենայն Հայոց պէտք է հնադաւան Եկեղեցիներից մի ժողով գումարէ կամ յէջմիածնին կամ ի Կարին, ըստ որում հրաւիրելի են նախ, երկոյնին կարուղիկոս Սոյ եւ Աղքամարի, Կ. Պուսի եւ Ս. Երուսաղէմի պատրիարքներն, Հայաստանեայց ուղղափառ Եկեղեցու համօրէն արքեպիսկոպոս եւ եպիսկոպոս եւ Եշանաւոր վանահայրերն ու վարդապետները:

2) Ս. Պետրոսի Անտիոքայ աթոռի յաջորդին ուղղափառ Ասորոց այսպէս կոչուած Յակոբիկների ի Մերդին եւ արեւելի Մաքրիանների պատրիարքը եւ ընդ նմին բոլոր արքեպիսկոպոս եւ եպիսկոպոս

եւ յայտնագոյն վանահայրերն Ասորոց ս. եկեղեցու:

3) Ս. Մարկոսի Աղեքսանդրիոյ աքո-նի յաջորդն, ուղղափառ Եգիպտոսի պապն եւ արքեպիսկոպոսն Եգիպտոսի, Լիրիայի եւ Պենտապոլիսի իւր բոլոր Կոպտական եպիսկոպոսներով, հանդերձ Նիբրական եւ Ակետական անապատի վանեմերի, այլ եւ Ամրահակեր Մար Բօլոս, Մար Անտոնիոս, ընդ նմին եւ Նիբրական անապատի Ասորոց վանեմերի առաջնորդներով:

4) Ներկայացուցիչ Ս. Մարկոսի ա-րոռից կախեալ Եթովպական Քրիստոնէից՝ միտրապոլիտն կամ Արուեան Հարեշըս-տանի եւ վանապետն Դերրայ Տարօրին ի Շօս եւ այլ քանի մի երեւելի, եւ ուսեալ հոգեւորականք Եթովպական քարեպաշտ ժողովրդի:

Եթէ կարելի լինէր - թէեւ ինեւ նա-խապէս տարակուսում եմ արտաքին պատ-նառներից - այդպիսի մի ժողով գումարել, նա նոր վարդապետութիւն չէր ունենալ աւետարանելու, զոր ուղղափառք վերա-բողում են ի Վատիկանն Հռովմայ ժողով-եալ՝ ճշմարտութիւնից մոլորուղ արեւ-մտեան եպիսկոպոսաց: Այլ Հայոց, Ասո-րոց, Եթովպացոց եւ Եգիպտացոց Ս. Եկե-

ղեցեաց սրբազան պատրիարքներն, եպիս-կոպոսներն եւ վարդապետները միացած կը խոստովանէին, որ իւրեանց հաւատու հանուր է եւ նոյն, զոր ս. առաքեալք Քրիս-տոսի քերանից լսելով, մեզ են աւանդել, զոր առաջին դարերի ս. հայրերը բողել են յետնոց, զոր 318 հայրերն ի Նիկիա (325ին) եւ 150 ի Կ.Պոլիս (381) ի Նորն Հռովմայ եւ 200 հայրերն յԵփեսոս (431) հաստատել են եւ որ յաւէտ ճշմարիտ եւ անկեղծ հաւատքն է եղել այդ չորեքին եկե-ղեցեաց: Եկեղեցու սրբազան եւ բարձրագոյն վարդապետաց այդպիսի մի հրապարա-կական եւ հանդիսաւոր խոստովանումն ս. հայրերի ճշմարիտ հաւատքի՝ անշուշտ մեծ ազդեցութիւն կը գործէ ազգերի վրայ, կ'ամրացնէ տատանուտղներին եւ կ'ոչնչացնէ Հռովմայ խարդախ յարձակմունքը:

Ընդունեցէք այս խոնարի խոսքերն, այնպէս՝ որպէս են, խոսքերն Հայաստանի մի հաւատարիմ քարեկամի, որ աղօքի եւ քարեխօսութեան մէջ յանախակի յիշում է զազգն Հայոց:

Հ. ԳԵԼՃԵՐ

Ենա, Մայիս 25, 1890

Հոգեգալստեան ս. տօնին.

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹՈՐԴՈՄ ՊԱՏՐԻԱՐ ՀՕՐ ԱՅՑԼ ԱԹԷՆՔ

Ուրբար 15 Դեկտ. 1995 առաւտեան ժամը 6.15ին Ամեն. Պատրիարք Հայոց ընկերակցութեամբ Տ. Գուսան Վրդ. Ալեամեամի (որպէս գաւազամալիք) ուղեւորուցաւ դէպի «Պէմ Կուրիխն» օդակայախը: Դէպի օդակայան Սրբազն Պատրիարք Հօր Կընկերամար Ս. Արքուոյ Աւագ Թարգման Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան:

Օդակայամի պատոյ հիւրասրահին մէջ կարն ընդումելուրծնէ եսք, Պատրիարք Սրբազնը առաջնորդուցաւ դէպի Օլիմրիգ էրուէյզ, որ ժամը 8.25ին բռիչք առաւ դէպի Արէնք:

Երկու ժամ տեսող խաղաղ ու համգիստ նամբորդութենէ մը յետոյ, Արէնքի օդակայախնին մէջ Պատրիարք Սրբազնը դիմաւորուցաւ նրուսադիմի թոյն Օրբուոնի Պատրիարքութեան ներկայացուցիչ, Մերքրորդիս Իրիմեռու Սգորքիիքի Արքեպիսկոպոսին, Ս. Աստուածածին Եկեղ. Հոգիւոր Հովին, Տ. Յակոր Քինյ. Ռուստամնեանի, Թեմական Խորհուրդի անդամներու, Արարատ Մշակութային Մարգարկան Միութեան վարչութեան և Տիկնանց Յանձնախումրի անդամներու կողմէ:

Օդակայամի պատոյ հիւրասրահին մէջ Պատրիարք Սրբազնը կէս ժամ եւ աւելի հիւրասրուցաւ. ապա առաջնորդուցաւ պամոնկ, ուր ընդունեց Յունահայոց գաղութի ներկայացուցիչները:

Ժամը 1ին Պատրիարք Սրբազնը կէսօրուայ նաշի հիւրը եղաւ Մերքրորդիս Իրիմեռու Սրբազնին և Միջազգային նամբորդական մեծ ընկերութեան մը նախազահ Պրն. Ճէյմզ էգոնօմիտիսի, Արէնքի արուարձաններէն գեղեցիկ ու պտուկ կղզիի մը մէջ:

Նարբար 16 Դեկտ. առոտուն ժամը 8ին նախապէս եղած կարգադրութեան համաձայն Սրբազն Պատրիարքը ունեցաւ երկար բայց հանելի նամբորդութիւն մը դէպի «Էլրիհա» կղզին Արէնքի հիւսիս արեւելեան կողմը, առաջնորդութեամբ ու ընկերակցութեամբ Սրբազն Իրիմեռու ի Պրն. էգոնօմիտիսի, և ընկերակցութեամբ Տ. Գուսան վարդապետին և «Նոր Աշխարհ» քերքի խմբագիր Պրն. Զաւէն Գրիգորեամի: Կղզին հարուստ է իր բնութեամբ, որուն մէջ առաջին հերթին աշխառու է ժառերու

նոյնութիւնը եղէզմանեւ, երկարածիգ եւ միաձեւ, որոնք կը կազմեն երկար բայց ամիամար ծառատամներ:

Պատրիարք Սրբազնը ժամը 10ին այս կղզիին մէջ այցելեց հրաշագործ Ս. Յովհաննես Օսիոս Ռուսական եկեղեցին Բրօգօրի գիւղին մէջ: Այս վկան 16րդ դարուն սրբացած է Օքոտոնի եկեղեցիին կողմէ:

Կիրավի 17 Դեկտ., համդիսաւոր Ս. Պատարագ Արէնքի Փէրիսքէրի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ նախազահութեամբ Ամենապատիւ Պատրիարք Սրբազն Հօր պատարագց եւ Քառողեց: Տ. Գուսան Վրդ. Ալեամեամը:

Նախքան Քառողը Պատրիարք Սրբազնը իր հայրական օրինութիւնները ու սիրոյ ողջյնի խօսերը փոխանցեց Ենրկայ հաւատացեալ ժողովրդեան որոնք եկեղեցի փութացած էին սովորականէն կանուխ, յատկապէս ստանալու Սրբազն Պատրիարք Հօր օրինութիւնները:

Սրբազն Պատրիարքը իր հայրական խօսերուն մէջ Քառակիրեց ու Խրախուսեց Ցումահայ գաղութը որպէս զի ունիտի գան նրուսադիմի Ս. Քաղաքի հաղորդութելու և Ենրշնչութելու Ս. Քաղաքի Քրիստոսակրի վայրերէն և մանաւանդ նորոգելու իրենց Քրիստոնեական հայու հաւատքը:

Նարբար մը առաջ եղած յայտարարութիւններու համաձայն, հայ հասարակութիւնը, պատարագէն յետոյ ժամը 11.30ին Ենրկայ գտնուցաւ Անմահն Կոմիտաս Վարդապետին ծննդան 125 ամեակին նուիրուած տօնակատարութեան: Օրուան բանախօսն էր Կոմիտասագէն Ամեն. Տ. Թորգոմ Արք. Մանուկիսան, Պատրիարք Հայ Նրուսադիմի, որ Արարատ Մ. Մ. Միութեան կողմէ այս նապատակով կը հրաիրուեր Արէնք:

Հանդիսութեան սրահը արդէն նեղ կու գար:

Ենրկայ էին երկու հարիւրէ աւելի հանդիսականներ: Առաջին շարքի վրայ Ենրկայ Հայաստանի Հանրապետութեան լիազօր Ենրկայացուցիչ ու դեսպան Պրն. Արման Կիրակոսեանը իր փոխանորդով: Օրուան հանդիսավար Պրն. Զաւէն Գրիգորեան բացման հօսքով Ենրկայացուց Ամեն. Պատրիարք Սրբազնը:

Ցումարենով քարի գալստեան խօսքեր ըրաւ Պրն. Յակոր Ֆէնենեան (փաստարան): Նրկու ժամ տեսող այս բանախօսութիւնը ընդունուեցաւ մեծ հիացումով, լուր ու հանելի ունկնդրութեամբ:

Պատրիարք Հայրը Կոմիտաս վարդապետի երաժշտական-մասնագիտական ու իրքին հարցերը ներկաներուն բացատրեց ամենապարզ հասկնալի լեզուով մը որը դժուար է գտնել առհասարակ բանախօսներու մօս:

Պատրիարք Հայրը Կոմիտաս վարդապետին գործերը բաժնած էր տասներկու մասերու, որոնի կը ներկայացնեն

- 1- Կրօնական երգեր
- 2- Մամկան երգեր
- 3- Բնութեան երգեր
- 4- Հայրենասիրական երգեր
- 5- Հերոսական երգեր
- 6- Երգիծական երգեր
- 7- Պարեր
- 8- Հարսանեկան երգեր
- 9- Սիրոյ երգեր
- 10- Պանդուխտի երգեր
- 11- Թատերական երգեր
- 12- Աշխատանիկի երգեր

Սրբազն Հօր բանախօսութենին յետոյ յայտագրին մէջ մաս առին կարգ մը արուեստագէտներ: Պրն. Հերման Մէնենտեան ասմումեց «Անլոնի Զանգակատուննեն» հատուած մը:

Իսկ Կոմիտասեան նուազներով դաշնամուրի վրայ ներկայացաւ էտիքա թադէոսեան, թաւ Զուրակի ընկերակցութեամբ ձուրիս Ղազարեանի, որոնի միասին նուազակցութեամբ ներկայացուցին փումշ մը Կոմիտասէն:

Փակման խօսքով, մտաւրական եւ խմբագիր Պրն. Զաւէն Գրիգորեան Պատրիարք Սրբազն Հօր յայտնելյ յետոյ իր եւ Արարատ Մ.Մ.Միութեան երախտագիտութիւնները աւելցուց.

«Սրբազն Պատրիարք Հայր, Ցումահայ մեր գաղութը, երախտապարտ է ձեզի, այս շնորհարեր այցելութեան համար. հաւատացէ որ մեր գաղութը մի բանի ամիսներ պիտի ապրի Կոմիտասի շունչով ու ոգիով եւ այս միմիայն շնորհի ձեր այս հիանալի ու բացառիկ բանախօսութեան շունչին»:

Ժամը 2ին նոյն պանդոկին մէջ, նաշկերոյթին ներկայ եղան կազմակերպութեանց ներկայացուցիչներ, արուեստագէտներ ու մտաւրականութիւն: Հիւրասիրութեան ընթացքին կարգ մը ազգայիններ խօսք առին, յատկապէս Պրն. Միսակ Քաջիկեանը, որ շնորհաւորեց Սրբազն

Հօր ներկայութիւնը ու մադրանելներ ըրաւ երկար տարիներ ծառայելու տառապակոծ հայ ժողովուրիդին, որ մեռնի չուզեր, աշխարի չորս ծագերուն սփոռուած:

Փակման աղօքէն եւ «Հայր Մեր»ի խմբական երգեցողութենին առաջ, Սրբազն Պատրիարքը կրկին անգամ միխիթարեց ներկանեները իր հայրական օրինութիւններով, քաջալերելով զանոնք ամուր պահելու իրենց հայկական սրբութիւններն ու աւանդութիւնները. որովհետեւ ատոնն են որ մեզ պիտի ներշշնչն ու չերմացնեն Ցումաստանի այս օտար բայց հիւրենիկալ ափերուն:

Իրիկուան ժամը 9ին Պատրիարք Սրբազնը Հիւրասիրութեան Պրն. Տիգրան եւ Սոնիկ Քաջիկեաններու բնակարանը, ուր ներկայ էին նաև գաղութէն կարգ մը ազգայիններ:

**Այցելութիւն Արէնքի Քաղաքապետ Պրն.
Տ. Ավրամովուլոսի**

Բշ. 18 Դեկտ. ժամը 10.30ին Պատրիարք Սրբազնը ընկերակցութեամբ գաւազանակիր Գուսան Վրդ. Ալեանեանի, Երուսաղէմի Ցումաստանի Համբավետութեան Ցումաստանի մօս դեսպանատան Ա. Քարտուղար Պրն. Աշոտ Ցովակիմեանի, Տէր եւ Տիկ. Զաւէն Գրիգորեաններու եւ Պրն. Էգոնումիտիսի, պաշտօնական այցելութեամբ ընդունուեցաւ Արէնքի Քաղաքապետ Պրն. Տիմիրի Ավրամովուլոսի կողմէ:

Կէս ժամ տեսող այս հանդիպումը անցաւ չերմ ու մտերմիկ մբնուրոտի մէջ: Տեղեկութիւններ փոխանակուեցան Արէնք մայրաքաղաքի ինչպէս նաև Երուսաղէմի Ա. Քաղաքի հայութեան մասին:

Հանդիպումի աւարտին Քաղաքապետը Արէնքի յուշամետալը եւ դրօշակը նուիրեց Սրբազն Պատրիարք Հօր:

**Այցելութիւն Համայն Ցումաստանի
Քահանայապետ Ամեն. Սերաֆիմ Արք.ին**

Ժամը 11.30ին Սրբազն Պատրիարքը այցելեց Մերոպոլիտ եւ համայն Ցումաստանի Քահանայապետ Սերաֆիմ Արքեպահկոլոպսին:

Սերայրական այցելութիւն մըն էր որ կը կատարուէր. ոգեւորչ ու էգիւմէնիգ մբնուրոտի մէջ հետաքրքական եւ օգտակար համդիպում մըն էր երկու պետերու միջև. ուր խօսւեցան Քրիստոսի եկեղեցին զօրացմող եւ մտահոգող հարցերը: Սրբազն Քահանայապետը հակառակ իր Փիզիքապէս տկար վեակին սիրով ընդունեց

Պատրիարք Սրբազն Հօր: Կես ժամ տեսող հիւրասիրութեմբն յետոյ Սրբազն Պատրիարքը եղագական ողջագործումով հրաժեշտ առաւ Սէրաֆիմ Արքէն:

Այցելութիւն Հայաստանի Համբավետութեան դեսպանատան Արքէնի մէջ

Նոյն օրը ժամը 12ին Սրբազն Պատրիարքը այցելեց Հայաստանի Հանրապետութեան դեսպանատումը Արքէնի մէջ:

Լիազօր դեսպան Պրճ. Արման Կիրակոսեան նոյն օրը գործով կը մեկներ Հայաստան: Դեսպանատան Ա. Քարտուղար Պրճ. Աշոտ Շովակիմեան սիրով ու չերմ մբանորդի մը մէջ ընդունեց Պատրիարք Հօր այս օրինաբեր այցելութիւնը:

Պրճ. Քարտուղարը ընդհանուր տեղեկութիւններ փոխանցեց Սրբազն Պատրիարք Հօր դեսպանատան գործումէութեան մասին:

Պատրիարք Հայրը նախքան իր հրաժեշտ առմելը օրինեց այս ազգային տունը իր ներկայացուցիչներով, եւ յաջողութիւն մարդեց իրենց ազգանուեր առաքելութեան մէջ:

Այցելութիւն Հ. Բ. Ը. Միհութեան Արքաքի Գալիքեան վարժարան

Նոյն օրը ժամը 1ին Պատրիարք Սրբազնը իր ընկերակիցներով այցելեց Քարեգործական Ընդհ. Միութեան Արքաքի Գալիքեան վարժարանը առաջնորդութեամբ վարժարանի տնօրէն Պրճ. Զաւէն Գրիգորեանի: Աշակերտները ծափողոյններով դիմաւորեցին Պատրիարք Հայրը, եւ իրեն ընկերացողները:

Աշակերտներում յանպատրաստից արտասանութիւնները եւ երգերը մեծ ոգեւորութիւն ստեղծեցին բոլորին մօտ:

Պատրիարք Հայրը օրինեց Պահպանիչով այս կրթական օնախնը իր բոլոր սպասաւորներով, աշակերտութիւն, ուսուցչական կազմ եւ բոլոր անոնք որոնք կանգուն կը պահեն այս հայկական կրթարանը:

Նրեկոյեան դէմ Պատրիարք Սրբազնը առաջնորդութեամբ Մեքրորդիս Իրիմէոս Արքէնին այցելեց Քոր Տառ Բէնտէլիս (որ կը նշանակէ սիրամարգ) մայրապետամոցը: Այս մայրապետանոցը բոլորովին նոր հաստատուած վաճէք է: Վաճէքը իր նոր յարակից բնակարանային շններով եւ Թրդ դարէն մնացած գեղեցիկ եկեղեցին կը գործ է կանոնաւոր կերպով:

Կամէին մէջ կապրին 23 մայրապետմեր որոնք յատուկ կարգադրութեամբ կը մոդուուին վաճէին իշխանութեան կողմէ:

Այս մայրապետամոցէն ներս ամենօրեայ պաշտամումներու առըմդեր իւրաքանչիւր մայրապետ կը մտանցի գրադումը ազատ կերպով եւ ըստ կարողութեան, նկարչութեան, ասեղնագործութեան եւ պարտիզամշակութային մարգերուն մէջ:

Պատրիարք Սրբազնը մէկ ժամ եւ աւելի հիւրասիրութեան վաճէին մէջ ու մանրամասն տեղեկացաւ այս հիանալի վաճէին գրեք բոլոր մասերուն:

Մեկնումի պահում, Պատրիարք Սրբազնը գիշերը 7ին զամացակներու աւետարեր դումանչներու եւ մայրապետներու երգեցիկ բափօրին ընդուէլն ուղիւրութեացաւ ուշի իր ինքնաշարժը, մինչ բերեւ անձրեւ ալ կը մաղուէր:

Գշ. 19 Դեկտ. առու ժամը 11ին պանդոկ այցելեց Գերշ. Տ. Սահակ Արք. Այգազեան, իրրեւ 1955 բուականէն Անքիլիասի մէջ իրարու ծանօթացած բարեկամներ: Սահակ Սրբազնը մասմակցած էր մէջ յանում Յումահայ բեմի:

Պատրիարք Սրբազնը մեծ հանյեռով Գերշ. Սրբազնին հետ խօսակցութիւն ունեցաւ Հայ Նրաժշտութեան մասին, եւ գոհումակութեամբ ընդունեց Սրբազնին հեղինակած դաշնամուրի հրատարակուած հատորներէն:

Ժամը 12ին, Պատրիարք Սրբազնը ընկերակցութեամբ Իրէնիս Սրբազնին, այցելեց Արքէնի Բիազա բաղամասը ոչ շատ հեռու Ազրորուիսէն, եւ եղաւ ծրուադէմի Յունաց Պատրիարքարանի Առաջնորդարանի նկեղեցին մէջ էրէնիւրէօն անուն (առասպեշական Յոյն բագասորի անուն) փողոցին վրայ:

Այս եկեղեցին նուիրուած է «Անարյիի» Սուրբերու յիշատակին. մեր օրացոյցին մէջ եւս յիշատակիլի սուրբերէն են. «Անարծար Բժշկացն» Կողմայի եւ Դամիհանոսի. եկեղեցին շինուած է 12րդ դարուն:

Նոյն օրը երեկոյեան ժամը 5ին Սրբազն Պատրիարքը իր պանդոկէն առաջնորդութեացաւ օդակայան ընկերակցութեամբ Իրիմէոս Սրբազնին, Պրճ. Զաւէն Գրիգորեանի եւ տեղւոյն Հոգեւոր Հովի Տ. Յակոբ Գինյ. Ռուստամեանին շինուած է 12րդ դարուն:

Պատրիարք Սրբազնը օդակայանին պատույ հիւրասիրներին մէջ կես ժամ հիւրասիրութել յետոյ, Պատրիարք Սրբազնը «Յեռ Gurion» օդակայանին մէջ դիմաւորութեացաւ Գերշ. Տ. Սեւան Նպա. Ղարիպանի եւ Կրօնից Նախարարութեան Քրիստոնէական բաժնի ընդ. բարտուղար Տիկ. Ցուտիրի կողմէ:

Նրկու ժամ տեսող խաղաղ նամրորդութեն յետոյ, Պատրիարք Սրբազնը «Յեռ Gurion» օդակայանին մէջ դիմաւորութեացաւ Գերշ. Տ. Ս. Սեւան Նպա. Ղարիպանի եւ Կրօնից Նախարարութեան Քրիստոնէական բաժնի ընդ. բարտուղար Տիկ. Ցուտիրի կողմէ:

ԳՈՒՍՏԱԿ ՎՐԴ. ԱԼՃԱՆՆԱՆ

Հայ Երուսաղեմը Օտար

Ունկնդիրներուն

Թէեւ բռլորը կը խօսին թէ ինչ նշանակութիւն ունի Հայ Երուսաղեմը հայերոս համար, ինչպէս նաև Քրիստոնեաներու համար, բայց քերեւ շատ ժիշեր գիտեն թէ ինչ բանի մէջ կը կայանայ անոր իմաստը, եւ մանաւանդ այն հոգին, որ կը պահէ զայն:

Ահա նիշտ այդ մասին էր 2 Դեկտեմբեր 1995ի, երեկոյեան ժամը 7:30ի դասախոսութիւնը, որ տրուցաւ Ամենապատի Տէր Թորգոմ Պատրիարք Մանուկեանի կողմէ նորր Տամի սրահներէն մէկուն մէջ, եւ սահիկներ ցուցադրուեցան Հոգ։ Տէր Բագրատ Արդ. Պուրնէկեանի բացատրութիւններով։

Նիշտ այդ հոգիին մասին էր որ կեդրոնացուց իր դասախոսութիւնը Պատրիարք Սրբազն Հայրը, որ շշուեց մեր ժողովուրդի գոյատեւման ամենակարեւոր ազդակը, սկսելով իր դասախոսութիւնը Քրիստոնեութեան համար առաջին նահատակէն, Թաղէն Առաքեալէն, եւ իր հերթանոս քագաւորակօր Սամատրուկին սէրէն աւելի Քրիստոսի սէրը նախընտրող Սանդուխտ կոյսէն։

Մեր ժողովուրդը եղած է հոգիի ժողովուրդ, եւ ի վերջոյ յաղբանակը հոգիին է...

Պրօֆ. Քիւրնէլ իր «քարի Եկաֆ»ով սկսած բացման խօսին մէջ, տուաւ նաև հարուստ կենսագրականը Պատրիարք Սրբազն Հօր, յիշելով անոր հայ գրականութեան, հայոց պատմութեան եւ եայկական երաժշտութեան հանդէպ մասնաւոր հետաքրքրութիւնը։

Հրաւիրելէ առաջ դասախոս Պատրիարքը, խօսք առաւ նորրը Տամի վերահսկիչ Մոնսէնիօր Մաքէսը, որ անշափ գոհ էր այդ դասախոսութեան իրականանալուն եւ յայտնեց իր խորին շնորհակալութիւնները։

Ոգեւորուած կը խօսէր Թորգոմ Պատրիարքը որ իր ազգի պատմութիւնն էր որ կու տար ամենապարզ

եւ խորունկ ձեւով օտարներուն եւ ինչու չէ հայերուն, որոնց քերեւ այդ ձեւով լուսարանուած չէին մեր պատմութեան կարեւոր շրջանները։

Սանդուխտ կոյսէն գալով Հընկահմեանց կոյսերուն, անոնցմով խնճեցած հայ քագաւորին, յայտնեց թէ անոր տանջող ինդնը ամրող ազգութեան մը ընդունիլ պիտի տար Քրիստոնեութիւնը։

Նոյնիսկ մեր պատմութեան ծանօթ մարդիկ մեծ հանոյենով կ'ունկնդրէին, որովհետեւ նիւթը կը մատուցուէր, չնայած կարծ ժամանակի մէջ բայց խորունկ եւ կարեւոր անցուդարձերու նիշտ մեկնարանութեամբ։

Դառնալով «Հոգիի» հարցին, «Տը Արմինիըն Սրիրիդ» ինչպէս կ'ըսէր Պատրիարք հայրը, այդ դիւրին չէ հասկցնելը օտարին, որովհետեւ այդ՝ հասկնալէ աւելի զգալ կ'ուզէ, եւ պէտք է ըսել, որ օրուան դասախոսը յաջողեցաւ։

Դայով յայտագրին երկրորդ քաջնին, նոյնեան հետաքրքրական էր եւ մանաւանդ լաւ պատրաստուած։

Երիտասարդ հոգեւորական՝ Բագրատ Արեղան որ այժմ կ'ուսանի Երուսաղեմի Երրայական համալսարանին մէջ, մանրամասն ու նշգրիտ բացատրութիւններով եւ տեղեկութիւններով մեկնարանց ցուցադրուող սահիկները, որոնք կ'ընդգրկէին հայերու պատմութիւնը Երուսալեմի մէջ 4րդ դարէն։

Հայր Բագրատ սահուն անգլենով, բծախնդրօրէն իր պատրաստուած քաժինը ներկայացուց հիանալիօրէն։ Սահիկներու ցուցադրութեան պատասխանաւուն էր Տիար Սարօնագաշեանը, որ սահիկներուն նկարիչն ալ էր։

Այս կարեւոր եւ յաջող դասախոսութիւնը վստահարար հասաւ իր նըպատակին, որովհետեւ հոնկէ մեկնողները անպայման բան մը տարին իրենց հետ։

Դասախոսութեանէն եսք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն։

Ներկայ մը

ՑՈՒՑԱԿԱՆԴԵՍ

Դեկտեմբեր 24, 1995.

Քրիստոնեայ աշխարհի մեծ մասը կը պատրաստուէր Քրիստոսի Ծնունդը դիմաւորելու, մինչ ժառանգաւորաց վարժարանի մեր սաները ամփաներ պատրաստուել յետոյ գեղեցիկ ամակընկալ մը ունէին այդ օրը մատուցելու քէ սահմանայութեան եւ քէ օտար հիւրերու:

Այդ անակնեկալը անշուշտ, մեր սաներուն մէկ ու կէս տարուայ աշխատանքին արդիւթքն էր որ պիտի ցուցադրուէր ի տես մեր գաղութին եւ օտարներուն:

Ցուցահանդէսի բացումը տեղի ունեցաւ Կիրակի առաւօտ, ժամը 11:00, ձեռամբ Ամենապատիւ Պատրիարք Սրբազն Հօր, ի ներկայութեան Սրբոց Յակորեանց միարանութեան եւ մեր ժաղովուրդին:

Ամենէն հետաքրքիրը սակայն, մեր սաներու զգեստն էր որ կը ճոխացընէր օրուան ցուցահանդէսը: Անոնք զգեստաւորուած էին քատերական հագուստներով որոնց գոյներու հարըստուրինը պատկառանք կ'ազդէր այցելողին:

Բացառիկ ցուցահանդէս... այդպէս գնահատեցին կարգ մը այցելուներ, եւ այդ չափազանցուրին չէր:

Զեռային աշխատանքի գեղեցիկ կտորներ, խաչասեղներու զանազան տեսակներ, նոր տարուան համար պատրաստուած՝ հրեշտակներու, զանգակներու եւ կաղանդ պապուկներու նկարներով ձեռագործներ:

Մասնաւորապէս աչքի կը զարգէր մաքուր աշխատանքը. եւ մասնանդ տիկիններ հիացումով կը դարձնէն ձեռագործին հակառակ կողմը իրարու ցոյց տալով տարուած բացառիկ հոգաւարութիւնը:

Զեռագործային աշխատանքի հանդէպ մասնաւոր այդ նախանձախնդրութիւնը կը պարտինք նախ հոգեշնորհ Տ. Ընծանուէր արեղային որուն արուեստագէտի ձիրքէն օգտուելով զինքը նշանակեցինք պատասխանատու այդ աշխատանքին իրեն օգնականներ ունենալով տրց. Արխատակէսը:

Պէտք է ըսել որ ցուցահանդէսի բացման առաջին ժամէն իսկ ձեռագործներու վարսուն տոկոսը վաճառուած էր արդէմ:

Նակայն առանձնակի յիշողութեան արժանի է բաւշտայ կտորի վրայ պատրաստուած սկիելի ծածկոցը, չորս անկիւնները հրեշտակներով, պատրաստը աւած տրց. Արանասի կողմէ, մեր ժառանգաւորներէն վաղամեն Արշակի անմեն յիշատակին:

Զեռագործներու կողին ցուցադրուած էին նաև Հայր Ընծանուէրի իւղանկարները, որոնք պատրաստած էր իր ուսանողութեան շրջանին:

ԱՄԱՆՈՐԸ ԺԱՌԱՆԳԱԿԱԽՈՐԱԾ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՋ

1996 Յունուար 13, Շարաբգիշեր ժամը 7:30ին, ընտանեկան ջերմ մքնուրտի տակ տօնուեցաւ Սրբոց Յակորեանց Միարանութեան Ամանորը:

Նորգուելու խանդով խանդավառ՝ ժառագործային կարգութեան մէջ կարժարանի սաները պատրաստած էին կոկիկ յայտագիր մը:

Մրակը զարդարուած էր շողուն զարդարանքներով եւ անդին կաղանդի ծառը, որուն ներքեւ մսուրին մէջ կը նեշէր մանուկ Յիսուսը, ուրախութեան տարբեր զգացումներ կ'առը ներկաներուն մէջ:

Ներկայ էին Սրբոց Յակորեանց միարանութեան գրերէ բոլոր անդամները: Ուսուցիչներ, Պատրիարքարքարնի պաշտօնէութիւն եւ ուսանողութիւն ի մի համախմբուած անհամբեր կը սպասէին Ամենապատիւ Պատրիարք Սրբազն Հօր եւ Միարանութեան գալուստին: Պատրիարք Հօր ժամանումէն եւ սաներու «Սիրտ ի սիրտ» բայլերգին երգեցողութենէն ետք սկսաւ ամանորի յայտագիրը:

Տեսուչ հայր սուրբի բացման խօսքէն ետք, սաները ներկայացուցին «Մէներու ժաղով» կատակերգութիւնը: Թատերական ներկայացումէն ետք, դերասաններ վար իշան բեմէն ու իրենք վարեցին յայտագիրը որ ուրիշ բան չէր երէ ոչ իրենց զուարեալի ներկայացման շարունակութիւնը:

Յայտագիրը իրօք փորձ մըն էր դուրս ելլելու միօրինակ առօրեայն ու տրուելու ուրախութեան անհոգ քեւերում: Երաժշտութիւն, բախտախաղ ու զուարքարանութիւն, ասոնք էին որ կը կազմէին յայտագրին կորիզը, որոնք անտարակոյս ներկաները լեցուցին ամանորի խանդավառ յոյսերով:

Յայտագրի աւարտին, Պատրիարք Սրբազն Հայրը իր փակման խօսքը ըրաւ, ուրտեղ շշաւեց կեանքի մէջ վերանորոգման կարեւոր գաղափարը: «Հայր Մեր»ի երգեցողութեամբ աւարտեցաւ երեկոյքը:

Սաղիմահայ հին սովորութեան համաձայն, կէս գիշերին, ամբողջ բաղմի զանգակներուն հետ, Սուրբ Յակոբայ մեծ եւ փոքր զանգակները եւս սկսան դողանչել, մինչ սաներ եւ ժողովուրդ վանքին մեծ բակը հաւաքուած կ'երգէին «Փառք ի բարձունս» օրիներգութիւնը:

Միարանութեան հոգեւորական անդամները, ժառ. Վարժարանի Ամանորի երեկոյքէն յետոյ Պարտիզաքաղ հաւաքուեցան եւ Ամեն. Պատրիարք Սրբազն Հօր հետ միասին ընքրիք ունեցան:

Բագրատ Արդ.

ՆԱԽԱԳԱՀ ԼԵՒՈՆ ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ ՀԵՂԱԿԱՅԱՅ ԳԱՂՈՒԹԻՒՆ ՀԵՏ

Հայաստանի Հանրապետութեան վսեմաշուք նախագահ, Տիգրան Տէր Պետրոսեան, պատրիարքի շքախումբով եռօրեայ պաշտօնական այցելութիւնը մը տուաւ Հնդկաստան:

Նախագահը իր շքախումբով նիւ Տեղի ժամանեց Զորեքշարթի 13 Դեկտեմբերին, ու յաջորդ օրը սկսաւ իր պաշտօնական այցելութիւններուն, ու հանդիպում ունեցաւ Հնդկաստանի նախագահին, վարչապետին և այլ պաշտօնական անձանց հետ, սուրագրելով կարեւոր համաձայնութիւններ երկու պետութիւններուն միջեւ:

Նախագահ Տէր Պետրոսեան չմոռցաւ Հնդկահայ գաղութը ու կալկաթա ժամանեց Շարաթ 16 Դեկտին, ուր դիմաւորուեցաւ պետական, զինուորական ու դիւանագիտական անձնաւորութեանց կողմէ: Օդակայան ներկայ էին Հնդկաստանի և Մայրագոյն Արեւելքի Հայոց Հայրապետական Պատուիրակ, Գերշ. Տ. Աղան Ս. Արք. Պալիօգեան, Արք. Տ. Սահակ Քահանայ Սահակեան, եկեղեցւոյ վարչականներ Տիգրաք Ճօրտըն և Մանուկ: Սրբազն Հայրը Սիտնիէն յատկապէս կալկաթա ժամանածէր, նախագահը անձամբ դիմաւորելու համար:

Նախագահը օդանաւէն վար գալով ողջունեց բոլոր պաշտօնական անձանց, և ի զարմանս ներկաներուն ողջագուրեց Աղան Սրբազն Հօր:

Փոքր դադարէ ետք նախագահը այցելեց Հայոց Մարդասիրական Ճեմարանը, ուր ուսանողութիւն և զաղութի ներկայացուցիչներ որութնդոստ ծափերով դիմաւորեցին նախագահը Քայլերգներու երգեցողութենէն ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն.

ապա գործադրուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը: Սրբազն Հօր ու նախագահի խօսքերէն ետք, տեղի ունեցաւ նուէրներու փոխանակութիւն:

Նախագահը ներկաներուն մօտենալով առանձինն առանձինն բարեւեց ու ապա խմբային նկար առնուեցաւ:

Տեղին է նշել որ Պանկլատեշէն, Պանկքոքէն ու Հոնկքոնկէն Հայեր եկած էին ներկայ ըլլալու յիշեալ պատմական այցելութեան:

Դպրոցէն ետք շքախումբը առաջնորդուեցաւ Հայոց նազարեթայ Եկեղեցին, ուր երախտաւորներու համար Հոգեհանգստեան արարողութիւն տեղի ունեցաւ: Նախագահը չկարողացաւ իր յուղումը զսպել երբ Հայոց ազատագրական շարժումի դեկավար Յովսէփ էմինի տապանաքարը տեսաւ:

Նոյն երեկոյեան West Bengal-ի կառավարիչը ընդունելութիւն մը տուաւ ի պատիւ Հայաստանի Հանրապետութեան նախագահին ներկայ էին West Bengal-ի գլխաւոր նախարարը և այլ բարձրաստիճան անձնաւորութիւններ, ինչպէս նաեւ Աղան Սրբազն Հայրը և եկեղեցւոյ ատենապետ Տիգր Հովհաննի:

Յաջորդ օրը ժամը 10-ին նախագահը հրաժեշտ առնելով պետական, զինուորական ու դիւանագիտական անձնաւորութիւններէ ինչպէս նաեւ Աղան Սրբազն Հօրմէն ու Տիգր Սուքիասէն, Հայաստան վերադարձաւ:

ԴիւԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԵԱՆ
18 Դեկտ. 1995

ԾՆՈՐՀԱՄՈՐՎԿԱՆՔ

Ս. ՄԱՅԻՆԵԱՆ ՇԱԽՐԻԱՆՐԱԼԿԱՆՔ

Նոր Տարուան և Սուլք ՄԱՅԻՆԵԱՆ տօներուն առիբով Պատրիարք Միրազան Հայրը շնորհաւորութեան և քարի մաղքանի գիրեր և հեռագիր յից Հոգեւոր և Կառավարական պետերուն, որոնց շնորհաւորագիրերը ընդունած է—

- Ամենային Հայոց Վեհափառ Հայրապետ, Նորիմ Ս. Օծուրիւն Տ. Տ. Գարեգին Ս. Կարողիկոսին;
- Մեծի Տաճա Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ, Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. Կարողիկոսին;
- Թուրքիոյ Հայոց Ամեն. Տ. Գարեգին Պատրիարք Գաղաթնամին;
- Հռովմէական Կարողիկ Եկեղեցւոյ Քահանայապետին՝ Նորիմ Սրբուրիւն Ցովհաննես Պողոս Բ.

Պատվին:

- Մուկուայի և Ռուսիոյ Օքրոսուն Եկեղեցւոյ Ամեն. Տ. Տ. Ալեքսէ Բ. Միրազան Պատրիարքին;
- Գալուստ Կիւլպէնկան Հիմնարկութեան Նախազահ Տիար Ռուպերք Կիւլպէնկանին;
- Թեմակալ Առաջնորդներուն, Պետական և Ազգային Հաստատութեանց դեկանականութեան:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

His Excellency

Mr. Shimon Peres

Prime Minister of the State of Israel
Jerusalem

In the name of the Brotherhood of St. James, and the Armenian Community in Israel, we extend our heartfelt condolences to you, the government of Israel and the bereaved families. We vehemently condemn this inhuman act of terrorism and sincerely hope that this atrocious and brutal act shall in no way derail your wholehearted endeavours of the Peace Process.

Archbishop Torkom Manoogian
Armenian Patriarch of Jerusalem

CAPTAIN HANI MULHEM
OFFICER IN-CHARGE BETHLEHEM AND HEBRON
BETHLEHEM


ON THE HAPPY OCCASION OF THE FEAST OF EID-EL-FITR
WE EXTEND TO YOU AND TO YOUR COLLEAGUES OUR HEARTIEST
CONGRATULATIONS WISHING YOU GOOD HEALTH AND PROSPERITY.

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN
ARMENIAN PATRIARCH OF JERUSALEM

MAJOR GENERAL KAMAL EL-SHEIKH
CHIEF POLICE COMMANDER BETHLEHEM DISTRICT
BETHLEHEM

ON THE HAPPY OCCASION OF THE FEAST OF EID-EL-FITR
WE EXTEND TO YOU AND TO YOUR COLLEAGUES OUR HEARTIEST
CONGRATULATIONS WISHING YOU GOOD HEALTH AND PROSPERITY.

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN
ARMENIAN PATRIARCH OF JERUSALEM



Պատրիարքական Տեղանք

ARMENIAN PATRIARCHATE

ET/R-001

Բառականություն

Date 17th February 1996

CONGRATULATING TELEGRAM TO HIS MAJESTY KING HUSSEIN
 OF THE HASHEMITE KINGDOM OF JORDAN ON THE HAPPY OCCASION
 OF THE FEAST OF EID-EL-FITR

HIS MAJESTY
 KING HUSSEIN OF THE HASHEMITE KINGDOM OF JORDAN
 ROYAL PALACE - AMMAN

ON BEHALF OF THE BROTHERHOOD OF SAINT JAMES AND IN THE
 NAME OF THE ARMENIAN COMMUNITIES IN JORDAN AND JERUSALEM
 WE EXTEND TO YOUR MAJESTY OUR SINCEREST AND HEARTIEST
 FELICITATIONS ON THE HAPPY OCCASION OF THE FEAST OF
 EID-EL-FITR AND PRAY TO THE ALMIGHTY TO GRANT YOUR MAJESTY
 LONGEVITY COUPLED WITH PERFECT HEALTH SO YOUR MAJESTY MAY
 CONTINUE TO SERVE AS A BEACON OF WISDOM FOR MANY LONG
 YEARS TO COME.



BISHOP TORKOM MANOOGIAN
 PATRIARCH OF JERUSALEM



Գևառիկուրեն Տէղոնց

ARMENIAN PATRIARCHATE

Պատճենաթիւ
Date

FM/L-008

18th February 1996

CONGRATULATING TELEGRAM TO HIS EXCELLENCY MR. YASSER ARAFAT
PRESIDENT OF THE PALESTINE LIBERATION AUTHORITY GAZA.

HIS EXCELLENCY
MR. YASSER ARAFAT
PRESIDENT OF THE PALESTINE
LIBERATION AUTHORITY
GAZA

ON BEHALF OF THE BROTHERHOOD OF THE ARMENIAN PATRIARCHATE
OF SAINT JAMES AND IN THE NAME OF THE ARMENIAN COMMUNITY
WE EXTEND TO YOUR EXCELLENCY OUR HEARTIEST CONGRATULATIONS
ON THE HAPPY OCCASION OF EID-EL-FITR AND PRAY TO THE ALMIGHTY
TO GRANT YOU CONTINUED GOOD HEALTH TO SERVE THE PALESTINIAN
PEOPLE IN PROSPERITY.



BISHOP TORKOM MANOOGIAN
ARMENIAN PATRIARCH OF JERUSALEM



ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱՐՈՎՄԱԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

PATRIARCHE SUPREME
CATHOLICOS DE TOUS LES ARMÉNIENS

1067

8 դեկտեմբեր 1995

ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ
Տ. ԹՈՐԴՈՌ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Սիրելի Սրբազն Եղբայր,

Ահաւասիկ կը մօտենան Ս. ՄԵՆԴԵՎ և Աստուածայայտնութեան տօնական շնորհաբեր օրերը: Մեր ողջ հայ ժողովուրդը, քրիստոնեայ այլ ազգերուն հետ միասին, հեղ մը ևս պիտի ողջունէ Որդույն Աստուծոյ մարդեղուրիւնը վասն խաղաղութեան ի վերայ երկրի և վասն հանութեան ընդ մէջ մարդկան:

Արևելքի իմաստուն մոգերը «տեսան Անոր աստղը արևելքի մէջ և եկան երկրպագելու Անոր» (ՄԱՏԹ. Բ. 2): Դարերու ընթացքին մարդիկ ու ազգեր աշխարհի չորս ծագիրէն տեսան Անոր լոյսը և հետևեցան Անոր:

Մեր հայ ազգն ու պետութիւնը եղան առաջինը որ իրենց երկիրը վերածեցին Յիսուսի հայկեան Բերդէիեմի Ս. Էջմիածնի խորհուրդով: 301 թուականէն ասդին Անոր աստղը՝ վերածուած Լուսաւորչի կանքեղի՝ անխափան նախանչումով նառագայրեց մեր ժողովուրդի կեանքին մէջ ի Հայաստան և ի սփիւս աշխարհի:

Այսօր այդ լոյսը նոր պայծառութիւն է զգեցած մեր հայրենիքին ազատ ու անկայս պետականութեան կառոյց զգեցած ըլլալու շենի իրողութեամբը և ազատութեան պայմաններու լիազոյն վերստեղծումովը մեր հայրենական սուրբ հողին վրայ:

Որպէս նորընտիր Կարողիկոս Ամենայն Հայոց երբ Ս. ՄԵՆԴԵՎ տօնին առիթով Մեր առաջին խօսքը կ'ուղղենք Զերդ Ամենապատուութեան՝ պարտ կը զգանք նախ փառք տալու մարմնացեալ Փրկչին որ ազատ գործունեութեան նոր հեարաւորութիւններ ընծայեց Հայաստանեայց եկեղեցւոյ, Մայր Արոռոյս և նոր պարտաւորութեանց հրաւիրեց զայն: Բոլորս կոչուած ենք վերանորոգեալ սրտով, միասնութեան ներդաշնակ ջանքերով առաւել ևս արծարծելու Ս. Լուսաւորչին Քրիստոսալոյս կանքեղը մեր ժողովուրդի հոգևոր լուսաւորութեան և երշանկութեան համար:

Այս տեսիլքով, կամքով և նախանձախնդրութեամբ կ'ողջունենք Զերդ Ամենապատուութիւնը և երուսաղէմի Պատրիարքութեան Սրբոց Յակորեանց ուխտեալ Միարանութիւնը և ողջ հաւատացեալ ժողովուրդը, հրաւիրելով բոլորը որ "Աշխարհի լոյս"ին վերածագման այս օրերուն առատացնէք Զեր Պատրիարքութեան կեանքին և գործին մէջ Քրիստոսի լուսատու և երշանկարեր Աւետարանը, Լուսաւորչեան հաւատենք օծուն և Ս. Էջմիածնի խորհուրդով ներգործուն: Թող 1996 տարին Զեր Պատրիարքութեան համար դառնայ առաւել պայծառալոյս տարի՝ ի հոգեւոր շինութիւն, յազգային ամրապնդումն Զեր հաւատացնալ ժողովուրդին և ի փառս մարդացեալ Փրկչին:

Մեամբ սիրոյ ողջունիւ և օրինութեամբ,

Աղօքարար՝

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Թիւ 483/95

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԵՍՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԱՆԹԻՒՐԱՍ - ՀԻԲԱՆԱՆ

Անրիլիաս, Ա. Մեռունդ, 1995

Ամենապատիւ

S. Թորգոն Արքեպակ. Մանուկեան
Պատրիարք Հայոց Երուսաղէմի
Երուսաղէմ.

Սիրեցեալ եղբայր ի Քրիստոս,

Ահա դա՛րձեալ վերանորոգ խանդավառութեամբ կ'ողջունենք տօնը Աստուծոյ մարդեղութեան, որ իհմնովին յեղաշրջեց մարդկային կեանքը ու նոր իմաստ ու ընթացք տուաւ մարդկային պատմութեան:

Արդարեւ, մեր եկեղեցւոյ հայրերը Բանին մարմնացումը կոչած են՝ **Աստուծայայտնութիւն**: Աստուածաբանական ի՞նչ խորունկ բնորոշում: Աստուծոյ ծնունդը էապէս Աստուծոյ ինքնայտնութիւնն է մարդուն՝ մարդուն փրկութեան համար: Աստուծոյ ծնունդը նաև աստուածային հրաւէր մըն է ուղղուած մարդուն՝ Աստուծոյ հետ ու Աստուծոյ համար ըլլալու:

Այսօրուան աշխարհայնացած աշխարհը իր նոր «արժէն» ներով ու «արժեխափ» երով հեռու կը պահէ մարդը Աստուծմէ ու աստուածայինէն: Վերադարձ Աստուծոյ, ահա եկեղեցւոյ առաքելութիւնը այսօր: Ահա պատգամը Աստուածայայտնութեան:

Մեր ժողովուրդի զաւակները որքա՞ն պէտք ունին Աստուծոյ հետ ըլլալու ու քալելու այն նանապարհէն զոր մարդացեալ Աստուած ցոյց տուաւ իր կեանքով, այն նանապարհէն, ուրկէ հաւատարմօրէն քալեցին մեր պապերը: Արդ, տօնել Աստուածայայնտուրթիւնը կը նշանակէ ըլլալ աստուծոյ հետ՝ զԱստուած դարձնելով առանցքը մեր անհատական ու ազգային կեանքին ու գործին:

Ահա այս հաւատէով ու յոյսով կը դիմաւորենք Աստուածայայտնութիւնը: Այս ուրախ առիթով եղբայրական շերմ սիրով կ'ողջունենք Զեզ եւ կ'աղօթենք որ Աստուած Զեզի, Զեր միաբանութեան ու ժողովուրդին շնորհէ նորանոր իրագործումներով հարուստ տարի մը:

Եղբայրական շերմ սիրով,

Ա. Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԵՍՆ ԿԻԼԻԿԻՈՅ



SECRETARIAT OF STATE

No. 384.463/G.N.

FROM THE VATICAN, 18 January 1996

Your Beatitude,

